



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.....	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ՊԻՏԻ ՍՏԵՂԾԵՆՔ ՀԶՕՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ՝ ԵՐԱՇԽԻՔԸ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԹԻՆ.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
ԺԱՌԱՆԳԵՆՔ ԱՅՆ ԼԵԶՈՒՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ, ՈՐՏԵՂ ԱՐՏԱՅՈՂՈՒԱԾ Է ՄԵՐ ՆԱԽԽԻՆԵՐԻ ՀՈԳՈՒ ՊԱՏԿԵՐԸ.....	5
ԿԻՊՐԱՀԱՅ.....	8
ԹՐՔԱԿԱՆ ԿԻՊՐՈՍ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ 50-ԱՄԵԱԿԸ.....	8
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	10
ԱՀԱԲԵԿՉԱՊԵՏԸ... ԿԸ ՊԱՏՈՒԸՈՒԻ,.....	10
ԻՐԱԻՍՏԵՐԸ՝ ԿԸ ՀՐԿԻԶՈՒԻ,.....	10
ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ՝ Կ՝ՈՏՆԱԿՈՒԽՈՒԻ.....	10
ԸՆՏՐԵ՛Լ. «ՏՈՒՓԻՆ ՄԷ՞Ձ» ԹԷ՞ «ՏՈՒՓԷՆ ԴՈՒՐՍ».....	14
ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆԻ «ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐԷՆ» ՀԱՏՈՐԸ.....	18
ԸՆԴԵՐՔԸ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԸ.....	21
ՎԱՐԴՈՒՀԻ ՔԱԼԱՆԹԱՐ «ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՆՏԻ ԿԻՆԵՐՈՒՆ ԲԱԺԻՆԸ» ԼԵՈՆԱ ԷՔՄԷՔՃԻՕՂԼՈՒԻ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ.....	24
ՏԵՍԱԿԷՏ.....	31
ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ Է.....	31
ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼՔԵԼԸ ԱՐԴԱՐԱՅՈՒՄ ՉՈՒՆԻ.....	32
ԴԱՌՆԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ.....	35
ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒՄ.....	37
ՍՓԻՒՈՔ... ՆԵՐՈՒԺ.....	39
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	42
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	42
"ԱՄԷՆ ԻՆՉ ՎԵՐՋԱՑԱԾ Է".....	47
«ՓԱՐՏՈՆ ՃԻԿԵՐԻՄ» ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ՀՈԳԵԱԿՍ.....	48
ՅԻՇԱՐԺԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԸ՝.....	49
«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ».....	49
(ԵՐԵՒԱՆ, 2024).....	49
ԵՐԱՆ ԿԵՐԹՄԵՆԵԱՆ-ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ.....	49
ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ԵՒ ԵՐԱՆԱԻԷՏ՝ ՅՈՒՇԱԳՐՈՂԸ, ԽՈՐՀՐԴԱԾՈՂԸ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.....	49
ՆԱՄՍԿԱՆԻ.....	53

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 55

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 58

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԻՏԻ ՍՏԵՂԾԵՆՔ ՀԶՕՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ՝ ԵՐԱՇԽԻՔԸ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԹԻՆ



Մեպտեմբեր ամիսը յատկապէս կը նշանաւորուի Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման տարեդարձով: Արդարեւ, ինչպէս յայտնի է, Խորհրդային կարգերու փլուզումով Հայաստանը վերանկախացաւ, ինչ որ նոր առիթ պիտի ընձեռէր որ մեր Հանրապետութիւնը ծաղկէր, բարգաւաճէր եւ նուաճէր նոր բարձունքներ՝ ազգային, կրթական, մշակութային, տնտեսական, ռազմաքաղաքական եւ այլ ոլորտներէն ներս: Դժբախտաբար, սակայն, հայաստանեան քաղաքական դասը՝

պետականաշինութեան փոխարէն, զբաղեցաւ երկիրը թալանելով ու կեղեքելով, մինչ ժողովուրդը սկսաւ զանգուածաբար արտագաղթել, իր բախտը փնտռելով օտար երկրիներու տակ:

Այս տխուր իրավիճակին գլխաւոր պատճառը այն անհերքելի փաստն է որ մենք չունեցանք ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ: Ամէն մէկ իշխանաւոր հետամուտ եղաւ իր սեփական շահին, երկիրը կողոպտելու իր բաժինին իրագործման: Սունկի պէս աճող կուսակցութիւնները կառչեցան գերազանցօրէն իրենց կերակրատաշտին, պատեհապաշտ եւ օգտապաշտ վարքագիծով... Զանց առնելով չնչին բացառութիւնները, հրապարակ չիջան երբեք անձինք, որոնց համար ամէնէն էականը ընդհանրական շահն ըլլար, պետական մտածողութիւնը: Անձինք՝ որոնք ըլլային վերկուսակցական, վերխմբակային, վերքլանային: Անձինք, աւելի ճիշդ իշխանաւորներ՝ որոնք ունենային ազգային պետականութիւն ստեղծելու տեսիլքը, հիմնուած մեր հայկական արժեհամակարգի վրայ, համահայկական գաղափարի կամ գաղափարախօսութեան վրայ: Իշխանաւորներ՝ որոնք ազգի, հայրենիքի վերածնունդը տեսնէին մեր ինքնօրէն ապրելու արժանապատուութեան, վճռակամութեան մէջ: Ամէն ոք ունեցաւ իր մանր, ճղճիմ հաշիւը, նկատառումը, փառատենչութիւնը, չկարենալով զանոնք գոհել յանուն համընդհանուրի շահին, տեսիլքին, տեսլականին, յանուն ազգային պետականութեան կառուցումին: Եւ այսպէս, մենք չունեցանք կողմնացոյց, մենք չունեցանք ծրագիր: Մենք չունեցանք ազգային պետական



գաղափարախօսութիւն: Պատճառը այս բոլորին մեր ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ բացակայութիւնն է գերազանցօրէն:

Ժողովրդավարութեան եւ ազատութեան անունով, որդեգրուեցաւ համաշխարհայնացած վայրի դրամատիրութեան դրուածքը, ուր ամէն ինչ վաճառելի ապրանք է. մարդը, պատմութիւնը, մշակոյթը, հայրենիքները, նոյնիսկ բնութիւնն ու անոր պաշարները:

Ազատութեան անունով, ի՛նչ չարժէքներ, խորթ բարքեր ներս խուժեցին մեր հանրապետութենէն, փորձելով այլանդակել հայ մարդուն, հայոց երկրի նկարագիրը, ինքնութիւնը: Թմրամոլութենէն մինչեւ իբր «խղճի ազատութիւն» ներկայացուած աղանդաւորութիւնը, սեռային տարբեր սանձարձակութիւններէն մինչեւ ընտանեկան աւանդական վարք ու բարքի եղծանումը, անյագուրդ նիւթապաշտութեամբ եւ հաճոյամոլութեամբ յղիացող եւ դեռ աւելիին հետամուտ ազահութիւնը, կողոպուտը, հոգեզրկութիւնը: Չո՞րն ըսել, զո՞րք խոստովանիլ: Նման ազատութիւնը՝ իր սանձարձակութեամբ, կը յանգի որոշապէս իր հակաբեւեռին կամ չազատութեան:

Ո՞ւր է մեր ոգիի եւ ազգային գիտակցութեան ճառագայթումը, մեր հայրենանուիրումի ու հայրենասիրութեան յանձնառութիւնը, որ դար ու դարեր ուղեցոյց փարոս է եղեր մեր պատմական ճանապարհին, հակառակ բոլոր դժուարութիւններուն եւ ճակատագրի ամէնէն անհարկու հարուածներուն, ընդ հուր եւ ընդ սուր:

Ազգային մեր խորհրդանիշը յաճախ արծիւով է պատկերուած: Արծիւը ազատօրէն կը ճախրէ, կը սաւառնի երկնքի անհունութեան մէջ, անկաշկանդ, անարգել, անպարագիծ: Ազատութիւնը հայուն համար գերագոյն արժէք է իրաւամբ ալ: Մեր պատմութեան մէջ, մենք շատ բան զոհաբերած ենք յանուն ազատութեան, այդպէս ալ մինչեւ վերջ չհասկնալով սակայն, թէ ի՞նչ է ճշմարիտ ազատութիւնը, զայն յաճախ շփոթելով անիշխանականութեան, անտիրութեան, սանձարձակութեան եւ նոյնիսկ անպատասխանատուութեան հետ: Պիտի նորովի վերասահմանենք «ազատութիւն» յղացքի ճշմարիտ իմաստը:

Ազատութիւն կը նշանակէ գերազանցօրէն լիովին ՏԷՏԸ ըլլալ սեփական ճակատագրին եւ ՊՍՏԱՄԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ ստանձնել անոր համար ...Ազատութիւնը ազատ ու անկաշկանդ ճշմարիտին ու արդարին ձգտելու, արժէքներ ստեղծելու ազատութիւն է, բարիք գործելու, առաքինի վարք ու բարքի ազատութիւն է:

Մեր երագած հայրենիքն ու պետականութիւնը մենք պիտի կառուցենք՝ մեր մաքառումով ու ոգորումով, քրտնաթոր աշխատանքով, արդարութեամբ, անոր հիմքերու հիմքը դնելով ազգային գաղափարախօսութիւնն ու ազգային արժեհամակարգը: Այս հիմքին վրայ միայն կրնայ ԼԻԱՐԺԵԹ կառուցուիլ ու կազմակերպուիլ մեր կրթական, գիտական, տնտեսական, արդիւնաբերութեան եւ քաղաքական-քաղաքացիական կեանքը: Մեր բանակն ու սպառազինութիւնը: Միշտ ձգտելով լաւագոյնին, հզօրագոյնին, արդիւնաւէտին:

Մենք երբեք պիտի չմոռնանք որ Ազգի լինելութեան համար, բաւարար չեն տնտեսական-ռազմական եւ այլ բնոյթի հզօրութիւններն ու կարելիութիւնները: Նոյնիսկ օրէնքի գերակայութիւնն ու ժողովրդավարական կարգն ու սարքը: Ազգը նախ եւ առաջ ՈԳԻ է,



դարերէն եկած եւ դէպի դարերը զացող ոգի, լինելութեան կերպ, ինքնատիպ աշխարհագրագոյնութիւն, մշակոյթ ու արուեստ, մայրենի լեզու եւ գիր, հոգեւոր-բարոյական որակ: Տնտեսական-ռազմական, ֆինանսական ուժը կրնայ պահել ազգի ու երկրի մարմինը միայն, որ առանց ոգիի կը վերածուի անշունչ ու անկենդան գոյութեան: Ազգը էապէս կ'ապրի, կը մաքառի, կը պայքարի, կ'արարէ ոգիով, ոգիի նոր որակ ձեռքբերելու համար...

Լսենք Պերճ Զէյթունցեանի խորհմաստ եւ դիպուկ խօսքերը. «Հայրենիքը սահմանով գծուած, կիլոմետրերով չափուող տարածք լինելուց զատ (գուցէ եւ առաջին հերթին) ազգի անցեալն է, մշակութային ժառանգութիւնը, բարոյական արժէքների համակարգը, կերպը, տեսակը, գոյնը: Հայրենիքը մեր լեզուն է, մեր գրականութիւնը, մեր արուեստը, մեր հոգեկերտուածքն ու ազգային նկարագիրը: Այդ ամէնը պաշտպանել է պէտք նոյնքան անձնուիրաբար ու նախանձախնդիր, որքան զինուորն է պաշտպանում հայրենիքի նիւթական սահմանները: Հայրենիքը կարելի է կորցնել նրա տարածքային սահմանները կորցնելուց առաջ: Այդ դէպքում ո՛չ մի զէնք, ո՛չ մի զինուժ չի կարողանայ հրաշք գործել»:

Այլ խօսքով, առանց հոգեւոր Հայաստանի, ֆիզիքական կամ նիւթական Հայաստանը կը դառնայ սոսկ աշխարհագրական տարածք, կամ վարչական-քաղաքական միաւոր, զուրկ ինքնուրոյն դիմագիծէ, աննպատակ ու անիմաստ, ինչպէս մարմինը առանց զայն շնչաւորող հոգիին:

Այսօր մեր երկիրը կը գտնուի ծանրածանր մարտահրաւերներու առջեւ: Մենք մինակ մնացած ենք արիւնարբու եւ հայատեաց երկու թշնամիներու միջեւ արքանուած: Թշնամիներ՝ որոնք նորանոր ցեղասպանութիւններ կը ժպրհին գործել եւ կը միտին ոչնչացնել հայոց ինքնիշխան պետականութիւնը: Վկայ՝ 44-օրեայ պատերազմը, Արցախի հայաթափումը, ՀՀ ինքնիշխան տարածքի զաւթումը եւ ազերական շարունակուող հռետորաբանութիւնը՝ Հայաստանի տարածքը արեւմտեան Ազրպէյճան յորջորջելու եւ մշակութասպան քաղաքականութիւն վարելու լկտիութեամբ:

Մենք պարտինք զօրացնել մեր սպառազինութիւնը, տնտեսութիւնը, ռազմարդիւնաբերութիւնը եւ դիւանագիտութիւնը, զանոնք հասցրնելով բարձրագոյն արհեստավարժ հմտութեան: Բայց այս բոլորին զուգահեռ եւ, առաջին հերթին, մենք պարտինք ներքնապէս ԻՆՔՆԱՄԱՔՐՈՒԻՒԼ: Առանց ներքին ինքնամաքրման, առանց ներքին բարեփոխման, առանց ոգիի եւ գիտակցութեան նոր որակի ձեռքբերման, անկարելի է իրականացնել որեւէ հաւաքական յառաջխաղացք, փայփայել յոյսը նոր որակի պետականութեան ձեւաւորման: Պետութիւնը մենք ենք, մեզմէ իւրաքանչիւրը՝ անհատաբար եւ միասնաբար... Չկայ վերացական պետութիւն: Եթէ վճռական ենք ազգային մեր պետականութեան տալու նոր որակ, նոր ուժականութիւն եւ հզօրութիւն, թոյնքային յառաջդիմութիւն, յայնժամ իւրաքանչիւրս պիտի սկսի իր սեփական անձէն, մեր կաթիլ քրտինքի տքնանքը խառնելով հաւաքական ՄԵՆՔ-ի կերտումին... ԱԶԳԱՅԻՆ ՀԶՕԴ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ, օգտագործելով եւ արդիւնաւորելով ՈՂՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐՈՅԺԸ:



Մա պիտի ըլլար նաեւ մեր ԳԵՐԱԳՈՅՆ ՎՐԷԺԸ մեր թշնամեաց դէմ: Ստեղծել ՀԶՕՐ, ԱՍՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ անոնց հայատեաց աչքերուն դիմաց: Պետականութիւն՝ որ երաշխիքն է նաեւ ԱԶԳԱՀԱՒԱՔԻ ԵՒ ՀՈՂԱՀԱՒԱՔԻ: ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶ ՊԱՀԱՊԱՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԳՈՅՑ

ԺԱՌԱՆԳԵՆՔ ԱՅՆ ԼԵԶՈՒՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ, ՈՐՏԵՂ ԱՐՏԱՑՈԼՈՒԱԾ Է ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՀՈԳՈՒ ՊԱՏԿԵՐԸ

Երաժշտութիւն. ի՞նչ ազդեցութիւն ունի այն, ինչպէ՞ս կարող է վնասել ու հակառակը՝ նպաստել մարդկային հոգու փրկութեանը: Ստորև՝ մեր զրուցակցի՝ ջութակահար, դիրիժոր, երաժշտագէտ, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ Դանիէլ Երաժիշտի հետ զրոյցից հատուած:

Լաւ երաժշտութեան մեծ առաքելութիւնն ու ցածրորակ երաժշտութեան ծանր հետեւանքները



-Երաժշտութիւնը համարում է Աստծոյ հետ խօսելու լեզու: Ըստ հանճարեղ Բախի՝ երաժշտութեան հիմնական առաքելութիւններից մէկը Աստծուն փառաբանելն է, միւսը՝ նպաստել մարդկային հոգու փրկութեանը: Երաժշտութիւնն ունի մեծ առաքելութիւն, բայց դա չի գիտակցում զանգուածների կողմից, շատերի համար այն պարսպ վախտի խաղալիք է: Հոգեւոր երաժշտութիւնը միացնում է երկինքն ու երկիրը,

Աստծոյ խօսքը մատչելի է դարձնում, և այն ճախարում է: Համաշխարհային համոզմունք է, որ երաժշտութիւնն իր գազաթնակէտին հասել է Եոհան Սեբաստիան Բախի արուեստում, ըստ փիլիսոփայ Հեգելի՝ յատկապէս Բախի աղօթերգութիւններում՝ «Չարչարանքներ՝ ըստ Յովհաննոս», «Չարչարանքներ՝ ըստ Մատթէոսի», որոնք պատկերում են Յիսուսի կեանքը, փրկագործական առաքելութիւնը: Ինչպէս լաւ երաժշտութիւնը մեզ արթնացնում է, սփոփում է, խանդավառում, այնպէս էլ վատը վնասում է մարդուն, քառս է մտցնում մարդու մեջ, հոգին կազմաքանդում է:

Ընկալման մակարդակները

-Երաժշտութիւնը, ինչպէս արուեստի ցանկացած երեւոյթ ճիշտ ընկալելու համար, պէտք է պատրաստուել: Կան ընկալման տարբեր մակարդակներ: Անտոն Վեբերը՝ 20-րդ դարի հանճարեղ կոմպոզիտոր, ասում էր՝ երաժշտութեան բովանդակութիւնը հասկանում են շատերը, ձեւը՝ քչերը, էութիւնը՝ եզակիները: Երաժշտութիւնն արտայայտում է յոյզեր՝



ուրախ, տխուր, վեհ: Դա ընկալելի է: Ձեր հնչյունների շարադրման դրամատուրգիան է, թե ինչպես են հնչյունները համախմբում, ինչպիսի բախումներ են լինում նրանց մեջ: Դա լայն զանգուածի համար հասանելի չէ: Էութիւնը երաժշտութեան կապն է յաւերժի, տիեզերքի, արարչագործութեան, յաւիտենական գաղափարների հետ: Երաժշտութիւնը մի ակնթարթ է, որտեղ կարող է արտացոլուել յաւերժը: Կոմպոզիտորները կոչւում են միջնորդներ: Նրանք լսում են տիեզերքի երաժշտութիւնն ու այն փոխանցում մարդկութեանը:

Տիեզերական սիմֆոնիայում հայկական լարը

Ըստ Հերդերի՝ համաշխարհին երաժշտութիւնը նման է մի տաւիղի՝ մեծ վարպետի ձեռքում, և այդ տաւիղի իւրաքանչիւր լարը մի ժողովրդի երաժշտութիւնն է, արուեստը: Տիեզերական սիմֆոնիայում հայն ունի իր ոսկե լարը: Կոմիտասն ասում էր. «*Երաժշտութիւնն ամէնէն մաքուր հայելին է ցեղին*»: Այսինքն՝ այն մեր հոգու պատկերն է: Մեր երգն այնքան պատկերաւոր է, որ տալիս է մեր բնաշխարհի մասին պատկերացում: Կոմիտասը մի տերմին ունի՝ ձայնակար: Դրանք այն երգերն են, որոնք այնքան պատկերաւոր են, որ մարդու մօտ արթնացնում են տեսողական կապակցութիւններ, օրինակ՝ երկրագործական երգերը, գութաներգերը: Մարդու մեջ մի քանի կայծից հրդեհ է բռնկւում, մի քանի հնչյունից զգում էս տարածութիւնը, դաշտը: Ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Յովհաննէսը, ինքնաթիռից մեր սարերը տեսնելով, ասել է՝ կարծես բազմաձայն երաժշտութիւն լինի: Հայաստանի բնաշխարհն առաջացնում է բազմաձայն երաժշտութեան տեսիլք, անհրաժեշտ է դա թարգմանել հնչյունների լեզուով, ինչը կատարուել է մեր ժողովրդական երգերում, որոնք Կոմիտասը գրի է առել, բիւրեղացրել, նուիրել է մարդկութեանը:

Կոմիտասի երաժշտութեան պարզութիւնը

-Ասում են՝ հանճարը պարզութեան մեջ է: Կոմիտասի երաժշտութիւնը պարզ է, բայց ետեւում թաքնուած է բարդ աշխատանք, որ կատարուել է այդ երգերի ստեղծման ընթացքում: Ընկալելու համար՝ մարդ պետք է իր հոգու հայելին մաքրի, թոթափուի հողեղէն փոշուց: Մարդու հոգին ոմբակոծւում է չար ուժերից, ալիքներից, որոնք խանգարում են: Մարդ պետք է պարզ լինի, որ այդ պարզութիւնն ընկալի:

Մեր որբացած երգերը հաւաքելով...

-Մի առիթով ասել եմ՝ Կոմիտասը արել է մօտաւոր նոյնը, ինչ Ջորավար Անդրանիկը: Խաչիկ Դաշտենցի «Ռեանչպարների կանչը» վեպում նկարագրուած է, թե ինչպես էին կոտորածներից ցիրուցան եղած հայ երեխաներին քրդերը նուէրների կամ ոսկու դիմաց յանձնում Ջորավար Անդրանիկին: Քանի որ ոսկի այլևս չկար, քրդերը մի որբուկի չէին յանձնում, և Անդրանիկը խնդրում է նրան մի երգ երգել: Քուրդը լսում է երգն ու արտասուում, ասում է. «*Քո երգը ոսկուց էլ զօրաւոր էր*»: Կոմիտասը հաւաքում էր որբացած երգերը, որ ստեղծի ազգային կոմպոզիտորական դպրոց: Այդ շիթիլները Խաչատրեանի, Բարաջանեանի, Էրուարդ Միգոյեանի արուեստում դարձան դարաւոր կաղնիներ: Մենք դարեր շարունակ չենք ունեցել պետականութիւն, որ կ'ունենար իր մշակութային ինստիտուտները: Կոմիտասն իր կարճ կեանքի ընթացքում կարողացաւ դարերի պակասը լրացնել:



Վիթխարի ժառանգութիւնից քիչ օգտուողներու

-Մենք ունենք վիթխարի ժառանգութիւն, բայց շատ քիչ ենք օգտուում դրանից: Պատճառները սուբյեկտիվ և օբյեկտիվ են: Օբյեկտիվը միջավայրն է, հարեւանները, հակամշակոյթը, մշակութային պատերազմը: Մշակոյթն ամենագորեղ զէնքերից է: Մարդը ծարաւ ունի, կարիք ունի մշակոյթի, չի դիմադրում: Հենց դա էլ օգտագործում են մշակութային պատերազմի հրձիգները: Մշակոյթը տարածելու պատրուակով՝ սրտրկացում է հանրութիւնը: Ամէն ինչ արուել է, որ ժողովուրդներին կտրեն ազգային արմատներից, որ շուտ ձուլուեն, դիմադրութիւն չլինի: Եթէ հոգուն տիրացար, մարմինը յանձնուում է: Մեր ժողովուրդը տարբեր գաղափարախօսութիւնների գոհ է դարձել: Շատերը կտրուել են իրենց արմատներից, չենք սնուել մեր ունեցածով:

«Որքան ապրի հայկական երաժշտութիւնը, այնքան կ'ապրի Հայաստանը»

Մեր հաւատքը մեզ ուղորդում է՝ ինչ է հարկաւոր: Մենք անելիք ունենք՝ արժանանալ մեր փառահեղ ժառանգութեանը՝ ճանաչելով, սիրելով, ուսումնասիրելով, կիրառելով, մեզ վերագտնելով: Երաժշտութիւնը շատ նուրբ կերպով է մարդուն դարձի բերում: Մանկուց՝ մեր կրթութեան, հասունութեան շրջանում, պէտք է ժառանգենք այն լեզուն, երաժշտութիւնը, որտեղ արտացոլուած է մեր նախնիների հոգու պատկերը: Դրանով համակուենք, տոգորուենք, դառնանք նրանք: Դրանից կը գոյանայ մեր անհատականութիւնը, մեր գոյնը, մեր ձայնը: Նրանց երգին կը գումարուի մեր հոգու արձագանգը:

Կումիտասն ասում էր. *«Որքան ապրի հայկական երաժշտութիւնը, այնքան կ'ապրի Հայաստանը»:*

Պատրաստեց Անի Աւագեանը

3/7/2024



Այս տարի, 2024-ի ամռան ամիսներուն, կը նշենք Կիպրոսի վրայ 1974 թուականի թրքական ներխուժման 50-ամեակը, միեւնոյն ժամանակ 1963-էն 1964 թուականներուն՝ միջ համայնքային բախումներուն 60-ամեակը:

1963-ի միջհամայնքային բախումները ծանր հարուած հասցուցին Կիպրոսին եւ կործանարար ազդեցութիւն ունեցան կիպրահայ գաղութին վրայ: Նիկոսիոյ Հայկական Թաղամասը TMT-ի կողմէ (Թրքական Դիմադրողական Կազմակերպութիւնն է) գրաւուած առաջին շրջաններէն եղաւ: 231 կիպրահայ ընտանիքներ (շուրջ 1,200 անձեր) եւ 169 Յոյն Կիպրացի ընտանիքներ (շուրջ 500 անձեր) իրենց տուններէն տեղահանուեցան: Անոնք որոնք իրենց տունները եւ/կամ գործերը կորսնցուցին «Τουρκόπληκτοι» (Թուրքոպլիկտի - Թուրքերուն կողմէ հարուած ստացած) կոչուեցան: Յոյն Կիպրացի տեղահանուածները՝ մեծ մասամբ նիւթական կորուստներ կրեցին, մինչ Կիպրահայերը թէ՛ նիւթական (1964-ի տուեալներով աւելի քան մէկ միլիոն ոսկիի համարժէք) եւ թէ՛ համայնքային կառոյցներու կորուստներ կրեցին: Կիպրահայութեան համար անակնկալ աղէտէն վերընձիւղուելու եւ իր կեանքը շարունակելու իբրեւ կազմակերպուած համայնք՝ պարզապէս ընտրութիւն մը չէր, այլ անհրաժեշտութիւն, որովհետեւ բախումները անդարմանելիօրէն քայքայեցին նախապէս ամուր հիմքերու վրայ խարսխուած փոքր համայնքին կեանքը, որ երբեք նոյնը պիտի չըլլար այլեւս:

1974-ին թրքական ներխուժումը Կիպրոսի պատմութեան մէջ, անկասկած ամենէն վայրագը եւ անկիրանադարձային եղելութիւնն էր անշուշտ՝ 1570-ի օսմանեան նուաճումէն ետք: 1974-ին Յուլիսէն մինչեւ Սեպտեմբեր ամիսը, շուրջ 3,242 Բմ² (Կիպրոսի ընդհանուր տարածքին 36.2%) գրաւուած էր թուրքերուն կողմէ, ներառեալ 198 քաղաքներ, գիւղաքաղաքներ եւ գիւղեր, կային 210,000 գաղթականներ (որոնցմէ 300-350ը Կիպրահայեր էին), սկզբնապէս շրջանին 20,000 շրջափակուած կար (այժմ՝ 300-էն քիչ պակաս), 2,130 անյայտ կորսուածներ (որոնցմէ մէկը Կիպրահայ Ռօզա Պաքալեանն է), 3,000 մահացած, 5,700 գերեզմարուած, ինչպէս նաեւ հարիւրաւոր վիրաւորներ, բռնաբարուած անձեր եւ հաշմանդամներ: Մինչ 1963-1964-ի միջ համայնքային բախումները յաճախ ներկայացուած են որպէս Կիպրոսի անմեղութեան վերջը, 1974-ի թրքական ներխուժումը մեր կողմին վրայ կը համարուի բարբարոսութեան եւ վանտալիզմի գագաթնակէտը:

Այս տխուր առիթներով, Կիպրոսի Հայոց Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը կազմակերպած է յատկանշական ցուցահանդէս մը, որ պատրաստուած է հետազօտող-ուսումնասիրող Ալեքսանդր-Միքայէլ Հաճիլիրասին կողմէ: Օգտագործելով ինամքով ընտրուած նկարները եւ քարտէսները, ան ամփոփ ձեւով կը ներկայացնէ կիպրահայ գաղութի կորուստները, ըլլան անոնք Նիկոսիոյ Հայկական Թաղամասի, Ֆամակուսթայի եւ Սուրբ Մակարայ Վանքին մէջ, նաեւ լուսարձակի տակ կ'անէ ռմբակոծուած Մելգոնեան Կրթական Հաստատութեան տղոց շէնքը: Բոլոր քարտէսները եւ նկարները ունին ենթախորագիրներ Հայերէնով, Յունարէնով եւ Անգլերէնով:

Առաջին ցուցատախտակը կը սկսի Նիկոսիոյ Հայկական Թաղամասի քարտէսով: Պատրաստուած յատկապէս այս ցուցահանդէսին համար, քարտէսը ցոյց կուտայ Հայկական համալիրը, տարբեր հայկական ակումբներու կառոյցները 1908-1964-ի միջեւ, Հայ Աւետարանական եկեղեցին «Կանչուոր»ը, նաեւ Ռոքքաս-ի պատնէշի մասը, որ կառավարութեան կողմէ 1957-2055-ի ժամանակահատուածին համար Հ.Ե.Մ-ին վարձուած էր: Այս ցուցատախտակը կ'ընդգրկէ նաեւ Վիքթորիա փողոցի վրայ Հայկական համալիրի շէնքերու մանրամասն յատակագիծը:

Ապա, նկարներ կան որոնք կը ներկայացնեն կարգ մը կառոյցները եւ կիպրահայութեան կեանքէն պատարիկնեռ, ինչպէս օրինակ՝



- Սուրբ Աստուածածին տաճարը (կառուցուած 1116-ին, վերակառուցուած՝ 1308-1310-ի միջեւ)
- Մելիքեան Վարժարանը (շինուած 1921-ին)
- Ուզունեան Վարժարանը (շինուած 1938-ին)
- Նոր մանկապարտէզը (շինուած 1950-ին)
- Հայոց Ցեղասպանութեան յուշարձանը (կառուցուած 1932-ին)
- Հայկական Ակումբը (հիմնուած 1902-ին, եկեղեցւոյ կից 1908-էն)
- Հ. Ե. Միութեան/Համազգայինի ակումբը յաջորդաբար հիմնուած 1934-ին եւ 1949-ին, Թանգիմաթ փողոցին վրայ 1961- էն)
- Հ.Բ.Ը.Միութեան ակումբը (հիմնուած 1913-ին, եկեղեցւոյ դիմացը տեղաւորուած 1959-էն)
- Հայ Աւետարանական եկեղեցին (կառուցուած 1946-1947-ի միջեւ)

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՀԱԲԵԿՉԱՊԵՏԸ... ԿԸ ՊԱՏՈՒԸՈՒԻ,

ԻՐԱԻԱՏԷՐԸ՝ ԿԸ ՀՐԿԻԶՈՒԻ,

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿՈՏՆԱԿՈՒՄՈՒԻ

Պարոյր Յ. Աղպաշեան



Աշխարհը ամբողջ կ'ապրի բուռն եւ բացառիկ եռքի մէջ - պատերազմական մթնոլորտ, անապահովական զարգացումներ, քաղաքական մազլցումներ, տնտեսական անկումներ, սահմանային առճակատումներ, դուադրական խորհրդաւորութիւններ եւ բազմաթիւ այլ ցնցումներ, որոնք մարդկութիւնը կը կլանեն, կը յօշոտեն, կը ջարդեն, կը գերեն, կը բզբտեն, կը կոխկռտեն, կ'անցնին ու կ'երթան:

Այս են ամենօրեայ ուրուականային պատկերները, իրադարձութիւնները ու հրէշագործութիւնները, որոնց վատահամբաւ հեղինակները ու տխրահռչակ խրտուիլակները, քաղաքակրթութեան, բարոյականութեան, արդարութեան ու ճշմարտութեան դիմակներուն տակ ապաստանած բարբարոսներ ու վայրենաբարոսներ են:

Այսպիսիներ անարգել կը գործեն, տեղ մը քօղարկուած, ուրիշ տեղ մը՝ բացայայտ, որովհետեւ արիւնի ու մարդակերութեան, ոճիրի ու ստորաքարնչութեան, բռնութեան ու ստրկութեան, հողախլութեան ու պղծութեան ծարաւի են, հետամուտ, վարժ ու խելայեղ, միանուա՛գ դերակատարութիւններով:

Ո՛վ կրնայ զսպել այդ անասնային խելագարները եւ անզսպելի կոտորածները, որոնք մարդկային ամենէն լկտի ու լիրք քաղաքականութեամբ վարակուած են եւ այդ սեւ ոգիով ալ կը գործեն:



Ո՛չ միջազգային կազմակերպութիւնները, ո՛չ ատեանները, ո՛չ ալ մարդասիրական ու խաղաղասիրական առաքելութեամբ ու լիազօրութեամբ համակուած ու կոչուած համաշխարհային կառոյցները, կրցան ու կրնան «զսպել» այն չարագործները, որոնք աշխարհի անդորրութեան, համակեցութեան ու ներդաշնակութեան ոչ միայն կը սպառնան, այլեւ՝ կը խախտեն անոր էութիւնը, ոտնակոխ ընելով ամէն ինչ որ անաղարտութիւն է, մաքրութիւն կամ անբասիրութիւն:

Գաղութատիրութիւնը, որ երկար տարիներ իշխեց բազմաթիւ ցամաքամասերու վրայ, յատկապէս «Երրորդ կարգ»ի ժողովուրդներուն վրայ, չունեցաւ այն բրտութեան ու դաժանութեան մոլուցքները, ինչ որ կը կատարուին ներկայիս, ինչ որ կը տեսնենք հիմա, ինչ որ կը կիրարկուին ամենուր:

Անշուշտ, անոնք ալ «բարի պտուղներ» չէին, բայց, խաւարամտութեան այդ օրերուն, իրենց համար «արտօնեալ շնորհք» մըն էր, իրենց լուծին տակ պահել նման տարածքներու «անտէր» ժողովուրդները, սակայն, այսօր, երբ կ'ենթադրուի, որ աշխարհը կը դառնայ անբռնազօսիկ եւ ինքնիշխան, իսկ մարդկութիւնը հանդուրժողական ու բարեկամական պայմաններու մէջ, ստեղծուած իրավիճակները շատ աւելի այլանդակութեամբ եւ այլամերժութեամբ ողողուած են, արդիւնահեղութեան, մարդասպանութեան, մաքրագործութեան, բռնադատութեան եւ հաշուեյարդարութեան ամենէն տխրեղծ, ճղճիմ եւ ողորմելի արարքներով:

Այս արագ մտորումները, ի լուր վերջին շաբթուան ընթացքին այն ահաւոր բռնկումներուն, որոնց թիրախ դարձան լիբանանեան շրջաններ, ընդ որուն, անոնց հետեւանքները զգալի դառնալով բազմաթիւ ոլորտներէ ներս, օդային ռմբակոծումներով ու հրթիռարձակումներով, քանդումներ եւ աւերներ սփռելով, մահեր ու վիրաւորներ պատճառելով:

Անշուշտ, սաստանայական հերոսը Իսրայէլն է, իր խելագար վարչապետով ու ֆաշիստական զօրքով, որոնք աշխարհը գրպանած, մերթ Պաղեստինը, մերթ Եմէնը, մերթ Սուրիան, մերթ Լիբանանը կը հարուածեն, որովհետեւ իրենց «կանաչ լոյսեր»ուն տէրը իրենք են եւ այդ քմահաճութեամբ կը խողխողեն ամէն ինչ, ընդ հովանեաւ իրենց խնամատիրող՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, որ փաստօրէն ինքզինք կը նկատէ «խաղաղութեան աղանի», բայց, կը մնայ արիւնարբու գիշատատենչ մը, իր անմիտ քաղաքականութեամբ, իր թունաւոր ռազմավարութեամբ, իր անյազուրդ ընչաքաղցութեամբ եւ իր անզսպելի ծայրայեղականութեամբ:

Իսկ Արեւմուտքը, որ ինքզինք կը նկատէ Քրիստոնէութեան ռահվիրան, քաղաքակրթութեան խորհրդանիշը, ազատութեան ջատագովը, մարդկային իրաւունքներու զօրակցողը, շահագործուած ժողովուրդներու պաշտպանը, նոյնքան ՉԱՐԻՔ մըն է, որուն վստահիլը ոչ այն միամտութիւն է, այլ՝ անսահման անհեթեթութիւնք:

Իսրայէլի կատարած աննկարագրելի վայրագութիւնները, աննախընթաց սանձարձակութիւնները, անտանելի ամբարտաւանութիւնները եւ անչափելի անպատկառութիւնները, որոնք ահաւոր եւ ահռելի են, իրենց բնոյթով ու գործողութիւններով, տեսակով ու տարողութիւններով, պաղեստինեան քաղաքներ ու բնակավայրեր փլատակելով, շուրջ 40 հազար երեխաներ, տարեցներ ու հասարակութիւն սպաննելով, անյազօրէն կը շարունակէ իր սպանողը, մինչ մեծապետական երկիրներ լուռ ու մունջ կը դիտեն. ինչո՞վ բացատրել եւ ինչպե՞ս արդարացնել այս միամտութիւնները:

Որոշ խեղկատակներ կ'ըսեն, թէ Իսրայէլ կը պայքարի պաղեստինցի ահաբեկիչներու դէմ, առանց անդրադառնալու որ ան իր հողը կը պաշտպանէ, իրենց իրաւունքները կը հետապնդէ, իր արժանապատուութիւնը կը պահէ, իսկ «եկուոր» եւ «արուեստածին» հրեան ի՞նչ կ'ընէ, որ խրուած է Միջին Արեւելքի ամենէն փափուկ ծոցին մէջ, ուր կը վարէ



գազանային քաղաքականութիւն մը, հալածելով տեղւոյն արաբները ու իլէլով անոնց հողային տարածքները:

Այսքան չարիք ո՛ր տեսնուած է ամերիկացի փոշաներ, արեւմուտքցի հաւկոյրներ, արաբ հայրենակիցներ (՝), բոլորդ ալ նստած ըլլալով ամֆիթատրոններուն մէջ, կը փորձէք վայելել արիւնոտ տեսարանները եւ ձեր անարժան պատիւներուն տուրք տալով, հանդիսատեսը կը դառնաք այդ բոլոր ողբերգութիւններուն:

Վերջին հաշուով, ինչո՞ւ կեղծապատիր իշխանութեան մը իրաւունք կը տրուի, անգէն եւ անմեղ ժողովուրդի մը զաւակները անճիտելու, օճախները բռնկելու, ծննդավայրերը հաշմելու, բայց, բո՛ւն տանտիրոջ կ'արգիլուի իր հողին տէր դառնալ եւ իր պատիւը բարձր պահել, երբ արեւու նման յստակ ու պայծառ է, որ առաջինը նենգ ու խորթ է, իսկ երկրորդը՝ իր ինքնութեան ու պատկանելիութեան իրաւացի կրողն է:

Անոնք որոնք, ուղղակի թէ անուղղակի, գաղտնի թէ սքողուած, բերանբաց թէ լքստուած ոճով կը պաշտպանեն Իսրայէլը, անոր մարդասպան վարչապետը ու հետեւորդ խունտաները, թող բարեհաճին զանոնք տանիլ ու բնակեցնել իրենց երկիրներուն մէջ ու՝ վե՛րջ:

Բայց, յայտնի է, անոնց նպատակը այլ է. այդ «բեռնամանրէ»երը պահել՝ հոն ուր որ են եւ շահագործել անոնց ներկայութիւնը, խճճելու ու պարսաւելու դրացի երկիրները, զանոնք ծունկի բերելու (երազայի՛ն) հաւանականութեամբ կամ (զո՛ւր) ակնկալութեամբ:

Մինչեւ օրս կը շարունակուին Իսրայէլեան խժոժութիւնները, ընկերակցութեամբ՝ զայն հովանաւորող ու քաջալերող դաշնակիցներուն ու հրահրողներուն, կամ անողնաշարներուն ու թուլամորթներուն, որոնց իմաստակութիւնները ու սովեստութիւնները արդէն ցոյց կու տան իրենց անարժանիութիւնները, կապկութիւնները եւ տգեղութիւնները:

Կազայի պայթինավտանգութիւնները անդուօրէն եւ յամառօրէն կը շարունակուին ու կը վերանորոգուին, իսկ հաւանական հրադադարը, որուն մասին շատ խօսուեցաւ եւ ակնարկուեցաւ, այսօր վերածուած է փխրուն փուչիկի, իսկ ատկէ օգտուողը կ'ըլլայ նոյնինքն սադայէլապետ-Իսրայէլը, իր ոճրային սլաքները ուղղելով Լիբանանի դէմ:

Արդարացումը այն է (ինչպէս նոյնը կը ծորթան ու կը ճոճոան ամերիկացիք եւ ընկերք), թէ՛ Իսրայէլ կը պաշտպանուի իր դէմ եղած լիբանանեան դիմադրական յարձակումներէն ու սադրանքներէն, սակայն, ի՛նչ գնով, հո՞ւ է ողբերգակատակերգութիւնը, պաղեստինցի նորահաս սերունդնե՞ր ուբակոծելով, կրթական, բժշկական, մարդասիրական ու բարեսիրական կառոյցնե՞ր հիմնայատակելով, իր ճիւղային պատերազմական հնարքներն ու զինամթերքները ի գործ դնելով, ամենայն անպարկէշտութեամբ, պղծութեամբ ու գարշահոտութեամբ, մինչ Իսրայէլի վարչապետին... երկրպագուները կ'ողջունեն ու կը ծափահարեն անոր Տոն Քիշոթեան ու Քաջ Նազարական արկածախնդրութիւնները:

Մինչեւ 1982 թուականը, Լիբանանի մէջ չկար «Հրգպալլա», այդուհանդերձ, հրէական «թախթապիտի»ները, միշտ պատրաստ էին լիբանանեան հողերը ճեղքելու ու լիբանանցիները սպաննելու:

Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը (ՄԱԿ), ի դէմս այդ բռնութիւններուն ու բռնագրաւումներուն, թիւ 425 հռչակագիրով, պահանջած էր որ Իսրայէլ ոչ միայն հրաժարի իր նուաճողականութենէն, այլեւ քաշուի լիբանանեան հողերէն:

Սակայն, ո՞վ էր մտիկ ընողն ու հնազանդողը, եւ ո՞վ կրնար հակառակիլ վայնասունի մը, որ իր կոնակը յենած էր իր նման ժահրոտ ու մաղձոտ ապականողներու վրայ:

Այլեւս այլընտրանք չկար, բացի, իր սեփական ուժերուն վրայ վստահելով, ինքնապաշտպանուիլ, ի հարկին ու տեղին հակադարձելով իժի ծնունդներուն եւ անոնց ձագուկներուն:



Արաբական աշխարհի մեծամասնութիւնը, որ միշտ ալ մնաց դիտողի եւ ակնատեսի դերին մէջ, առանց սպառնացող ու զգաստացնող մասնակցութիւններու (այս ալ ուրիշ ամօթանք մը), մանաւանդ տեսնելով Կազայի եւ անոր բնակչութեան մոռթագերծումը, պահ մը կարծուեցաւ որ ան կը ցուցաբերէ իր արաբականութեան եւ եղբայրակցութեան դիրքորոշումը, պահանջելով վերջ մը տալ այդ արիւնահոսութեան եւ աւերուածութեան, ինչ որ շատերուն «խոշ»ին չեկաւ, աւելին՝ պատճառ դարձաւ, որ անոնք «Հրգպալլան» ներգրաւեն պատերազմին մէջ, աստ ու անդ հրդեհելով ու միջամուխ դարձնելով զայն պատերազմին, որպէսզի «ոչնչացնեն» զայն, իր մարդուժով ու զինուժով:

Այս բոլոր սին ճամարտակութիւններուն ու կոկոզաբանութիւններուն վրայ, եկան աւելնալու հարաւի վրայ շարունակուող ու տարածուող հակամարտութիւնները, նաեւ դիմադրական շարժումներէն ազդեցիկ դեկավարներու եւ պատասխանատուներու սպանութիւնները, որոնց դէմ այլեւս անկարելի էր լռել:

Ուստի, եթէ ոչ լայնածիր կամ համատարած պատերազմ մը, բայց, շրջանը պիտի շարունակէ մնալ ՅՂԻ նոր զարգացումներով, թէ՛ ի՞նչ եւ ե՞րբ, ատոնք մօտալուտ ժամանակները ցոյց պիտի տան, այն դիտարկումով, որ տուժողները միայն երկկողմերը պիտի չըլլան, այլ պիտի ընդգրկեն նաեւ այն բոլոր վերին կողմերը, որոնք, այս կամ այն ձեւով եւ ոճով այս քստմնելի կացութեան հասցուցին իրադրութիւնները իրենց կամայական եւ անձնատիրական խաղքերով:

Այս առիթով, կ'արժէ յիշել եւ յիշեցնել հետեւեալ սմտեղուկային պատկերը, երբ Ամերիկայի պետութիւնը, իր օրէնսդրական-ծերակուտական դեկավարութեան կողմէ, պաշտօնական հրաւեր յղեց համաշխարհային հանրայայտ մարդասպանի մը՝ որ կը կոչուի Նաթանիահու, որպէսզի իր ամպիոնէն ելոյթ ունենայ ու ցինիկաբար պաշտպանէ իր թեզը եւ յառաջխաղացքները:

Չմոռնա՛լ. հրաւիրողը Ամերիկայի նման հզօր գերպետութիւն մըն է, ժողովրդավարութեան բարձրակոչ մունետիկ մը, իսկ հրաւիրողը՝ համաշխարհային հանրաձանօթ մարդասպան մը:

Ուշագրաւ էր, որ որոշ ծերակուտականներ մերժեցին ներկայ ըլլալ անոր ելոյթին, սրահը ձգելով այն խամաճիկներուն, որոնք բազմիցս եւ յոտընկայս, ծափահարեցին մարդասպանի մը ճաթոտան պոռոտախօսութիւններուն:

Երկրորդ յատկանշութիւնը այն էր, որ Ամերիկայի ներկայացուցչական Տան նախկին խօսնակ՝ Նենսի Փելոսի, ոչ միայն մերժած էր ներկայ գտնուիլ, այլեւ՝ անոր ելոյթը նկատած էր ձախորդ եւ ձախաւեր, որովհետեւ արիւնոտ ձեռքերէ կազմուած էր եւ ոճրային բովանդակութիւն ուներ:

Բայց, տեղւոյն թէ այլ հարթակներու վրայ գործող «դիւրաբեկ» պատասխանատուներ, նախընտրած են մարդասպան մը յարգել ու մեծարել, քան զայն դատապարտել ու վանել:

(Պէյրութ)

12/8/2024

ՄԵՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՈՎ ԵՒ ԴԱՏՈՒՄՈՎ շարքէն:



ԸՆՏՐԵ՛Ն. «ՏՈՒՓԻՆ ՍԷ՞Ջ» ԹԷ՞ «ՏՈՒՓԷՆ ԴՈՒՐՍ»



ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԵԼԵԱՆ

4 ՕԳՈՍՏՈՍ, 2024

Դարաշրջանի մը մէջ, որ կը բնութագրուի արհեստագիտական սրննթաց յառաջդիմութեամբ եւ հասարակական-ընկերային յարատեւ փոփոխութիւններով, «տուփէն դուրս» (outside the box) մտածելու կարողութիւնը երբե՛ք այսքան կարեւոր չէ եղած: Մտածելու այս ձեւը, որ կը գլէ ու կ'անցնի ասանդական սահմանները, մղիչ ուժը կը հանդիսանայ գիտական ու քաղաքական-ընկերային որեւէ փոփոխութեան ու յառաջդիմութեան: «Տուփէն դուրս» մտածել կը նշանակէ հարցերուն մօտենալ նոր տեսանկիւններէ, մերժել առկայ նորմերը եւ ընդունիլ ոչ-ասանդական լուծումներ: Ան կը պահանջէ ստեղծագործ միտք, լայնամտութիւն եւ ձեռնոցներ վերցնելու պատրաստականութիւն:

Հայոց պատմութեան մէջ, տուփէն դուրս մտածողներ եղած են, օրինակ, մեր կարծիքով, Մեծն Տիգրանը, Մեսրոպ Մաշտոցը, Պապ թագաւորը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփան, Բագրատունեաց թագաւորութեան հիմնադիր Աշոտ Ա Մեծը, Գրիգոր Նարեկացին, Իսրայել Օրին, Խաչատուր Աբովեանը, Րաֆֆին, Կոմիտասը, Յովհաննէս Թումանեանը, Արամ Մանուկեանը, Պօղոս Նուպար Փաշան, Լեւոն Շանթը, Վահան Թէքէեանը: Միջազգային պատմութեան մէջ՝ Մահաթմա Կանտիի ոչ-բռնի դիմադրութեան փիլիսոփայութիւնը, Մարթըն Լութըր Քինկի ամերիկեան քաղաքացիական իրաւունքներու շարժումը: Այնշտայնի յարաբերականութեան տեսութիւնը, Սթիւ Ճոպսի «Apple»ը, Ռայթ եղբայրներու թռչելու յախտուն փափաքը եւ օդանաւի գիտը, իսկ արուեստական բանականութեան ստեղծումը կը ներկայացնէ կոթողային այլ նուաճում մը, որ ծնունդն է «տուփէն դուրս» արտասովոր մտածողութեան:

Նշեալները օրինակներ են, դեռ կարելի է երկարել շարքը, բայց մեր նպատակը անուններու եւ իրագործումներու շարանը չէ, այլ ճիգ մը ցոյց տալու, թէ «տուփէն դուրս» մտածելու եղանակով ինչե՛ր կարելի է ընել:

Պատմական մեծ մարտահրաւերներու դիմաց, հայ ժողովուրդին համար առանձնայատուկ նշանակութիւն պէտք է ունենայ «տուփէն դուրս» մտածելու կարողութիւնը: Այս մտածելաձեւը, որ, ինչպէս ըսինք, կ'ենթադրէ կտրել դասական իմաստութեան սահմանները եւ պեղել հաստատուած ու ընդունուած նորմերէն անդին, կրնայ փոխակերպել հայ ժողովուրդին իրավիճակը թէ՛ քաղաքական, թէ՛ ընկերային-հասարակական եւ թէ՛ գիտական-արհեստագիտական մարզերուն մէջ:

Հայերս տոկունութեան եւ յարմարելու երկար պատմութիւն ունինք: Վերապրած ենք ցեղասպանութիւններէ, եւ բռնի տեղահանութիւններէ ետք աշխարհի տարածքին ստեղծած ենք համայնքներ, որոնք վերածուած են սփիւռքներու, բայց երբեք այն միացեալ միաւորին, զոր, հակամէտ ենք, երբեմն գլխազիր՝ Սփիւռք կոչելու: Այս սփիւռքներու կազմակերպման ընթացքին, անհատաբար ցուցաբերած ենք նորարար մտածողութեան եւ



հաստատակամութեան որոշ կարողութիւն: Սակայն, ժամանակակից հայր, (այս եզրին մասին պետք է լրջօրէն մտածել) նաեւ Հայաստանի մէջ, երբեք չէ ցուցաբերած «տուփէն դուրս» մտածելու վարքագիծ, առնուազն հաւաքական մակարդակի վրայ, եւ այդ միջոցով լուծելու ընթացիկ մարտահրաւերները եւ օգտուելու բազում նոր հնարաւորութիւններէն: Չենք վարանիր երբեմն նշելու, որ հայր տակաւին կը մտածէ 1860-ի ազգային սահմանադրութեան եղանակով կամ Բաճիկի խաչագողներուն տրամաբանութեամբ. կա՛մ ամիրա ենք, կա՛մ թաղականին կնիկը, կա՛մ Արիստոտել Աղա (առաջին կարգ նստիլը եւ նկարուիլը պայման), կա՛մ ալ «ըստ հրաւերի» յառաջաբաններ գրելու եւ նոյն դասախօսութիւնը տասը անգամ վաճառելու պատրաստ «գիտնականներ»: Զնոնանք Թումանեանի «Քաջ Նազարը» եւ այսօրուան քաջ նազարները: Փանջունիները եւ քաջ նազարները շատոնց մտերիմներ դարձած են....

Հայաստանի աշխարհաքաղաքական մարտահրաւերները, մանաւանդ շրջապատուած ոչ-բարեկամ (թշնամի չըսելու համար) երկիրներով, կը պարտադրեն ռազմավարական «տուփէն դուրս» մտածողութիւններ: Դիւանագիտական ստեղծագործ ճիգերը, շրջանային դաշինքները եւ միջազգային բարեկամութիւնները կրնան նպաստել յաղթահարելու այս բարդութիւնները: Պատմութեան դասեր, հարցադրումներ, վերլուծումներ, հաւանականութիւններու ճշդում, հաւաքական քննարկումներ, նորարական աշխարհահայացք, բոլորը անցնել ազգային շահերու եւ անվտանգութեան պահանջներու ու որոշումներ կայացնել: Շատ կը լսենք այս օրերուն. «հայ ժողովուրդը պատմութենէն դասեր քաղելու սովորութիւն չունի՛», նաեւ «ապագան երբե՛ք ծրագրել չի գիտեր»:

Հասարակական հարցերը, ինչպէս՝ կրթութիւնն ու առողջապահութիւնը նոյնպէս կը պահանջեն նորարար մօտեցումներ եւ ոչ-աւանդական լուծումներ: Տակաւին, Հայաստան դէմ յանդիման կը գտնուի տնտեսական մարտահրաւերներու: «Տուփէն դուրս» մտածելը կրնայ առաջնորդել տնտեսական նոր մարզերու զարգացման, ինչպէս արհեստագիտութիւնն եւ զբօսաշրջութիւնը, եւ խթանելու ձեռներէցութիւնը: Օրինակ, աշխարհասփիւռ հայութեան կամ հայկական սփիւռքներու փորձառութեան եւ միջոցներու օգտագործումը կրնայ տնտեսական նոր հնարաւորութիւններ ստեղծել Հայաստանի մէջ: Հոս եւս կարելոր է «տուփին մէջ ձգել» աւանդական սփիւռքին սահմանումը եւ «Հայաստան-սփիւռք» «գործակցութեան» կամ «չգործակցութեան» հնամաշ ու քանդիչ մտածողութիւնները: Պետութիւն-սփիւռքներ յարաբերութիւնը պետք է յառաջադէմ նոր տարագով մը արտայայտուի: Երբ կեանքի որակը բարելաւուի Հայաստանի մէջ՝ ապահովութեան, պատկանելիութեան եւ տնտեսական առումներով, այդ մէկը հիմնովին կը նուազեցնէ արտագաղթը Հայաստանէն, որ ռազմավարական նշանակութիւն ունի երկրի կայունութեան, զարգացման եւ գոյատեւման համար:

Հայաստան ունի շրջանին մէջ արհեստագիտական կեդրոն դառնալու ներուժը՝ մարդկային դրամագլուխի, ստեղծագործական ունակութիւններու եւ արհեստագիտութիւններու նկատմամբ աճող հետաքրքրութեան շնորհիւ: Իր երիտասարդ, ուսեալ բնակչութեամբ, որ պատրաստ է ընդունելու նորարարութիւնները, Հայաստան կը գտնուի տնտեսական նոր հնարաւորութիւններու շեմին: Նորարարական մշակոյթ խթանելով եւ նորաստեղծ ձեռնարկութիւններուն (start-ups) զօրավիգ կանգնելով, Հայաստան կրնայ արհեստագիտական բարձր լուծումներ առաջադրել եւ առաջատար դիրք գրաւել արագ զարգացող արհեստագիտական աշխարհին մէջ: Այս իմաստով, «տուփէն դուրս» մտածող կարելոր քայլ կը նկատուի 1 յուլիսի 2024-ին Երեւանի մէջ պաշտօնական բացումը՝ Շարլ Ազնաւուրի անունը կրող Հայաստանի ազգային գերհամակարգչային կեդրոնին: Այս



կեդրոնին առաքելութիւնն է խթանել հետազոտութիւնները ճարտարարուեստի, կրթութեան եւ գիտութեան մարզերուն մէջ:

Իսկ «տուփէն դուրս» մտածելու եւ այդ մտածումը իրականութեան վերածելու մեծագոյն նախաձեռնութիւններէն մէկը հայ իրականութեան մէջ այսօր կը հանդիսանայ «ԹՈՒՄՈ» ստեղծարար արհեստագիտական կրթութեան կեդրոններու հաստատումը Հայաստանի ամբողջ տարածքին: Կ'ուզե՞նք «տուփէն դուրս» մտածողութիւնը լաւապէս ըմբռնել ու ընդօրինակել՝ դիմենք «Թումո»-յի հիմնադիրներ Սեմ եւ Սիլվա Միմոնեաններուն ու հիմնադիր եւ գործադիր տնօրէն՝ Մարի Լու Փափազեանին: «Թումոն» անվճար արտադրողական ծրագիրներ կը տրամադրէ 12-էն 18 տարեկան պատանիներուն ու անոնց արհեստագիտական հմտութիւններ կը սորվեցնէ, գործնական մօտեցումը մը՝ որ ոչ միայն աշակերտները կ'օժտէ անհրաժեշտ գիտելիքներով, այլեւ կը խթանէ քննական մտածողութիւնը, խնդիրներու լուծումը եւ համագործակցութիւնը, որոնք յաջողութեան կարեւոր որակներ կը նկատուին արհեստագիտութեան մէջ:

Օգտագործել հայկական սփիւռքներու փափուկ ուժը

«Փափուկ ուժը» կը վերաբերի պետութիւններու կամ երկիրներու ուրիշներու վրայ ազդելու կարողութեան՝ գրաւչութեան եւ համոզումի մեթոտներու, որոնք կը ծագին երկրի մը մշակոյթէն, քաղաքական իտելալներէն եւ քաղաքականութենէն (տեսնել փրոֆ. Հրաչ Չիլինիկիւրեանի յօդուածը հետեւեալ [կայքով](#)): Մինչդէռ «կարծր ուժը» կ'ընդգրկէ պարտադրանքի, ռազմական ուժի եւ տնտեսական լծակներու օգտագործումը յատուկ նպատակներու հասնելու կամ երկրի մը նպաստաւոր արդիւնքներ ձեռք ձգելու համար: Ուժի կիրառութեան երկու ձեւերն ալ վճռորոշ են պետութեան մը արտաքին քաղաքականութեան մէջ, որովհետեւ «փափուկ ուժը» կը խթանէ կայուն յարաբերութիւններն ու ազդեցութիւնը, մինչդէռ «կարծր ուժը» լուծում կը բերէ կարճաժամկէտ նպատակներու բիրտ ուժի գործածութեան միջոցով ([ստիւ](#)):

Հայաստան- սփիւռքներու յարաբերութիւններու շրջագիծին մէջ «կարծր ուժը» այնքան ալ գործնական չէ, բայց ինչպէ՞ս օգտագործել սփիւռքներու «փափուկ ուժը»: Այսօր հայերը միջազգային ճանաչում ունին իրենց հարուստ մշակոյթով, գիտական նուաճումներով, ստեղծագործական ունակութիւններով եւ առեւտուրի մէջ յաջողութիւններով: Կոմիտաս, Արամ Խաչատուրեան, Շարլ Ազնաւուր եւ Սերժ Թանքեան միջազգային ծանօթ դէմքեր են երաժշտութեան մարզին մէջ: Տասնեակ հազարաւոր հայերու համատարած ճանաչումը արուեստի եւ մշակոյթի տարբեր մարզերուն մէջ կը վկայէ հայկական սփիւռքներու ունեցած «փափուկ մեծ ուժին» մասին:

Գիտութեան մէջ, հայ գիտնականներ կարեւոր յայտնաբերումներ կատարած են ամբողջ աշխարհի տարածքին: Covid-19 համաճարակի ժամանակ Նուպար Աֆեյեանի Moderna-ն մշակելով առաջին պատուաստներէն մէկը՝ վիթխարի նպաստ բերաւ մարդկութեան: Գիտութեան մէջ տակաւին պէտք է նշել անունները Ռայմոնտ Վահան Տամատեանի (MRI սարքի գիտարարը), Արտեմ Փաթափութեանի (Նոպելեան մրցանակակիր, մոլեքուլային կենսաբան), Վարդան Գրիգորեանի (պատմաբան եւ Պրաուն համալսարանի ու Նիւ Եորքի Քարնեկի ընկերութեան հիմնադրամի նախագահ, «Aurora» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիր), տոքթ. Լեւոն Խաչիկեանի (կենսաբժշկական գիտաշխատող), Քրիսթինա Մարանչիի (արուեստաբան, հայ արուեստի եւ



ճարտարապետութեան ուսումնասիրութեան մէջ նշանակալի ներդրումով), Տարօն Աճեմօղլուի (տնտեսագէտ) եւ Վիքթոր Համբարձումեանի (աստղագէտ): Business-ի մէջ պէտք է յիշատակել նաեւ անունները Ալէք Մանուկեանի եւ Քըրք Գրիգորեանի իբրեւ «տուփէն դուրս» մտածող հայերու ազդեցութեան եւ յաջողութեան օրինակներ: Այս բոլորը միասին կ'ընդգծեն սփիւռքներու լայն կարելիութիւնները փափուկ ուժ կիրարկելու առումով:

Յստակ է այլեւս, այսօր սփիւռքներու փափուկ ուժը աւելի ու աւելի կը կեդրոնանայ անհատներու, քան արանդական կառոյցներու եւ կազմակերպութիւններու ձեռքը: 21-րդ դարուն, հայ անհատներ, անկախ իրենց գտնուած վայրէն, կրնան օգտագործել իրենց փափուկ ուժը կամ ցանցային միջոցներով ուղիղ կապեր հաստատել Հայաստանի հետ: Անցեալ տասնամեակներուն, դասական-արանդական հաստատութիւններու միջնորդական դերը մեծապէս նահանջած է սփիւռքներու համայնքային կեանքին մէջ: Սակայն, հրատապային սկսած է դառնալ այս փափուկ ուժը համախմբելու անհրաժեշտութիւնը մնայուն եւ համակարգուած կառոյցի մը կամ կառոյցներու մէջ:

Սփիւռքներու փափուկ ուժը ամբողջութեամբ օգտագործելու եւ ամրապնդելու նպատակով, «տուփէն դուրս» մտածելը անգամ մը եւս ինքզինք կը պարտադրէ: Ոչ միայն այդ դասական մօտեցումները պէտք է վերատեսութեան ենթարկուին եւ «տուփէն դուրս» փնտռուին համաշխարհային հայ համայնքի կամ գլխագիր Սփիւռքի մը ստեղծման կարելիութիւնները՝ նորարարական մեթոտներով: Ստեղծագործ եւ ոչ-արանդական ռազմավարութիւններ որոնելով՝ սփիւռքը հաւանաբար կարենայ ազդեցութեան եւ հայկական պատկանելիութեան ու կապի նոր ուղիներ գտնել:


Սակայն, վստահաբար շատեր ոչ միայն պիտի ուզեն «տուփին մէջ» մնալ, այլեւ պիտի չթողուն որ ուրիշներ նաեւ «տուփէն դուրս» ելլեն ու տարբեր մտածեն: Հայկական արանդական պահպանողականութիւնը (կուսակցութիւններ, եկեղեցիներ, միութիւններ) պիտի փորձէ պահել իր «տուփին մէջ» մտածողութեան ձեւը եւ խոչընդոտել նորարարութիւնները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից մարտահրաւերները դիմագրաւել կարենալու համար: Կը տեսնենք արդէն, որ այս պահպանողականութիւնը ինչպէ՛ս նստած է տուփին կափարիչին վրայ եւ յառաջընթացի ամէն ելումուտ փակած: Թէ ի՞նչ «գանձեր» պահուած են հոն, միայն ապագան կրնայ օր մը յայտնաբերել:

Արդ, հայ ժողովուրդին համար «տուփէն դուրս» մտածելը ո՛չ միայն ընտրութիւն է, այլեւ անհրաժեշտութիւն մը մարտահրաւերները դիմագրաւելու եւ յառաջ երթալու համար: Նորարարական մօտեցումներ որդեգրելով քաղաքականութեան, տնտեսութեան, արհեստագիտութեան եւ ընկերային հարցերու մէջ, հայերը կը յաջողին շարունակելու տոկոնութեան եւ կացութիւններու յարմարելու իրենց դարաւոր արանդը: Ստեղծագործ մտածողութեան ճամբով կարելի է որոնել ու գտնել նոր կարելիութիւններ, խթանել ազգային միասնականութիւնը եւ ապահովել Հայաստանի ու հայ ժողովուրդին բարգաւաճ ապագան:



ԴՈՎՏ. ԶԱԻՆ ՄԱՐՐԼԵԱՆԻ «ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐԷՆ» ՀԱՏՈՐԸ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ



Դոկտ. Զաւէն Մարրլեան «Հայկազեան Հայագիտական Հանդէս»-ի քանի մը հատորներու, «Հիւսիսեան Հայագիտական Տարեգիրք»-ի, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի «Բանբեր Հայագիտութեան» հանդէսի, «Շիրակ» եւ «Կամար» պարբերաբերքերու ինչպէս նաեւ «Զարթօնք» ու «Արարատ» օրաբերքերու բացառիկ թիւերուն մէջ լոյս տեսած պատմագիտական ուսումնասիրական իր յօդուածները ի մի հաւաքելով մէկտեղած է «Հայոց Նորագոյն Պատմութեան Էջերէն (1915-2020)» խորագրեալ հատորին մէջ, որ հրատարակուած է հեղինակին նախկին աշակերտներէն Լոնտոնաբնակ գործարար ու բարերար Ռաֆֆի Մանուկեանի մեկենասութեամբ, «Սիփան» հրատարակչատուն, Պէյրութ, 2022, 240 էջ, որ կը ներկայացնենք

ստորեւ:

Այս հատորին՝ «Հայոց Յեղասպանութիւնը Եւ Բրիտանական Դիւանագիտութիւնը» խորագիրով առաջին գլուխը ցոյց կու տայ՝ մեծ պետութիւններու եւ մանաւանդ Մեծն Բրիտանիոյ շահամուտական կեցուածքները հայոց նկատմամբ: Ռուսիա պատրաստ եղած է հայոց պաշտպանութիւնը յանձն առնելու օսմանցիներու կողմէ գրաւեալ Հայաստանի արեւմտեան հատուածին մէջ, այն ալ անշուշտ մեկնելով իր սեփական շահերէն: Այս ընելով Ռուսիա պիտի ընդլայնէր դէպի արեւմուտք եւ շահագործէր երկրին բնական հարստութիւնները ու մղէր հայերը գործելու յօգուտ Ռուսաստանի շահերուն, զանազան ոլորտներու մէջ եւ մանաւանդ՝ լրտեսական:

Գալով Բրիտանիոյ, դոկտ. Զաւէն Մարրլեան այսպէս կ'ըսէ. «Բրիտանիա Մեծ Եղեռնը օգտագործեց որպէսզի իր կայսրութեան ժողովուրդներուն ցոյց տայ, թէ ինք կը կռուէր արդար պատերազմ մը եւ ոչ թէ պատերազմ՝ նոր հողային կցումներու նպատակով, նաեւ գործածեց որպէս միջոց ազդելու մինչեւ 1917 պատերազմի չմտած ԱՄՆ-ի հանրային կարծիքի վրայ, պատերազմական ճիգը խթանելու եւ վարկաբեկելու իր թշնամիները» (էջ 6): Մակայն եւ այնպէս հակառակ անզիպացի դիւանագետներու չքմեղանալու յարատեւ ճիգերուն, նախկին վարչապետ Լոյս ճորճ (1863-1945) 1938-ին լոյս տեսած «Ճշմարտութիւնը Խաղաղութեան Դաշնագիրներուն Մասին» խորագրեալ իր գիրքին մէջ հետեւեալը կը խոստովանի. «Եթէ մեր չարաշուք միջամտութիւնը կատարուած չըլլար, հայերու մեծամասնութիւնը 1878-ին Սան Սթեֆանոյի Դաշինքով դրուած պիտի ըլլար Ռուսական դրօշին պաշտպանութեան տակ... Բրիտանական կառավարութեան արարքն էր, որ անխուսափելիօրէն առաջնորդեց 1895-1897-ի, 1909-ի սարսափելի ջարդերուն եւ յոռեգոյնը՝ 1915-ի ողջակիզումին» (էջ 5):

Գիրքին Բ. գլուխը, որ խորագրուած է «Քեմալական Թուրքիոյ Յեղասպան Քաղաքականութիւնը Հայոց Նկատմամբ (1919-1942)», մանրամասն կերպով



կ'անդրադառնայ Մուսթաֆա Քեմալի կողմէ կատարուած Հայոց Ցեղասպանութեան շարունակութեան ու հայոց դէմ ոճրային արարքներուն: Մուսթաֆա Քեմալի կենսագրական կարգ մը գիծերէն բացի, դոկտ. Զաւէն Մարրլեան կը նկարագրէ անոր հակահայ գործունէութեան փուլերը: 1920-ին այս բռնատէրին ճնշումով թրքական կառավարութիւնը ազատ կ'արձակէ բոլոր այն թուրք մեղադրեալները, որոնք գործադրեցին հայոց բռնագաղթերն ու տեղահանութիւնը: Անկէ քիչ ետք Մուսթաֆա Քեմալ կը լուծէ «տեղահանութեան եւ այլ» հարցերու յատուկ Պոլսոյ կառավարութեան կազմած զինուորական ատեանը (էջ 10): Եւ տակաւին՝ ան բարձր պաշտօններու վրայ կը զետեղէ Հայոց Ցեղասպանութեան մասնակից, բրիտանացիներու կողմէ Մալթա արքայութեան նախկին իթթիհատականները: Հեղինակը այս յանցագործ-ոճրագործներու անունները կը յիշէ, որոնցմէ են.- Միտհաթ Շիւքրի Պլետա, Ալի Ֆեթիհ, Քեազիմ Օզալփ, տոքթ. Թեւֆիք Ռիշտի, Մուսթաֆա Նեճաթի, Փրօֆ. Թեւֆիք Սելիմ Սալամ, տոքթ. Թեւֆիք Սայտամ, Հալիլ Մենթէշէ, Ահմատ Մուհամմէտ եւ Հասան Թահսին Իւզէր (էջ 11-12):

Այսպիսով կը շարունակուին հայոց դէմ ոճրային արարքները Մուսթաֆա Քեմալի ձեռքով: Ան Հայաստանի արեւմտեան հատուածը եւ Կիլիկիա վերադարձած հայ բռնագաղթեալները կրկին բռնի գաղթի ճամբայ կը հանէ: Կը յարձակի առաջին Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն վրայ եւ կը գրաւէ Կարսը: Ատենի Վրաստանի Ա.Գ. նախարար Կոստանշվիլին հետեւեալը կը յայտարարէ.- «Գրաւեալ շրջաններու մէջ կորուստներն են՝ 30 հազար մեռեալ այր, 20 հազար վիրաւոր, 10 հազար սովէն մահացողներ, 5 հազար մեռեալ կանայք ու երեխաներ, 3 հազար գերիվարուած կիներ եւ երեխաներ» (էջ 13-14):

«Հայաստանի Հանրապետութեան Անկումը» խորագրեալ Գ. գլուխին մէջ, դոկտ. Զաւէն Մարրլեան պատմական եղելութիւնները նկարագրելէ ետք կը բացատրէ Հայաստանի առաջին հանրապետութեան անկման պատճառներն ու հետեւանքները: Ան մատնացոյց կ'ընէ մեծ պետութիւններու՝ Ռուսաստանի եւ Եւրոպայի դերերը Հայաստանի թողլքման մէջ, ուր կ'ըսէ. «Թուրքիան պէտք չունէր մտահոգուելու Եւրոպայի (որու դաշնակիցը կը նկատէր Հայաստանը) հետ յարաբերութիւնները սրելու վախէն: Եւրոպան իր շահերուն հետամուտ թողլքած էր Հայաստանը: Եւրոպական պետութիւններէն այդ օրերու մեծ տէրութիւն հանդիսացող Մեծն Բրիտանիոյ Անդրկովկասի ներկայացուցիչը, որ յայտարարած էր թէ Անգլիան «անգոր» էր Հայաստանի օգնելու, գաղափարը կ'ունենար ինկած Հայաստանի վիրաւոր մարմինն վրայէն, շահեր ապահովելու իր կայսերական պետութեան» (էջ 27):

Դոկտ. Զաւէն Մարրլեան Դ. գլուխին մէջ կը նկարագրէ բրիտանացի փոխգնդապետ Սթոքսի լրտեսած Բէկզատեան-Մոավեան հեռաձայնային խօսակցութիւնն ու անոր առընչուող հարցերը: Իբրեւ հետեւանք հեղինակը հետեւեալը կը նշէ. «Ճիշդ է, որ Մոսկուա թուրք ազգայնականներուն տեղի տուաւ, բայց վրացական հարցին մէջ (այսինքն Լոռիի «Չէզոք գօտի»ին), Խորհրդային Հայաստանի կողքին կեցաւ, քանի դեռ Վրաստան մենշեւիկ վարչաձեւ ունէր այդ շրջանին, զոր Մոսկուա կը փորձէր տապալել... Գալով Կիլիկիոյ թրքահայերուն վրայ կեդրոնանալու հարցին, այդ ալ յայտնի է: Լուրջ չէր մօտեցումը, ոչ ալ հետեւողական, հուսկ ապարդիւն: Փաստ՝ Լոզանի դաշնագիրը 1923-ին» (էջ 54):

Ե. գլուխին մէջ հեղինակը կը խօսի հայկական հարցերու վերաբերեալ գաղտնի տեղեկագրի մը՝ 1937-ին Բրիտանիոյ կողմէ Թուրքիոյ յանձնուած ըլլալու դէպքին մասին: Առանց խորանալու այդ տեղեկագրին բովանդակութեան մէջ կրնանք ըսել, թէ ան եղած է Արեւմուտքի մեծ դաշնակից՝ Թուրքիոյ օգտին եւ ի վնաս Խորհրդային Միութեան, հետեւաբար եւ Հայաստանի ու հայութեան: Դոկտ. Զաւէն Մարրլեան խօսելով այդ դէպքի ժամանակաշրջանին մասին հետեւեալը կ'ըսէ. «1930-ականներուն պառակտուած էր հայկական սփիւռքը, Խորհրդային Հայաստանի մէջ կը կիրարկուէին պերիական անարգ



ոճիրները, մինչ աշխարհ կը գտնուէր մտահոգիչ վիճակի մը մէջ: Առժամաբար, հայ սփիւռքի տեղի մը մտնուած էր հայոց ազգային դատը, բայց արթուն էր թուրքը» (էջ 58):

Դոկտ. Զաւէն Մարրլեան գիրքին յաջորդ՝ Զ. գլուխը կը յատկացնէ Նոր Զուղայի հայոց վիճակին եւ թիւին մասին Բրիտանական վաւերաթուղթի մը: Հեղինակը իր ուսումնասիրութեան ընթացքին կը նկատէ 1944 թուականին Պարսկաստանի մասին պատրաստուած ուսումնասիրութիւն-տեղեկագիր մը, որուն մէկ մասը կը կազմէ Նոր Զուղայի հայոց պարագան, ուր կան հետաքրքրական մանրամասնութիւններ (էջ 77-81):

Գիրքին Է. գլուխը յատկացուած է Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Վրաստանի հողային պահանջներուն եւ կը կրէ՝ «Մեծն Բրիտանիա Եւ Խորհրդային Հայաստանի Ու Խորհրդային Վրաստանի 1945-ին Կատարուած Հողային Պահանջքը» Վերնագիրը: Այս վաւերաթուղթին մասին տեղեկութիւններն ու հարցին զարգացման մանրամասնութիւնները կը տրուին էջ 82-112-ի մէջ:

Ը. գլուխը յատկացուած է Ռամկավար Ազտական Կուսակցութեան 8-րդ Ընդհանուր պատգամաւորական Ժողովի որոշում-բանաձեւերուն, որոնցմէ ելած յուշագիր մը ներկայացուած է մեծ պետութիւններուն, որուն վերաբերող վաւերաթուղթ մը՝ Անգլիոյ Տորէյն Օֆիսի՝ Արտաքին Գործոց նախարարութեան արխիւներու հայոց վերաբերեալ նիւթերուն մէջ գտած է հեղինակը: ՌԱԿ-ի այդ ժողովը գումարուած է 23 Հոկտեմբերէն 2 Նոյեմբեր 1946-ին, Գահիրէի բուրգերու ճամբուն վրայ վիլլա 13 կամ սթիւտիօ 13 կոչուած ապարանքին մէջ: Ժողովին մասնակցած են Ամերիկայի, Եգիպտոսի, Արեւմտեան Եւրոպայի, Յունաստանի, Սուրիոյ, Իրանի, Պաղեստինի եւ Անդրյորդանանի շրջանակներու լիազօր պատուիրակութիւնները:

Յաջորդ գլուխը՝ իններորդը, որ խորագրուած է «Հայաստանի Միջազգային-Քաղաքական Զարգացման Փուլերը (1920-1992)», կ'ընդգրկէ նշանակալից, ծանր եւ այլ բնոյթի դէպքեր եւ իրադարձութիւններ, ինչպէս՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ազգայնական կազմէն դուրս գալու հարցը, Խորհրդային Հայաստանի անկախանալն ու Հայաստանի Հանրապետութիւն վերանուանուիլը, ինչպէս նաեւ անոր միջազգային ճանաչումը:

Գիրքին մնացեալ մասը մեր օրերու եղելութիւններն են ազգային գետնի վրայ, մանաւանդ Հայկական Հարցի հոլովոյթը՝ Արցախի հարցի զարգացումներ, Հայոց Ցեղասպանութեան նշումներ, Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումներ եւայլն 2011-ին, 2012-ին, 2013-ին եւ 2014-ին, Հայկական Հարցի Հոլովոյթը Ցեղասպանութեան Հարիւրամեակին՝ 2015 եւ անկէ ետք՝ 2016-2020 (էջ 164-236):

Գիրքին իրաքանչիւր գլուխին էջատակի ծանօթագրութիւններէն զատ, անոր աւարտին ալ կը տրուին ծանօթագրութիւններ, ինչպէս նաեւ օգտագործուած աղբիւրներու ցանկեր յղումներով: Գիրքին վերջաւորութեան կը գտնենք հեղինակին՝ Դոկտ. Զաւէն Մարրլեանի կենսագրականը եւ հրատարակած գիրքերու ցանկը:

Պատմաբան Դոկտ. Զաւէն Մարրլեանի այս աշխատութիւնն ալ ինչպէս իր միւս գործերը, կը յատկանշուի բժախնդի պրպտումներու արդիւնք եղող ինքնուրոյն ուսումնասիրութիւններով, որոնք անպայման նորութիւն մը կը բերեն արծարծուած նիւթի ընդհանուր գիտելիքներուն վրայ: Կը շնորհաւորենք հեղինակը այս օգտաւէտ աշխատանքը ընթերցողին հասանելի դարձնելու համար:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԸՆԴԵՐՔԸ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ

ԱԻՕ ՊՕՂՈՍԵԱՆ



Անցեալ դարու կէտերէն սկսեալ, աշխարհին ծանօթ էին երկիրներ, որոնք ճանչցուած էին իբրև petrostate-ներ կամ թարգմանաբար՝ քարիւղ եւ կազ արտածող երկիրներ ինչպէս՝ Արաբական Էմիրութիւններ, Սէուտական Արաբիա, Իրան, Վենեզուելլա, Սովետական Միութիւն եւ ուրիշներ: Թէ անոնք որքա՛ն կը մնան այդ անունով ճանչցուած՝ կախեալ է այն իրողութենէն, թէ որքա՛ն ժամանակ քարիւղ եւ կազը կը շարունակեն մնալ այդ երկիրներուն հարստութիւնը կամ այդ պաշարները կը

շարունակեն մնալ աշխարհի հիմնական ուժանիւթերու աղբիւրները: Այդ աղբիւրներէն կախեալ են նաեւ աշխարհաքաղաքական յարաբերութիւնները, ազդեցութեան գոտիները եւ գերպետութիւններու քաղաքականութիւնը:

Մէկ կողմէ աշխարհի բնակչութեան աննախընթաց աճին եւ միւս կողմէ տնտեսութիւններու զարգացումին պատճառով, մոլորակը կ'ենթարկուի տաքացումի եւ ապականման, որ վտանգ կը սպառնայ մթնոլորտային համակարգին՝ պատճառելով երաշտ, հեղեղումներ, ջուրերու շոգիացում, սառցալեռներու հալում, ծովերու մակարդակի բարձրացում, ծովափնեայ քաղաքներու ընկղմում եւ ընդհանրապէս մարդկութեան գոյութեան:

Այս վտանգաւոր հեռանկարը աւելցաւ 2022ին սկսած ռուս-ուքրանական պատերազմին պատճառով կազի եւ քարիւղի հոսքերու արհեստական կրճատման, որ գիտնականները մղեց այլընտրանքային ուժանիւթի աղբիւրներու որոնման եւ բազմազանեցման, որ սկսած է դրական արդիւնք տալ, նոյնիսկ եթէ շատ սկզբնական եւ մանր քայլերով: Այլեւս ունինք այլընտրանքային կարգ մը աղբիւրներ, ինչպէս՝ հովայինը, ջրայինը, միջուկայինը, արեւայինը եւ այլն, որոնք տակաւին մարդկութեան պահանջին միայն չնչին տոկոսը կը բաւարարեն:

Այս եւ այլ նորարարական աղբիւրներու առաւելագոյն օգտագործման պարագային, աշխարհաքաղաքական կարեւորութիւն ունեցող յենակէտերու անխուսափելի փոփոխութիւն մը ի յայտ պիտի գայ եւ պիտի ունենանք electrostates



(Ելեկտրապատկաններ) կոչուող երկիրներ, որոնք այդ նոր ուժանիւթերու անհրաժեշտ նիւթերու հայթայթողները պիտի ըլլան:

Մոլորակի հարստութիւնները դժբախտաբար հաւասարապէս չեն բաժնուած եւ բոլոր երկիրները բախտաւոր չեն: Լաւագոյն օրինակները միջինարեւելեան երկիրներն են, որոնք հազարամեակներ մնալով աննշան, միայն քսաներորդ դարու սկիզբը քարիւղի եւ կազի ուժանիւթի վերածման արհեստագիտութեան զարգացման առընթեր յայտնուեցան աշխարհի կարեւորագոյն երկիրներու շարքին՝ շնորհիւ անոնց անսպառ պաշարներու յայտնաբերման:

Միացեալ Նահանգները, որ քարիւղ ներածող երկիրներէն էր, միայն տասնամեակ մը առաջ, այսօր shale revolution կոչուող նորարարութեան իբրեւ արդիւնք, ներածող երկիրէն դարձաւ քարիւղ արտածող երկիր մը:

Ներկայիս, Չիլիի սահմաններուն մաս կազմող հիւսիսային Աթաքամա (Atacama) անապատը իր ծովեզերեայ շրջանով, իր Անթոֆակոսթա (Antofagosta) նահանգով եւ համանուն քաղաքով, մաս կը կազմէր Պոլիվիային: Շրջանը հարուստ էր «քալիչէ» (caliche) կոչուող սպիտակ նիւթով, որ «կուան» (guan) կոչուող թռչուններու արտաթորանքը, որ հազարամեակներու ընթացքին հաւաքուած էր այդ տարածքին եւ հանդիպակաց անմարդաբնակ փոքր կղզիի մը վրայ: Տասնիններորդ դարու վերջերուն, յայտնի դարձաւ, որ այդ կղզիանքը կը պարունակէր նիտրատներ (nitrates), որոնք թնդանօթներու արկերու հիմնական նիւթերն են: Շրջանը նաեւ օժտուած էր պղինձի հարուստ հանքերով՝ դարձեալ կարեւոր հանքանիւթ մը:

1879ին, Չիլիի բանակը Պոլիվիոյ հետ հարկային վեճի մը պատրուակելով, ծովէն ներխուժեց շրջանը եւ պարտութեան մատնելով վերջինը, տիրացաւ շրջանին, անոր նիտրատներու եւ պղինձի հանքերուն՝ այդ օրուրէն սկսեալ գրկելով զայն դէպի ծով ելքէն:

Այսօր, մարտկոցները ինքնաշարժներու համար քարիւղի փոխարէն անհրաժեշտ էլեկտրական շարժիչներ են: Ելեկտրական ինքնաշարժներու (EV) մարտկոցներուն (batteries) համար հիմնական նիւթը «լիթիւմ» (lithium) է, որմով Չիլին աշխարհի ամէնէն հարուստ երկիրներէն է, Արժանթինի եւ Աւստրալիոյ հետ:

Հասկնալի է որ Չիլիի կարեւորութիւնը որքանով աւելցած է: Քոնկոն երկրագունդի վրայ գրեթէ միակ երկիրն է, ուր «քոպալթ» (cobalt) նիւթը կը գտնուի (աշխարհի պաշարին 70 առ հարիւրը), որ, լիթիումի կողքին, անհրաժեշտ է մարտկոցներուն համար:



Մակայն, երկրի մը զարգացման համար միայն ընդերքի հարստութիւնները բաւարար չեն: Անոր համար նախապայման է ժողովրդավարութիւնը, կաշառակերութեան եւ փտածութեան բացակայութիւնը: Նաեւ համաշխարհայնացման ընձեռած ճանապարհներու ապահովութիւնը եւ երկիրներու գիտական եւ կրթական մակարդակը շատ կարեւոր են: Արդի մեր սպառողական եւ ընդհանրապէս բոլոր պահանջները այնքան բարդ են, որ չկայ երկիր մը, ուր կարելի ըլլայ արտադրանք մը սկիզբէն մինչեւ վերջ պատրաստել: Որեւէ սարք կամ առարկայ քանի մը երկիրներ կը շրջագայի՝ իր վերջնական տեսքը ունենալու համար: Օրինակ մը տալու համար՝ յիշենք Թայուանը, որ ոչ մէկ հում նիւթով աչքի կ'իյնայ, սակայն, աշխարհի համար կարեւոր երկիր է կիսահաղորդիչներու արտադրութեան մէջ, առանց որոնց մենք բջիջային հեռաձայներ եւ համակարգիչներ չենք ունենար: Իսկ Չինաստան, որ հեռաձայններու արտադրութեան մէջ գերպետութիւն է Քորէայի, Հոլանտայի եւ Ճափոնի կողքին, կիսահաղորդիչներու (semiconductor chips) գաղտնիքին տակաւին չէ տիրացած, մինչ Ամերիկայի Սիլիքոն հովիտին մէջ անոնց ծրագրաւորումը եւ ձեւաւորումը կը կատարուի, սակայն անոնց անհրաժեշտ «քոպայլթ»ը Քոնկոյէն կը ներածուի, լիթիումը Չիլիէն կամ Աւստրալիայէն, մաքուր «սիլիքոն»ը սպակեայ գերբարակ խողովակներուն (nanotubes) համար Անգլիոյ հիւսիսը գտնուող աւազի հանքերէն, պղինձը Արժանթինէն եւ այսպէս հարիւրաւոր այլ մանրամասնութիւններ բազմաթիւ այլ երկիրներէ:

Մենք կրնանք արեւին տակ մեր արժանի տեղը ունենալ զարգացած ժողովուրդներու ընտանիքին մէջ: Կրնանք, եթէ գիտակցինք, որ հում նիւթերով աղքատ երկիր ենք, մեր առաւելագոյնը ընենք կրթութեամբ գերազանց ըլլալու, որպէսզի արտադրողական համաշխարհային ցանցին մէջ մեր ներդրումը ունենանք, ինչպէս Իսրայէլ յաջողած է ընել նոյնիսկ մեր երկրէն աւելի աղքատ բնութեամբ տարածքի մը վրայ:

Այդ կարեւոր առաքելութեան համար պէտք է լծուինք կրթութեան անյետաձգելի գործին. պարտադիր:

22/7/2024



ՎԱՐՂՈՒՅԻ ՔԱԼԱՆԹԱՐ «ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԲԱՆՏԻ ԿԻՆԵՐՈՒՆ ԲԱԺԻՆԸ» ԼԵՌՆԱ ԷՔՍԷՔՃԻՕՂԼՈՒԻ ՑԱՌԱՋԱԲԱՆՈՎ



Վարդուհի Քալանթարի «Կեղրոնական բանտի կիներու բաժինը գործը հրատարակութիւնն է պոլսահայ Արագ հրատարակչատան, որ իր նիւթը վերարտադրած է Հայկանուշ Մառքի «Հայ կին» կանանց պարբերաթերթի 1920 եւ 1921 տարիներուն հրատարակուած թերթօններէն: Պատմաբան եւ պատմութեան փրոֆէսոր Լեռնա Էքմէքճիօղլուի կը պատկանի հատորին յառաջաբանը: Ան որպէս ֆեմինիստ անխոնջ ճիգով լծուած է, իր գործակիցներով միասին, հայ կին

ղէմքերու, գրողներու եւ հասարակական գործիչներու ծանօթացման եւ անոնց գրական գործերու հրատարակութեան թէ՛ հայերէնով, թէ՛ անգլերէնով:

Սոյն հատորին ընթերցումը զիս լեցուց ընդվզումով եւ հիասթափութեամբ:

Ինչպէս կարելի էր պատկերացնել համալսարանականի մը եւ մտաւորականի մը՝ Վարդուհի Քալանթարի գոյակցութիւնը բանտի մէջ գտնուող թուրք ընկերութեան ամէնէն խոցելի խաւին հետ: Բանտի մուտքին հետաքրքիր բանտարկեալներու խումբ մը եկած էր դիտելու զինք եւ իր մայրիկը, որոնք զգալապէս յայտնի էին իրենց դասակարգային բարձր դիրքով: Շուտով կը սկսէր բանտարկեալներու երեկոյեան յայտագիրը ընթրիքով եւ խրախճանքով: Խոշոր մարմնով կին մը կը պարէր: Հեղձուցիչ մթնոլորտ մը կը տիրէր ու Վարդուհի իր գլուխը կը դնէր մօր ծունկերուն վրայ ու կը հեկեկար մանուկի մը նման: Մինչ պարուհին իրենց առջեւէն կ'անցնէր, իրենք զիրկընդխառնուած, սրտերը իրար սեղմած, նուաղած վիճակի մէջ էին: Վարդուհի կը պատկերացնէր իր հայրը մեկուսացած խցիկի մը մէջ, սպիտակահեր, գլուխը դրած յարդէ բարձի մը վրայ եւ չոր տախտակի վրայ երկարած իր մարմինը: Երեք օր ետք է որ հայ բանտարկեալ Ազապի կ'այցելէ զիրենք: Ան տեսնելով որ հայ նոր բանտարկեալները բորոտներու ամէնէն աղտոտ եւ վերքերով ու ոջիլներով լեցուն սենեակը տեղաւորուած են, շուտով կարգադրութիւն կ'ընէ պատասխանատուին Սինեմէնի արտօնութեամբ եւ նոյն երեկոյեան իսկ անոնք «քիպարներու» հայ լայֆ սենեակը կը փոխադրուին: Այնտեղի բնակիչներն էին մտաւորականները. հոճա-հանըմները՝ որոնք քուրան կը կարդային, մէքթայլիները՝ որոնք նամակ կը գրէին ուրիշներուն համար, արթիսթները՝ որոնք կ'երգէին եւ կը պարէին, ու քանի մը սեւամորթներ, որոնք անուն շահած էին իրենց կռուագանութեամբ:

Բանտի ներքին կեանքի գլխաւոր դերակատարներէն հանդիսացող քիւրտ Սինեմը, հակառակ իր կոշտութեան եւ սզեղութեան, համակրելի էր: Իր խօսելաձեւը խանդավառութիւն կը ստեղծէր շուրջիններուն մօտ: Ըստ պաշտօնի, Գուճը



հանրմը պէտք էր ըլլար առաջին դէմքը, բայց ան հեղինակութիւն չունէր: Մինէմ բոլորին մօտ ստեղծած էր այն պատրանքը, որ ինք էր բանտին գլուխը: Իր դիրքը պահելու համար ան կրնար նոյնիսկ բռնութեան դիմել՝ օգտագործելով իր բռունցքն ու ոտքերը: Մինէմին քաղաքականութեամբ ալ կը զբաղուէր: Ան հայերուն չափ կ'ատէր թուրքերը, մօտէն ճանչնալով անոնց բարբարոս վարքն ու բարքը: Ինք էր որ Վանի ինքնապաշտպանութեան յաղթանակի լուրը տուաւ Վարդուհիին: Զայն տխուր տեսնելով՝ ուզեց ոգէտորել զինք, ըսելով որ հայերու դրօշակը կը ծածանէր Վանի մէջ, ինք ինչու ուրախ չէր, եւ համբուրեց զայն իր ճակատէն: Մինէմին

պատմեց նաեւ արեւելեան ճակատի դէպքերուն մասին եւ Վարդուհի յափշտակութեամբ մտիկ կ'ընէր: Կռուելու եւ յաղթելու աստուածային ուրախութեամբ կը լեցուէր իր հոգին: Ան կը խորհրդածէր «Վատ մեր թշնամին, ինչպէս վատ է ինքը կեանքը, վայ ընկճուողին: Անոր ամէն մէկ հարուածին պէտք է պատասխանել կամքի ու կորովի նոր պահեստիներով ու քանի մը հարուածէ վերջ ան կը դառնայ անուշ ու կակուղ ոչ միայն պարտեալ, այլ՝ զինակից Ահաւասիկ յաղթանակին գաղտնիքը»:

Քալանթարին հոգին կերտուած էր յեղափոխական գաղափարներով եւ բանտի այս տժգոյն պայմաններուն մէջ իսկ անոր հոգին կը բոցավարէր պայքարի եւ վերջնական յաղթանակի տեսիլքով: Այս հոգեվիճակին մէջ ան պատրաստ էր երթալու դատավարութեան, կրնային կանչել զինք: Կարճ ժամանակ ետք կը կանչուի: Մամային հետ կ'երթան երկու ժանտարմներու հսկողութեամբ: Նոյն ձեւով հայրիկը կը քալէ ազնուական հասակով հանդարտ ու անվրդով: Վարդուհի կ'ուզէ արժանի ըլլալ իր ծնողներուն: Դատավարութեան ատեն կը խօսի պարզ ու անկեղծ քանի որ դատապարտելի չէր իր արարքը: Դահիճները թող որոշեն իր պատիժը: Կը խնդրէ որ իրեն ընեն ինչ որ կ'ուզեն, բայց հայրիկին խնայեն, ան անմեղ է ու գերեզմանին մօտեցած: Իսկ հայրիկը կ'ուզէ իր աղջիկը ազատել: «Ան նամակները գրած ատեն անչափահաս էր», կ'ըսէ եւ կը խնդրէ զինք դատապարտել իր աղջկան փոխարէն: Դատավարութեան արդիւնքը կ'ըլլայ հօր եւ դստեր հինգ տարուան ազատազրկումն ու մայրիկի ազատութիւնը: Վարդուհի քաջութեամբ կ'ընդունի դատարանի այս վճիռը եւ կը կազմակերպէ իր կեանքը, այնպէս մը որ ան կարենայ օգտակար ըլլալ բանտի առողջապահական անձնակազմին: Բժշկապետը կը յանձնէ իրեն հատոր մը թարգմանելու գերմաներէնէ, նուիրուած բանտային առողջապահութեան վերակազմակերպման: Այս գործը զինք շատ ուրախ եւ զբաղ կը պահէ:



Աճեմ Աթիյէն պարսիկը կը միանար բանտի բնակիչներուն յարաբերաբար աւելի ուշ: Ան միջնորդ էր եւ ծխախոտի մաքսանենգ, նախկին պոռնիկ, զինուոր եւ հրամանատար: Աթիյէին գալովը վերջ գտաւ «Սինեմեան» շրջանը եւ սկսաւ

«Աթեական» ժամանակաշրջանը, որ կը յատկանշուէր էնթրիկներու տիրապետութեամբ: Անոր առաջին թիրախը Սինեմին էր, որս կը հետապնդէր մեծ զգուշաւորութեամբ: Իր ամենագօրաւոր զենքը դրամն էր:

Անօթիներու եւ կուշտերու բանակ մը կը պահէր իր շուրջը եւ զանոնք կը շահագործէր իր նպատակներուն համար: Վարդուհիին եւս կ'օգտագործէր օրական քարթեր եւ նամակներ գրել տալով անոր եւ սուտ խոստումներով, որ զայն պիտի վարձատրէր իր ունեցած ոսկիներով:

Երգի-պարի երեկոյի մը ընթացքին, երբ Սինեմին լազերու լեռնական պարը կը պարէր ու բանտարկեալները ուրախ մթնոլորտի մէջ էին, Աթիյէն յետին մտադրութեամբ մը սրահէն դուրս կը սպրդի եւ պատժուած արաբ Ֆաթիմային մօտ կ'ուղղուի: Շատ չանցած կը վերադառնայ զգայացունց լուրով մը, որ Ֆաթիման անձնասպանութիւն կը փորձէ գամ կլլելով: Ան կ'ըսէ, թէ ինք ամէն ինչի դիմած է, սակայն չէ կրցած տարհամոզել Ֆաթիման, որ հրաժարի իր մտադրութենէն: Իսկոյն զայն կը բերեն սրահ եւ ձեռքէն դժուարաւ կ'առնեն գամերը: Առիթը յարմար նկատելով, Աթիյէ կը սկսի բամբասել Սինեմէն, որ Ֆաթիմայի մրցակիցն էր

բանտապահ Իպրահիմի հանդէպ արտայայտուած սիրոյն: Սինեմին լսելով Աթիյէի բամբասանքները իր մասին, կը պատրաստուի հարուածելու նենգամիտ կնոջ, բայց կը խնայէ անոր իր ձերմկած մագերուն համար: Այս բոլորը կը հասնի բանտի պատասխանատուներուն ականջին, որուն հետեւանքով Իպրահիմ կը ղրկուի այրերու բանտը ծառայութեան եւ բանտապետ Նէշատ Փէիլվանը աղուոր ծեծ մը կը քաշէ Սինեմէին ու կ'արտաքսէ զայն պարտէզ որպէս պատիժ: Հոն եղած ատեն ան կը սկսի բարձրաձայն անարգել բանտի պատասխանատուներն ու թրքական կառավարութիւնը: Կին բանտարկեալներն ալ անգութ կերպով զինք կը ծաղրեն: Այս բոլորին պատճառ հանդիսանալէ, Սինեմէն վարկաբեկելէ ու բարոյագրկելէ ետք, Աթիյէի միջամտութեամբ անոր հանրասրահ վերադառնելու արտօնութիւն կը շնորհուի: Ահա Աթիյէի քանդիչ նենգամտութեան մէկ ապացոյցը:

Հակառակ անոր որ Վարդուհի կը գարշէր Աթիյէէն, ան կ'ընդունի երթալ անոր մահուան սնարին՝ կատարելու անոր վերջին պահանջքը: Աթիյէն խնդրած էր իրմէ Մէքքէի «ապու



զեմբա՞ն» կոչուած հեղուկը բերելով կաթեցնել անոր շրթունքներուն, եւ արտասանելու «հէլալ իթտիմ» բառերը: Այս բառերը մեռնողին իրեն հասցուցած չարիքները ներելու եւ ունեցած պարտքերը ջնջելու կը ծառայէին: Բացի պարտքեր կուտակելէն, Աթիյէ իր ձեռքէն եկածը չէր խնայած իր գրգռիչ լեզուով չարիք հասցնելու Վարդուհիին: Եթէ բարի բժշկապետի պաշտպանութիւնը չըլլար, կարելի չէր պատկերացնել Քալանթարի կեանքը «ատելութեան ու ֆանաթիզմի այդ ամենէն բորբոքած շրջանին, թշնամի ցեղին ամենէն ցեխոտ խաւին մէջ»: Բժշկապետը առանձին սենեակ պահանջած էր որ տրուի Վարդուհիին եւ հարկ եղած յարգալից վերաբերմունքը պարտադրուի այս բարձր մտային եւ ընկերային դիրք ունեցող բանտարկեալին, թէ՛ բանտի պատասխանատուներուն եւ թէ՛ մնացեալ բանտարկեալներուն կողմէ:

Ընդունելութեան օրը մեծ ոգեւորութիւն կ'արտայայտէին բանտի բնակիչները: Վարդուհիի դէմքը թէեւ պրկուած ու մտահոգ արտայայտութիւն մը կ'ունենար իր անհամբերութեան պատճառաւ: Կը հագուէր խնամքով, մազերը ու խոպոպները վիզին թափած, ան ջղուտ կերպով կը քալէր բակին մէջ: Յանկարծ իր անունը կը հնչէր. «մատմազէլին» մայրը եկած է եւ ահա մայրիկն ու մօրաքոյրը կու գային զինք այցելելու ճերմակեղէններու ծրարներով եւ ուտելիքներու պայուսակներով: Ինչ մեծ ուրախութիւն էր իրեն համար այս շաբաթական այցելութիւնները, որոնք իր բանտի կեանքը տանելի կը դարձնէին: Ուրիշ ուրախութիւն մը եւս ուներ Վարդուհի, հայրիկին հետ հանդիպումներն էին անոնք, այրերու բանտին մէջ, շաբաթը երկու անգամ:

«Մատմազէլը» պապային կ'երթայ, կ'ըսէր բանտապահը ու Վարդուհի կը հասնէր բանտին դուռը այնքան արագ եւ խելայեղ: Այս առանձնաշնորհումը իրեն տրուած էր որպէս վարձատրութիւն բժշկապետին համար կատարած իր թարգմանութեան համար: Այս տեսակցութիւնները հայրիկին հետ կարճ կ'ըլլային բանտի քարտուղարութեան սենեակին մէջ եւ հսկիչներու ներկայութեան: Խօսակցական լեզուն հայերէն կամ թրքերէն էր: Վարդուհիին համար իր բանտի կեանքի երկուքուկէս տարիներու ամենէն երջանիկ ու իմաստալից պահերն էին ասոնք անկասկած:

Քարավանաները zinc-է շինուած կլոր, մեծղի կաթասներ են, որոնք երեկոյեան կը բերուէին բակը, լեցուած անգոյն հեղուկով մը, որուն անախորժ հոտը կը տարածուէր ամենուրեք: Հսկայ շերեփ մը ձեռքին, Գոլճի հանըմը եւ Ալի Էֆէնտին կը բաժնէին կաթասային մէջ գտնուող խաշուած միսի ընթրիքը: Օգնականուհի Ֆերիտէն պնակները կը շարէր քարավանաներու շուրջը եւ խաշուած միսերը փոքր կտորներու կը վերածէր: Բանտարկեալները ամենազօր շերեփին առջեւ յարգանօք կը կանգնէին: Այս հանդարտ մթնոլորտը երկար չէր տևէր ու յանկարծ կը սկսէր կռիւը եւ Գոլճիին շերեփը կ'իջնէր



կռուողներու ուսերուն: Ոմանք իրարանցումէն օգտուելով կը փախցնէին քարավանայի միսին լաւագոյն կտորները: Կռիւր կը շարունակուէր մինչէւ բաժնելու բան չմնար, որմէ վերջ բոլորը իրենց որջերը կը մտնէին:

Բանտի գիշերային կեանքը կը սկսէր երբ բոլոր կարգի ուտելիքները հասած կ'ըլլային բանտարկեալներուն: Անոնք կը ճաշակէին մեծ ազահութեամբ քարավանային «փռասան» ու նպարավաճառին «թահին-պէքմէզը»: Կիները իրենց գլուխները ծածկած կը մնային այր մարդոց ներկայութեան: Շուտով կը սկսէր երեկոյթը: Կ'երգէին հայրենասիրական մարշեր, սիրային խմբերգներ եւ դազէլներ, քլասիք պարը (չիֆթէ թելլին) գէյպէկ եւ լազ օյուն, որոնք նորագոյն կամ ֆանթեզի պարերուն կը համապատասխանեն, հօրան պարեր բացազանչութիւններով կը վերջանային: Խմբերգները արաբ Ֆաթիման կ'առաջնորդէր, Մենիհա հանըմ եւ Այիշէն դազէլներ կ'երգէին խոր «ախ»եր քաշել տալով ներկաներուն: Իսկ Աթիյէ անձամբ կ'առաջնորդէր հեյամուլները եւ կը մասնակցէր խոշոր մարմինը ցնցելով մինչէւ շունչին կտրիլը: Երեկոյթները կէս գիշերին կը վերջանային, իսկ պարահանդէսները, ուր Գուլճի հանըմ եւս ներկայ կ'ըլլար Աթիյէի հրաւերին պարտադրանքով, կը տւէր մինչէւ առաւօտ: Քնանալ փափաքողներուն վիճակը շատ անբաղձալի կ'ըլլար: Խրախճանքին ընթացքին յաճախ գինով կտրիճներէն մէկը բռունցքի հարուածով մը կը փշրէր պատուհանի մը ապակին: Ուրիշներ պնակներ եւ գաւաթներ կը կտորէին: Օր մըն ալ փախստականներ երեւացին որոնցմէ վախնալով կիներ Վարդուհիի եւ Գուլճիի սենեակը խուժեցին: Մեծ իրարանցումէ մը ետք ի վերջոյ պարզուեցաւ որ անոնք իրենց փախուստը կը կազմակերպէին եւ նպատակ չունէին կին բանտարկեալներուն վնաս հասցնել:

Բանտարկեալները բժիշկներուն եւ դեղագործներուն ամէնօրեայ այցելութիւնը կ'ընդունէին: Հիւանդանոցը թէւ կը մնար անոնց հոգածութեան գլխաւոր առարկան: Առատօրէն դեղ կը բաշխուէր հիւանդներուն: Բժիշկները սենեակներն ալ կ'այցելէին ու մասնաւորաբար մտահոգ էին բորոտներու սենեակով: Անոնք ծածկուած էին վերքերով եւ ոջիլներով: Բժշկապետը ամէն շաբաթ բաղնիք կը դրկէր զանոնք եւ անոնց դեղերը կ'ապահովէր: Կիները բժշկապետին Զաթի պէլին նուիրուած երգեր յօրինած էին եւ կ'երգէին օրն ի բուն, մանաւանդ անոնց մուտքին եւ ելքին առիթով: Դեղագործները համաճարակներու ատեն յաճախ կու գային ջերմաչափ դնելու կամ ներարկումներ կատարելու համար: Հիւանդները կը բուժուէին եւ ամենամեծ համաճարակներու ատեն իսկ որեւէ մահ չպատահեցաւ, բացի Աթիյէէն, որ արդէն երիկամունքի լուրջ խնդիր ուներ եւ զոհ գնաց բժաւոր ժանտատենդին:

Ըստ Լեոնա Էքմէքճիօղլուի յառաջաբանին միջոցաւ փոխանցուած տեղեկութիւններուն, Վարդուհի Քալանթար դատապարտուած էր բանտարկութեան Լոզանի համալսարանէն իր ծնողաց գրած նամակներու հիման վրայ: Նամակներու կողքին



ըրկած էր նաեւ ամփոփումը հայ գրող եւ բանաստեղծ Ռուբէն Սեւակի տուած քաղաքական խորքով եւ հակաթուրք բովանդակութեամբ դասախօսութեան Հայ ուսանողական միութեան: Վարդուհի պատմութեան եւ գրականութեան ուսանող էր Լոզանի համալսարանին մէջ եւ ազդեցութեան տակ գտնուած էր իր դասախօսին՝ գրագէտ Աւետիս Ահարոնեանին: Նաեւ շրջապատուած ըլլալով հայ ուսանողներով, աւելի ան կը մօտենայ յեղափոխական գաղափարախօսութեան: Վարդուհի իր հօր միջոցաւ ալ ծանօթ էր Հայ դատին, որ կ'ընդգրկէր հայկական գաւառներու բարեկարգումն ու անկախութիւնը: Վարդուհի կը հաւատար, որ իսկական յեղափոխականի քաջութեամբ պէտք էր դիմագրաւել իրեն պարտադրուած պատիժը: Ան կը յիշէր յեղափոխականները, որոնք իրենց կեանքը զոհած էին յանուն հայրենիքի: Իր բանտարկութիւնը որքան փոքր էր անոնց զոհաբերութեան դիմաց: Իր նամակները անկասկած կ'արտայայտէին իր այս զգացումներն ու մտածողութիւնը եւ կը դառնային պատճառ իր դատապարտութեան: Հայրը կը դատապարտուէր իր եղբօր Տոքթ. Յովհաննէս Քալանթարի եւ գրող ու ղեկավար Աւետիս Ահարոնեանի հետ ունեցած ազգայնական եւ հակաթուրք բովանդակութեամբ նամակներու պատճառաւ: Դատավարութեան ատեն Վարդուհի քաջաբար կը պաշտպանէր իր տեսակետերը, թէ իր նամակները միտքեր կ'արտայայտէին պարզապէս եւ անոնք գործի եւ արարքներու չէին վերածուած: Ան կ'աւելցնէր, որ եթէ թուրքերը իրաւունք ունէին հայրենասէր ըլլալու, նոյն իրաւունքը եւ ազատութիւնը ունէին հայերը: Հայրը իսկոյն, սարսափահար իր աղջկան համարձակ արտայայտութենէն, կը միջամտէ, թէ իր աղջիկը անչափահաս է, երիտասարդ ու դիւրագգաց, թող զինք դատապարտեն անոր արարքին համար: Իսկ աղջիկը կը պնդէր, թէ հայրը տարիքոտ է եւ պէտք է ազատութեան մէջ ըլլայ, ինքը պէտք է դատապարտուի փոխարէնը: Երկուքուկէս տարուան բանտարկութենէ ետք, Քալանթարեաններ հայր եւ դուստր ազատ կ'արձակուին հօր՝ Դաւիթի ունեցած ռուսական քաղաքացիութեան շնորհիւ, որ շատ հաւանաբար անցած էր նաեւ իր դստեր:

Վարդուհի Քալանթարի բանտէն արձակուիլը կը զուգադիպի Օսմանեան կայսրութեան պարտութեան 1918 թուին եւ դաշնակից երկիրներու կողմէ մայրաքաղաքի գրաւման: Վերապրողներու օգնութեան միութիւններ, քաղաքական կազմակերպութիւններ եւ մամուլը կը ծաղկին այս շրջանին: Վարդուհի հիմնադիր կը հանդիսանայ Հայրենիքի օգնութեան միութեան Պոլսոյ մասնաճիւղին: Մօրը հետ Հայ կանանց ընկերակցութեան (ՀԿՄ) ֆեմինիստական կազմակերպութեան հիմնադիր անդամ կը դառնայ: Հայ Կարմիր խաչի նախաձեռնութեամբ հաստատուած հանգանակութեան կ'օժանդակէ հանրապետութեան բանակին, որ կը պատերազմէր քեմալական բանակին դէմ: Նոյն ժամանակաշրջանին մէջ կը սկսի իր գրական գործունէութիւնը: Հայկանուշ Մառքի հրաւերով կը թղթակցի «Հայ Կին» պարբերականին, որ ՀԿՄ-ի օրկանը կը հանդիսանար: Այստեղ կը ստորագրէ յօդուածներ եւ



«essay»- ներ, սակայն բանտի յուշագրութիւնն էր որ իրեն համբաւ ապահովեց մտաւորական եւ ազգային շրջանակներուն մէջ:

Վարդուհի Քալանթար իր մօր մահէն ետք 1921-ին, վերջնականօրէն կը հաստատուի Ամերիկա 1922 թուին, ուր կը շարունակէ իր գրական ասպարէզը: Հայերէնով եւ անգլերէնով բազմաթիւ գործերու հեղինակ կը դառնայ: Կ'ամուսնանայ 1923-ին մտաւորական Զաւէն Նալպանդեանի հետ եւ երկուքով կ'որդեգրեն «Զարեւանդ» գրչանունը: Որպէս համահեղինակներ կը հրատարակեն «Միացեալ անկախ Թուրանիա կամ ինչ կը ծրագրեն թուրքերը» քաղաքական ուսումնասիրութիւնը:

Վարդուհի Քալանթարի «Կեդրոնական բանտի կիներու բաժինը» ճշմարիտ վաւերագրութիւնը մաս կը կազմէ Օսմանեան բանտի առօրեային: Շատ զարմանալի է որ 20 տարեկան երիտասարդուհի մը, Վարդուհի, այնքան համարձակութեամբ ներկայացուցած է բանտարկեալ կիներուն ամենախրթին խառնուածքը, իրենց բարոյականութեան մինչեւ խորը տիղմին մէջ թաթախուած անհատականութիւնը եւ դրամասիրութեան պապակով չյագեցած իրենց շաղուածքը: Ան, լաւատեղեակ ըլլալով թրքերէնին, կը ստեղծէ հարազատ վերարտադրութիւնը անոնց էութեան: Վարդուհի գիտէ իրենց պարը, երգերը, խմբերգները, դազելները ու զիրենք կը ներկայացնէ այդ պատուանդանին վրայ: Անոնք բացառիկ սիրով կապուած են իրենց ժողովրդական բարքերուն, աւանդոյթներուն, ու Վարդուհի լաւատեղեակ է անոնց: Արձակ գեղարուեստական գրականութեան նմոյշ մըն է այս գործը եւ այն ծանր տարիները, որ Վարդուհի Քալանթար անցուց բանտին մէջ գէթ արժեւորուեցան սոյն ստեղծագործութեամբ:

ԱԶԱՏՈՒՀԻ ՄԻՄՈՆԵԱՆ

30/8/2024



ՏԵՍԱԿԷՏ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԵՏՈՒԹԻ՞ՒՆՆ Է

Յակոբ Միքայելեան

30 Օգոստոսի, 2024. ԱԶԳ շաբաթաթերթ



Վերջերս յաճախ կը լսուի պետական լրատուամիջոցներէն «Հայրենիքը պետութիւնն է» լրզունգը: Որո՞նք չքննող գաղափառն է, չեմ գիտեր, սակայն երբ սկսաւ կրկնուիլ, հարցը լուրջի առի: Առանց խորը թափանցելու եւ հասկնալու, թէ ի՞նչ յետին միտք թաքնուած է այդ գոյգ մը բառերու ետին, մարդիկ կրնան անտարբերութեամբ անցնիլ անոր մօտէն, եւ

նոյնիսկ կրնան նաեւ իւրացնել եւ օգտագործել հոս ու հոն:

Հայրենիքը՝ հայրենիք է, պետութիւնն ալ՝ պետութիւն: Ասոնք նոյն բաները չեն, նախ՝ հայրենիք կ'ըլլայ, ապա անոր վրայ պետութիւն կը կառուցուի: Հայրենիքը անշարժ «գոյք» է, հողային տարածք, մինչ պետութիւնը այդ «գոյք»ին տէրը ըլլալու կոչուած հաստատութիւն մըն է. իշխելու, պահելու, զարգացնելու եւ անոր մէջ ապրողներուն բարօր կեանք մը ապահովելու. պետութիւնը շարժական է, անցողակի ու փոփոխական: (Եթէ պետութեան փոխարէն «պետականութիւն» ըսուէր, թերեւս աւելի իմաստ կ'ունենար):

Այս լրզունգը հնարողին միտքը մաքուր չէ, լա՛ւ մտածեցէք, ըսել կ'ուզէ՝ հայրենիք չկայ առանց պետութեան... Ընդ որում՝ աշխարհի բոլոր ժողովուրդները, որոնք հայրենիք ունեն անցեալին եւ հիմա կորսնցուցած են, այլեւս պարապ տեղը չպայքարին վերատիրանալու համար իրենց հայրենի հողին, նոյնն ալ մենք, այս գաղափարին զոհ կ'երթայ մեր ամբողջ Արեւմտեան Հայաստանն ու Արցախը: Ունեցած ենք երկիր, ստեղծած ենք պետականութիւն՝ այլազան ազգերու հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ աշխարհի անկախ պետութիւններուն շարքին բոլորին հաւասար տեղ գրաւելու: Եթէ օր մը կորսնցնենք այդ պետութիւնը, պէտք է ընդունինք որ հայրենի՞ք կորսնցուցած ենք, եւ այլեւս զայն վերստին ազատագրելու մասին մտածելու չէ՞նք: Այսինքն՝ պետութիւն չկայ, հայրենի՞ք ալ չկայ:

Ի՞նչ ըսել է «Հայրենիքը պետութիւնն է»: Պետութիւնը գաղափար է, միտք է, շօշափելի բան մը չէ, շօշափելին՝ այդ հողը պահել-պահպանելու համար կառոյցներ ստեղծելն է՝ կառավարութիւն, բանակ եւ անհրաժեշտ ստորոգելիները:

Մերինները այս գաղափարին ծնունդ տուողն րն էին, թէ ոչ հիմա այդ ուղղութեամբ կը գործեն, քանի որ շատոնց մտահան ըրած են Արեւմտեան Հայաստանը, մտահան ըրած են եւ պահանջող ալ չեն: Է՛, ո՞ր մնաց «Յիշում եմ ու պահանջում»-ը: Հիմա ալ մտահան ըրած են Արցախը, Հեքիաթային չար պառաւի գաւազանին մէկ հարուածով անիկա կար ու չկայ եղաւ: Հիմա չի խօսուի այդ մասին, ո՞ր գացին անոր նուիրուած երգերը, դասագիրքերը, գրականութիւնը, ֆիլմերը: Ո՞ր են Արցախի ղեկավարները, որոնք ազերիական բանտերուն մէջ ո՞վ գիտէ ի՞նչ ահաւոր կացութեան մէջ են: Յոյց կու տան նախկին նախագահ Արայիկ



Յարութիւնները՝ վիզը ծուռ, ազերի զինուորի մը բազուկին տակ ճնշուած: Այդ մարդիկը ժամանակին երկրի ղեկավար էին: Իսկ մենք՝ իշխանութիւն եւ ժողովուրդ, ի՞նչ կ'ընենք:

Ի՞նչ է, Արցախը ծանր բեռն մըն էր, որ վրանէս թափեցինք ու ազատեցանք: Սովորական մահացողի պարագային հոգեհանգիստ կ'ընեն, յուշ-երեկոյ կը կազմակերպուի, անոր նուիրուած երգերն ու բանաստեղծութիւնները, պարերն ու թատրերգութիւնները բեմերը կը զարդարեն:

Մարդիկը կը տուայտին թշնամիի բանտերուն մէջ, իսկ մատը շարժող չկայ: Ասոնք եթէ մեր մարդիկն էին եւ եթէ անարդար էր անոնց ազատագրելու, պէտք չէ՞ր միջազգային դատարան դիմել, փաստաբաններու կազմով մը ներկայ ըլլալ անոնց դատավարութեան եւ պաշտպանել զիրենք: Մենք ինչո՞ւ տէր չենք կանգնիր անոնց, ինչո՞ւ թափեցինք այդ մարդիկը:

Քաղաքականութեան ոլորտներուն մէջ չեմ մտնէր, սակայն որպէս հայ մարդ, հարցումները հանգիստ չեն ձգեր զիս: Եթէ անոնք «հայ փոլիթիքս»ի գոհեր են, քիչ մը բանանք փակագիծերը եւ բան մը հասկնանք: Ամօթ է մեզի, որ «Արցախը Հայաստան է եւ վերջ» յայտարարեցինք, բայց ճիշդ հակառակը գործեցինք:

Շատ լաւ բան է կառավարութեան նիստերը ցուցադրելը. ժողովուրդը կը տեսնէ ու կ'ուրախանայ, որ գաղտնի բան չկայ, ամէն ինչ բաց է ու թափանցիկ: Երեւոյթով այսպէս է, սակայն քուլիսներու մէջ անցած-դարձածները մարդ չի՛ տեսներ: Հանեցէք նայինք մեր պահանջատիրական էջերը դասագիրքերէն, փոխեցէք Սահմանադրութիւնը ու շարունակեցէք վճարել կասկածելի խաղաղութեան տուրքերը, բայց մինչեւ ե՛րբ:

ՅԱԿՈՒՄ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼՔԵԼԸ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ՉՈՒՆԻ

Լիւսի Տեքսթճեան, Երեւան, 28 Յուլիս 2024, ԳԵՂԱՐԴ



Հայաստանի Հանրապետութեան Ազգային անվտանգութեան ծառայութիւնը տրամադրած է տուեալներ, որ 2024 թուականի Յունիս 1-ի դրութեամբ օդային եւ ցամաքային ճանապարհներով Հայաստանէն հեռացած է Արցախէն բռնի տեղահանուած եւ Հայաստան ապաստանած 17.743 հոգի, իսկ վերադարձած՝ 7435-ը: Այսինքն, նշեալ թուականի դրութեամբ, Հայաստանէն հեռացած են եւ չեն վերադարձած 10.308 արցախցի: Նոյն աղբիւրի 1 Մայիսի տուեալներուն հետ համեմատած, Արցախի հաշուառում ունեցող՝ Հայաստանէն հեռացած անձերուն թիւը մէկ ամսուան ընթացքին աւելցած է 383 հոգիով:



Երկրէ մը դուրս գալու պատճառները կրնան բազմաթիւ ըլլալ, մասնաւորաբար, եւ այս պարագային՝ դժբախտաբար, ապրելու «աւելի լաւ» վայր մը փնտռելու, կամ պարզապէս դուրսը ապրելու մարմաջը: Շատեր յարմար առիթ կը սպասեն այդ փափաքը գործադրելու համար: Սակայն այս առումով շատերու մեղադրանքի պլաքները անմիջապէս ուղղուեցան Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն, մինչեւ իսկ երեւոյթը անուանելով այլ տեսակի ջարդ մը, ցեղասպանութիւն մը:

Ճիշդ է, որ ժողովուրդներու մէջ տարածուած սովորութիւն է իշխանութիւնները քննադատելը, երբեմն ընդդիմադիրներէն աւելի ընդդիմադիր ըլլալով, բայց «Ճիշդին՝ Ճիշդ, սխալին՝ սխալ» պէտք է ըսել: Հայաստանի Հանրապետութիւնը որպէս օրինական եւ իրաւական պետութիւն բնականօրէն եւ բանականօրէն, եւ այստեղ տեղ չկայ երկուութեան, Սեպտեմբեր 2023-ի դէպքերէն ետք, առաջին իսկ օրէն գրկաբաց ընդունեց իրենց տուներն ու հողերը կորսնցուցած մեր արցախցի եղբայրներն ու քոյրերը: Այս մօտեցումը աժան սակարկութեան առարկայ չէ, որովհետեւ աշխարհի վրայ ռեւէ հայ անշահախնդրօրէն ընդունելու պատրաստ է միայն իր Մայր հայրենիքը: Ուստի, բնականաբար, հողազրկուած եւ բռնի տեղահանուած արցախցիները ընդունող բաց գիրկն ալ Հայաստանի Հանրապետութիւնն է: Աննախադէպ արագութեամբ ընդունելութեան արժանացած արցախցիները շուտով ստացան ապաստան եւ կարեկցանքը իրենց հայրենակիցներուն, ապա անմիջապէս՝ միանուագ դրամական աջակցութիւն, այնուհետեւ ամենամտայ դրութեամբ նիւթական գումար մը կենցաղային նուազագոյն ծախսերու համար: Այդ նպաստը կը շարունակուի մինչեւ օրս:

Սեպտեմբեր 2023-ին յաջորդող ամիսներուն, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պարբերաբար մշակեց ծրագրեր, որոնց հիման վրայ, Արցախէն տեղահանուածները տարատեսակ օժանդակութիւն ստացան:

* Աշակերտները ամենայն դիւրութեամբ ընդունուեցան դպրոցներ, իսկ շատ արագ հաստատուեցաւ արցախցի ուսանողներու կրթաթոշակի կարգը, որ հնարաւորութիւն տուաւ Արցախի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու եւ գոլէճներու ուսանողներուն իրենց ուսումը շարունակել Հայաստանի մէջ եւ կրթաթոշակի միջոցով վճարել իրենց ուսման վարձը:

* ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարարութիւնը նախատեսեց Արցախէն բռնի տեղահանուած հարիւրաւոր ուսուցիչներու եւ գիտնականներու աշխատանքի մէջ ներգրաւում՝ ապահովելով անոնց մասնագիտական աշխատանքի հնարաւորութիւնը Հայաստանի դպրոցներուն, համալսարաններուն եւ գիտական հիմնարկներուն մէջ: Կարգ մը բնակավայրերու մէջ աշխատանքի անցնելու պարագային անոնք կը ստանան 30 տոկոս յաւելավճար եւ 50 հազար դրամ լրավճար:

* ՀՀ կառավարութեան որոշմամբ, բռնի տեղահանուած արցախցիներու բժշկական սպասարկումը կ'իրականացուի պետական պատուէրի շրջանակներուն մէջ:



* Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան որոշմամբ, բռնի տեղահանուած անձերու զբաղուածութեան ապահովման պետական աջակցութեան ծրագրի շրջանակին մէջ կան հետեւեալ երեք հնարաւորութիւնները՝

– ստանալ 6-ամսեայ մասնագիտական ուսուցում՝ որեւէ մասնագիտութեամբ, այդ ընթացքին ձեռք բերել կրթաթոշակ եւ ուսման վարձ,

– վաստակիլ աշխատանքային փորձ, որու ընթացքին ստանալ նաեւ վարձատրութիւն,

– համատեղել մասնագիտական ուսուցումն ու վարձատրուող աշխատանքային փորձը:

Աւելցնենք նաեւ, որ կառավարութիւնը գործատուն խրախուսելու համար կը տրամադրէ փոխհատուցում՝ արցախցի պաշտօնեային համար վճարուած եկամտային հարկի ամբողջ գումարին չափով:

* Բռնի տեղահանուած անձերու երկարաժամկետ բնակութեան համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով, կառավարութիւնը հաւանութիւն տուաւ տեղահանուած ընտանիքներու բնակարանային ապահովման պետական աջակցութեան ծրագրին: Հոն ընդգրկուած են 390 բնակավայրեր, ուր արտօնեալ աջակցութիւն նախատեսուած է բնակարան/տուն գնելու կամ կառուցելու համար:

Այս բոլորը՝ պետական ծրագրերով: Ասոնց կողքին կան նաեւ ուրիշ պետութիւններու եւ միջազգային կառոյցներու, միջազգային ու տեղական հասարակական կազմակերպութիւններու եւ բարեսէր անհատներու տարատեսակ օժանդակութիւնները:

Այս բոլորը շատ տրամաբանական են ու ողջունելի. այո՛, հայրենի հողը անփոխարինելի է, բայց արդա՞ր է երբ ըսուի, թէ զարկուած ու զրկուած արցախցիներուն համար՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ մնալու պայմաններ չստեղծուեցան:

Շատեր դժգոհութեամբ կ'արտայայտուին՝ ըսելով, որ այս օժանդակութիւնները ոչինչ են անոնց կորսնցուցածին դիմաց, երեւի մոռնալով որ Հայաստանը Պրուսէյ չէ, աստղաբաշխական գումարներու անսպառ աղբիւրներ չունի: Երկրին մէջ ապրող աղքատ ու միջին խաւերը հազիւ իրենց ապրուստը կարենան ապահովել: Աշխատավարձերը մեծ մասամբ ցած են, գիները՝ համաշխարհային մակարդակի: Այդուհանդերձ, պետութիւնը կ'ընէ իր հնարաւորն ու անհնարինը – մինչեւ իսկ պետական պարտքը միլիառաւոր տոլարներով աւելցնելու գնով – մեր տեղահանուած հայրենակիցներուն կենցաղային եւ այլ դժուարութիւնները որոշ չափով մեղմելու, զուգահեռ անոնց առաջարկելով նաեւ հոգեբանական աջակցութիւն:

Հոս կ'ուզեմ նաեւ յիշել, թէ օրին՝ Սուրիոյ մէջ պատերազմի բռնկման տարիներուն, հայրենադարձ տնտեսվար սուրիահայերուն օգնութեան ձեռք մեկնեց ՀՀ Սփիւռքի



նախարարութիւնը: Հասարակական կազմակերպութիւնները նոյնպէս կարելի եղած չափով օգտակար դարձան անոնց: Պէյրութի նաւահանգիստի մահաբեր պայթումէն ետք հայրենադարձող հայորդիներու մեծ հոսք եղաւ Լիբանանէն, բայց քովիտի եւ 2020 թուականի 44-օրեայ պատերազմին պատճառներով հնարաւոր չեղաւ լիբանանահայութեան օժանդակութեան ծրագրերը կեանքի կոչել:

Ճիշդ է, ժամանակի ընթացքին շատեր չկրցան դիմանալ Հայաստանի մէջ ցած աշխատավարձին, տուներու բարձր վարձքերուն եւ սղութեան, հետեւաբար վերադարձան Լիբանան: Բայց շատեր մնացին ու սկսան արմատներ նետել հայրենի հողին մէջ:

Համոզուած եմ՝ եթէ ներկայիս հնարաւոր չէ Արցախի վերադարձը, ապա Հայաստանն է Երկիրը: Հայաստանը լքելու արցախցիներու քայլը արդարացուած չէ: Հայաստանը շատ առաւելութիւններ կրնայ ունենալ հոս ապրող հայուն համար, կրնայ նաեւ շատ թերի կողմեր ունենալ, բայց կը հաւատամ, որ պէտք է ապրինք եւ արարենք միայն հոս, որովհետեւ հայուն տունը Հայաստանն է... եւ վերջ:

ԳԵՂԱՐՆ.– *Վերջերս լուրեր շրջանառուեցան, թէ ռուսահայ յայտնի գործարար, ՏԱՇԻՐ ապրանքանիշի սեփականատէր, Մայր Աթոռի նոր վեհարանի կառուցման համար 27 միլիոն տոլար նուիրած միլիառատէր Սամուէլ Կարապետեանը յայտարարած է թէ որոշած է 100 միլիոն տոլար տրամադրել Արցախէն տեղահանուած մեր հայրենակիցներու բնակարանային շինարարութեան համար ... Աքիսազիոյ մէջ: Յուսանք, թէ լուրը տարածայնութիւն է կամ ստոր զրպարտանք: Այլապէս այդպիսի ծրագրի իրականացումը ոչ աւելի, ոչ պակաս, Հայաստանի հայաթափում է, ազգային դաւաճանութիւն...*

ԴԱՌՆԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ



Հարաւային Կովկասի հաղորդակցութեան ուղիներու զարգացումով հետաքրքրուած են տարածաշրջանին մէջ կարելոր դերակատարութիւն ունեցող մեծ ու շրջանային բոլոր պետութիւնները՝ թէ՛ Ռուսաստանը, թէ՛ ԱՄՆն ու ԵՄը, թէ՛ Պարսկաստանը, Թուրքիան, Հնդկաստանն ու Չինաստանը: Սակայն իւրաքանչիւրը իր

ռազմավարական շահերուն համեմատ ունի իր իւրայատուկ նախընտրութիւնը, ունի նաեւ այսպէս կոչուած՝ իր կարմիր գիծերը: Նոյեմբեր 9ի հրադադարի համաձայնութեան գլխաւոր նպատակը հաղորդակցութեան ուղիներու բացումն էր, այնպէս ինչպէս կ'առաջարկէ Հայաստանի կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը, որուն նեցուկ կը հանդիսանան Արեւմտեան պետութիւնները:



Վրաստան ու Ազերպայճան տարածաշրջանին մէջ արդէն ունին հաղորդակցութեան ուղիներու իրենց ցանցերը, գորս կառուցած են 2000ական թուականներէն, երբ հայկական իշխանութիւնները, այն ժամանակ դիտակներ կառուցելով ու հայրենասիրական ճառեր արտասանելով զբաղած էին, Հայաստանի անվտանգութիւնը ամբողջովին թողլով Ռուսաստանի բարի կամեցողութեան: Հիւսիս-Հարաւ մայրուղիի շինութիւնը առաջնահերթութիւն կը յայտարարուէր, սակայն գործնական քայլ չէր առնուէր այդ ուղղութեամբ, իսկ այդ ծրագրին դրամային յատկացումները կիրառուէին, այս կամ այն մասնակիցի կողմէ: Թէեւ Հիւսիս-Հարաւ մայրուղին օդի ու ջուրի նման անհրաժեշտութիւն էր Հայաստանի համար, Իրանն ու Վրաստանը իրարու կապելով՝ Կասպից ծովէն դէպի Սեւ ծով ճանապարհի հաստատելով թուրքեւազերի շրջափակումէն ազատագրելու համար երկիրը:

Միայն 2016ի 4օրեայ պատերազմի ցնցումէն ետք Հիւսիս-Հարաւի շինութիւնը շարժիլ սկսաւ: Իսկ Թաւշեայ յեղափոխութեան ժամանակ ի յայտ եկան բոլոր խարդախութիւնները, զեղծարարութիւնները, շինարարական բացթողումները: Արցախի 44օրեայ պատերազմը նոր թափ տուաւ Հիւսիս-Հարաւի շինարարութեան: Կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը, որ ոչ միայն Հիւսիս-Հարաւ, այլ նաեւ Արեւելք-Արեւմուտք հաղորդակցութեան ուղիներու շինութիւնը նկատի ունի, Հայաստանի համար ռազմավարական նշանակութիւն ստացաւ:

«Խաղաղութեան խաչմերուկ»ը կը խաչաձեւէ Արեւմուտքի եւ Իրան Հնդկաստանի շահերը: Արեւմուտքը, յատկապէս ԱՄՆ հետաքրքրուած է Արեւելք-Արեւմուտք ճանապարհային ծրագրով, որ Միջին Ասիան պիտի կապէ Թուրքիոյ ու Միջերկրականին: Իսկ Իրանն ու Հնդկաստան մասնաւորապէս հետաքրքրուած են Հիւսիս-Հարաւով, որ այս երկու պետութիւնները պիտի կապէ Վրաստանին՝ Հնդկական ովկէանոսը՝ Սեւ ծովուն: Այս համայնապատկերին մէջ Ռուսաստանն ու Ազերպայճան մասնաւորապէս հետաքրքրուած են Արեւելք-Արեւմուտք ճանապարհով, պայմանով որ ան վերահսկէ Ռուսաստանը, այսինքն Հայաստան չունենայ տարածքային ինքնիշխանութիւն այդ «Զանգեզուրի միջանցք» անուանուած հատուածին մէջ:

Հիւսիս-Հարաւը, իբր տարանցիկ ճանապարհ, կը մնայ այլընտրանքային ուղի, որովհետեւ արդէն տասնեակ տարիներէ ի վեր կը գործէ Հիւսիս-Հարաւ՝ Իրան-Ազերպայճան-Վրաստան ճանապարհը:

Հայաստանէն անցնող՝ միջազգային չափանիշերուն համապատասխանող արագընթաց մայրուղիին կառուցումը տակաւին առ նուազն հինգ-վեց տարուան կը կարօտի իր աւարտին հասնելու համար: 1520 տարի ուշացումով կառուցուող մայրուղին, նոյնիսկ իբր այլընտանքային մայրուղի ունի իր կարելոթութիւնը, մանաւանդ Իրանի համար, որու շնորհիւ վերջինս կ'ազատի ամբողջովին Ալիեւէն կախեալ ըլլալէ:

Վերջին շրջանին անսովոր կերպով բազմացան ԱՄՆու Արտաքին գործոց նախարարութեան եւ այլ գերատեսչութիւններու բարձրաստիճան պաշտօնեաներու այցերը Երեւան: Օ՞րայըն՝ Եւրոպայի եւ Եւրասիոյ հետ յարաբերութիւններու ղեկավարը շատ

յստակ կերպով մատնանշեց ինքնիշխանութեան պայմաններու մէջ Հայաստանէն անցնող Արեւելք-Արեւմուտք ճանապարհի շինութեան անհրաժեշտութիւնը ԱՄՆու համար:

ԱՄՆու, Ռուսաստանի, Իրանի եւ Ազերպայճանի շահերու բախումը կը բարձրացնէ Հայաստանի ռազմավարական կարեւորութիւնը, պայմանով որ ան կարենայ դիմադրել ռուսերու եւ թուրքերու դրդումով՝ ազերական սահմանային յարձակումներուն:

ԺԻՐԱՅՐ ՉՈՂԱՔԵԱՆ

18/7/2024

ՆՈՐ ՅԱՌԱՋ

ԻՆՔՆԱՍՓՈՓՈՒՄ

*«Տէր, պաշտպանիր իմ բարեկամներից,
թշնամիներից կը պաշտպանուեմ ինքս»:
Հին ասոյթ»:*



Բազում են երկրները ի սփիւռս աշխարհի, որոնք դիմակայում են իրենց գոյատեւման եւ զարգացման խնդիրների առջեւ ծառացած մեծ ու փոքր, բարդ ու խճճուած, արտաքին թէ ներքին անհատնում մարտահրաւերներ, որոնց շարքին է նաեւ մեր սիրելի՝ ընդամենը մօտ 30000 կմ² տարածքով ՀՀ-ը: Դարերի ընթացքին հայ մտաւորական դասակարգի՝ երազանքն է եղել վերականգնել, իմա՝ վերաստեղծել մոնղոլ-թաթարական արշաւանքների հետեւանքով կորցրած մեր պետականութիւնը, որ ի վերջոյ կայացաւ 1918-ի Մայիս 28-ին բոլորին յայտնի դժուար, դժոխային պայմաններում, որ տեւեց ընդամենը մօտ երկու տարի, երբ հաստատուեցին համայնավար կարգերը՝ մնալով եօթ տասնամեակ, իսկ 1991-ին այդ համակարգի փլուզումն էր, որ առիթ եղաւ համազգային միաձայն հռչակագրով օրինականացնել Հայաստանի Հանրապետութիւնը (ՀՀ) «Ազատ, անկախ» նշանաբանով¹:

Նպատակս պատմական երեւոյթները յիշեցնել կամ վերծանել չէ, այլ հասկանալ, թէ ինչո՞ւ երբ կարողացանք տնտեսական ոչ-բարենպաստ, բայց հասարակութեան միաձոյլ եւ համերաշխ պայմաններում ինքնութիւն ձեռք բերել եւ մինչեւ իսկ Արցախը ազատագրել՝ չունեցանք բաւարար իմաստութիւն, ինտելեկտուալութիւն եւ քաղաքական հասունութիւն կերտելու պետականութեան գուտ

¹Նշանաբանը իւրաքանչիւր ազգի կամ ժողովրդի տարիների ընթացքին երազած գաղափարների խտացուած արտայայտութիւնն է, նաեւ սպազայի առաջընթացը. որպէս օրինակ նշենք ֆրանսիական «Ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն», ԱՄՆ «Մենք սիրում ենք Աստծուն» կամ բրազիլական «Կարգ եւ առաջադիմութիւն» եւ այլ նշանաբանները:



հայկական տեսակ մեր պահանջներին ու նպատակներին համահունչ, թեպետ բոլոր անհրաժեշտ տարրերը առկայ էին: Ողբալի է, բայց փաստ՝ բերկրանքի օրերը կարճ տևեցին, որոնց փոխարինեց հինգերորդ շարասիւնը մեր հայրենակիցների մասնակցութեամբ:

Անհրաժեշտ չէ անդրադառնալ երկրի տնտեսութեան բոլոր բնագաւառներում,— ներառեալ պաշտպանութիւնը եւ երեք տասնամեակ տիրող անսանձ համատարած թալանը,— սակաւապետ միլիարդատերերի ծագմանն ու բազմացմանը: Տեղին է նշել օրերս մամուլում տեղ գտած մի նմուշ՝ պետական եկամուտների նախկին տնօրէնի դրուագը. ԱՄՆ իշխանութիւնները, մերոնց պահանջով, բռնագրաւել են նրա Լոս Անջելէսում ձեռք բերած ապօրինի, աւելի քան 35 միլիոն դոլար արժողութեամբ առանձնատունը 2800 մ² մակերեսով, այն դէպքում երբ իր հայրենակիցների թոշակի նպաստը հարիւր դոլարի չի հասնում: Առկայ են անյազ որկրամուլութիւնը եւ չափի զգացումի բացակայութիւնը: Ստոյգ տեղեկութիւն չկայ, բայց ակնյայտ է, որ նախկին բարձր պաշտօնեաների մեծամասնութիւնը փախուստի մէջ է եւ այլեւս չի բնակւում ՀՀ տարածքում: Գիտակցելով իրենց գործած չարիքի կարեւորութիւնը եւ ծաւալը յօժարակամ դարձել են վտարանդի՝ խուսափելու արդարադատութիւնից:

Տասնամեակներ ի վեր դէմ-դիմաց ենք մի այլ համագգային չարիքի՝ հայոց լեզուի «Նահանջ առանց երգի»-ն (Շ.Շահնուր), որ համատարած բնոյթի է, մանաւանդ մայր երկրում: Այն դարձել է գաւառական եւ տիրակալ, գրաւոր ու բանաւոր պաշտօնական, իօսակցական, թէ՛ քաղաքական ելոյթներում, զանց չառնելով մամուլն ու հեռատեսիլը: Աւաղ ի խոր կսկիծով պիտի նշեմ, որ այդ բնագաւառում իր յատուկ դերն եւ ներդրումն ունի նաեւ մեր յարգարժան վարչապետը, որ անուշադիր կամ զայրոյթի վիճակում լինելով երբեմն սայթաքում, վրիպում է անցնելով ա-յախօսութեան: Այդպիսին էր իր խօսելաձեւը՝ օրերս իր աշխատասենեակում Արտաշատի աշակերտներին հիւրընկալելու ընթացքին, որ անշուշտ հետքեր կը թողնի եւ պատճառ ու առիթ կը դառնայ միւսների համար աւելի զարգացնել այդ չարիքը:

Այսու առանց ռիսկալիութեան եւ խոհեմութեամբ յորդորում եմ պարոն վարչապետին աւելի զգոյշ լինել եւ նոյնիսկ իր շրջապատից եւս պահանջել հայերէնի անաղարտութեան անհրաժեշտութիւնը եւ կարեւոր դիրքը՝ յիշեցնելով, որ իր գործածած **առեւտատարում էսկալացիա, միգրացիա, լիցենզիա** բառերը բազմաթիւ այլոց հետ՝ երեւանեան բառարանի անբաժանելի մաս են դարձել, որոնք ոչ մէկ աղերս ունեն հոյակապ դասական հայերէնի հետ եւ տեղին է յիշել Բայրոնի գնահատականը՝ «Աստծոյ հետ խօսելու միակ լեզուն հայերէնն է»:

Զօօն լինելը եւ ապագան տեսնելը աւելորդութիւն չէ եւ տեղին եմ համարում վերոնշեալ յորդորին յաւելել նաեւ, որ ժամանակն է հեծանիւ քշելու բարիքների, փողոցի մայթերի, կամ մանկապարտէզի շինութեան հարցերով մտահոգուելու հետ մէկտեղ. պետական մակարդակով կրթութեան նախարարութեան եւ լեզուի պահպանման կոմիտէի նախաձեռնութեամբ գործի դրուի մէկ ազգ, մէկ գրելաձեւ ունենալու անհրաժեշտ սկզբունքը, որ անշրջելի միջոց կարող է դառնալ իրարից անջատուած սփիւռքը հայրենիքի հետ միաձուլելու գործընթացին:

Բազում այլ չարիքների հետ, որ իշխանութեան եւ հասարակութեան հետ անմիջական առնչուած են երթելեկութեան հետ կապուած աղէտների եւ զոհերի խնդիրներն են, որ կարելի է ինքնասպանութիւն որակել: Այն անյապաղ լուծման կարիք ունի:

ՀՀ տարածքում, ըստ ոստիկանութեան տուեալների, վերջին հնգամեակին տեղի է ունեցել 2460 բախում-վթար, որից զոհուել են 1938 եւ վիրաւորուել մօտ 35000 հոգի, իսկ այս տարուան վեց ամսուայ ընթացքին գրանցուել է 2330 վթար 182 մահով: Ի՞նչ է այս, եթէ ոչ նախճիր (hécatombe) գործուած մեր իսկ միջոցներով՝ հիմնականում վարորդների տխմար



վարքով եւ մասամբ իշխանութիւնների ոչ-բաւարար հսկողութեան հետեւանքով եւ այլ պատճառներով:

Աներկբայ է, որ այս աղէտի հիմնական պատճառը վարորդների կողմից երթելեկութեան կանոնների խախտումն է, քանզի մեծ ի մասամբ վարորդական իրաւունք ձեռք է բերում կաշառք վճարելով՝ առանց կանոններին ծանօթանալու. հետեւանքը պարզ է: Կայ նաեւ մեքենաների անսարքութեան հանգամանքը, երբ նրանց վիճակը անբաւարար է պահանջի համեմատ, որին կարելի է աւելացնել նաեւ ճանապարհների անմխիթար վիճակը եւ անբաւարար մակերեսը եղած մեքենաների քանակի համեմատ, եւ բազում այլ հանգամանքներ, զանց չառնելով հեռախօսի եւ թմրամիջոցների առկայութիւնը, նաեւ Հրազդան գետի վրայով մի քանի կամրջի կառուցումը, անհերքելի է որ կը բեռնաթափի քաղաքի կենտրոնական մասի երթելեկութիւնը, որ վթարների պատճառներից է: Կարծում եմ շատ բան կայ անելիք այդ բոլորը չեզոքացնելու համար:

ՀՀ «Ազատ, անկախ» նշանաբանը իր արժէքին համեմատ պահպանելու համար բաւարար չէ մի դաշնակիցը միւսով փոխարինել: Դա բարդ, շատ բարդ գործընթաց է՝ կապուած դիւանագիտական նուրբ աճապարարութիւնների հետ եւ հէնց էնպէս չի լինում:

Մամուլի տարբեր տեսակներ անդրադառնում են հայ դիւանագիտութեան երերումներին, որ անընդհատ նոր դռներ են թակում, իրենց միջազգային յարաբերութիւնները այլազանելու նպատակով, որ բնական է, քանի որ դժգոհ են ռուսական կողմի ջերմ կապերից Ալիէի հետ՝ ի վնաս մեզ, բայց ռուս քաղաքական գործիչներ ամէն առիթով յիշեցնում են հայ-ռուսական դարաւոր բարեկամութեան մասին, որ սկիզբ առաւ ռուս-պարսկական պատերազմի աւարտին 1829-ի Բիշքէքի դաշինքով, երբ Հարաւային Կովկասը դարձաւ ռուսական տարածք իր բազմալեզու բնակչութեամբ:

Մէկ բան կարելի է յիշեցնել մեր իշխանաւորներին եւ քաղաքական գործիչներին, որ արեւմուտքի համար ՀՀ որեւէ արժէք չունի, բացի այնտեղից ռուսներին դուրս վոնդելու դրուագը, որի գերագոյն նպատակն է Իրանի դէմ ոտք դնելու տեղ ապահովեն Իսրայէլի համար, իսկ հայ պաշտպանութեան նախարարութեան կազմում ամերիկացի մասնագէտի (լրտեսի) ներգրաւումը երբեք մեր օգուտին չի կարող ծառայել: Բաւական է տեսնել, թէ ի՞նչ կատարուեց մեր դրացի Վրաստանում:

Իմ՝ վերոնշեալ վարչապետին ուղղուած յորդորին պիտի դարձեալ յաւելեմ Սայաթ Նովայի բառերով միտքը՝ «Արդար դատի, չէ որ թագաւոր է՝ ս դու», ինչպէս նաեւ միայն զգոյշ քայլեր ձեռնարկել, քանի որ միջազգային մթնոլորտում ամէն փայլուն իր ոսկի չէ, թէեւ նրանք բազմաթիւ են:

Զմոռանանք, որ ոչ ազատ ենք, ոչ անկախ:

17-8-24

Ռուբէն Յովակիմեան

ՍՓԻՒՔ... ՆԵՐՈՒԺ

*«Արդարադատութիւնը առանց Ուժի՝ անգոր է, ուժն առանց արդարութեան՝ բռնակալ»:
Պասկալ:*

Հայ սփիւռքի պատմութեանը անդրադառնալ չէ նպատակաւ. այն յայտնի է շատերին եւ զաղտնիք չէ, որ անցեալ դարերի ընթացքին բազում հայկական օջախներ են ստեղծուել ամէնուր, կամայ թէ ակամայ, ու զարգացել տեղի հանգամանքներին հաշտուելու,



յարմարուելու պայմանով եւ այն շարունակում է մինչ օրս: Տեղին է յիշել Սպահանի՝ Նոր Ջուղայի ստեղծումը պարսիկ շահ Աբասի մօտ 30,000 հայերի բռնի տեղահանումով Ագուլիսի (Նախիջեւան) շրջանից իր երկրում արհեստները եւ առեւտուրը զարգացնելու նպատակով, որ դարձաւ Պարսկաստանի յարգելի ու սիրելի քաղաքներից մէկը, Լեհաստանի հայ գաղութը եւ Լվով քաղաքի հայկական եկեղեցին որ կանգուն է մինչ այսօր, զանց չառնենք Սինգապուրը, Կալկաթան եւ Հնդկաստանի հարաւային շրջաններում հաստատուած մեծ ու փոքր օջախները, մինչեւ իսկ Բենգլադէշը, ուր հայ եկեղեցին բաց է եւ գործում է:



Ըստ հրեայ պատմաբան Յովսէփ Ֆլաւիոսի ասոյթին, որ Սողոմոնի տաճարի աւերումից յետոյ, Վեսպասեան կայսեր պահանջով հաստատուեց Հռոմում, այնտեղ յայտնաբերեց արդէն կայացած մեծ հրեական համայնք, որ վաշխառու գործարքներով էր զբաղուած: Աւելի հեռու չգնալու համար ընդունենք, որ սփիւռքը նոր երեւոյթ չէ, միայն թէ համայնքները տարբեր կեցուածք եւ կարգավիճակ են ունենում տեղի բնակչութեան եւ իշխանութիւնների կողմից: Աներկբայ է, որ ԱՄՆ եւ արեւմուտքի բազում երկրների ղեկավար դասակարգի զգալի մաս են կազմում ծագումով հրեաները, մինչ հայ քաղաքական գործիչները բացակայ են ասպարէզից, բայց ստեղծութեան բաւական մոլեռանդ մասնակցութիւն ունեն իրենց իսկ հարազատ երկրի ու տարբեր հայ խմբակների նկատմամբ, որոնց չեմ յանդգնում «կուսակցութիւն» կոչել, քանզի աստեղծութիւնը գաղափարախօսութիւն չէ, մինչդեռ մեր միակ եւ

եզակի մարտահրաւերն է՝ փրկուել ոչնչացումից :

Մեր երկրի նորագոյն պատմութեան 90-ականներին՝ Գիւմրու երկրաշարժի աւերումից յետոյ կարճատեւ բերկրանքի շրջան (ephorie) ապրեցինք, երբ հոչակելով անկախութիւն, ողջ հայութիւնը դարձել էր միաձայն, մի բուռ երկրի տէր ու տիրական, որի շնորհիւ սահմանափակ եւ նեղ միջոցներով, բայց մեր կամքի ուժով եւ նուիրատուութեամբ կարողացանք Արցախ ազատագրել եւ պատրաստ էինք սփիւռքի հնարաւոր աջակցութեամբ մինչեւ Բաքու հասնել: Ողջ հայութիւնը աներկբայ պատրաստ էր միաձուլուել, եթէ խանգարող ուժերը չմիջամտէին, եւ հայ սփիւռքը բաւական ուժեղ լինէր՝ ոչ-պառակտուած, այլ կազմակերպուած, ընդունակ եւ պատրաստ սատարելու: Յաւօք չկային անհրաժեշտ կառոյցներ, թէւ անհրաժեշտ պահանջ կար: Այդ շրջանին էր, որ երկրի նախագահ ԼՏՊ-ն արգելեց երկրում մի քաղաքական կուսակցութեան գործունէութիւնը, եւ սկիզբ առաւ ներքին պատերազմը, որ ներկայիս շարունակում է քսան տարի դադարից յետոյ²: Աշխարհով մէկ բողոքի ցոյցեր, մինչեւ իսկ մահափորձ կազմակերպելով, որոնց ցաւօք լայնօրէն մասնակցում եւ քաջալերում են սփիւռքահայ տարբեր կուսակցական խմբեր եւ մամուլի մեծամասնութիւնը, որոնցից անբաժան է Հայ առաքելական եկեղեցու վերնախաւը՝ միակ նպատակով՝ վերացնել արդի իշխանութեանը եւ հայ պետականութիւնը, որի լաւագոյն ապացոյցն է Բագրատ կղերը: Միալ չի լինի եզրայանգել, որ այս արձակախնդրի՝ փողոց ելնելն ու անկարգութիւններ ստեղծելը առաջին հերթին վարկաբեկեց իր իսկ կարգը՝ նողկանքի զգացում ստեղծելով իր վերադասի հետ մէկտեղ: Զանց չառնենք ԱԺ-ի նիստերին տիրող լիրբ անկարգութիւնները:

Ի՞նչն էր պատճառը, որ եղեռնից հարիւր տարի անց ԱՄՆ հաստատուած հսկայական հայ գաղութը անընդունակ եղաւ գէթ մէկ հայազգի ծերակուտական ունենալ, երբ փոքր չէ

²Գնահատական չտանք արարքին, քանզի դրդապատճառները, յարաբերութիւնների որակն եւ մանրամասերն անյայտ են:



բարձրագոյն կրթութիւն ունեցողների թիւը: Նոյն գուգահեռը կարելի է անել եւրոպական եւ այլ երկրների համար:

Նոյն տրամաբանութեամբ, մեծ բացթողում է համայն հայ հասարակութեան կողմից, որ մօտ անցեալի օրերին կամ ժամանակահատուածում Քըրք Քըրքորեանի նմանները տարրական գաղափարը չունեցան իրենց միջոցները միատրելով ստեղծելու համաշխարհային մակարդակի **ՀԱՅ** դրամատուն, որին ի սփիւռս ցրուած բոլոր հայերը իրենց լուսայով կարող էին մասնակցել: Թերեւս այդ պարագային անկախ ՀՀ-ը ստիպուած չէր լինի աջ ու ձախ դռներ ծեծել օգնութիւն մուրալու:

Փոխարէնը ամէնուր եկեղեցի եւ խաչքար կանգնեցրինք: Եթէ այդ դրամով եւ մի փոքր յաւելումով բանակը զինուէր, թերեւս այլ ելք ունենար 44-օրեայ պատերազմը, մինչ բարձրագոյն հոգեւոր դասը փորձում էր Արցախը փրկել կաթողիկոսական պատարագով առանց մի դահեկան յատկացնելու հայրենիքի պաշտպանութեանը:

Տեղին է նշել ՀՀ-Սփիւռք յարաբերութիւնների ոտքից կադ լինելու փաստը: Չփնտռենք պատճառների ակունքները, բայց աներկբայ է, որ սփիւռքի կապը, սերը մայր հայրենիքի հետ աւելի զգացմունքային է քան գործնական՝ այցելել, Սեւանը եւ Արարատը տեսնել, մինչ գործնական գետնի վրայ չնչին են ներդրում անելու ցանկացողների թիւը, իմա անբաւարար:

Այդ ոլորտում շատ բան ունենք սովորելու հրեաներից, երբ անհատականից բացի իրենց բնականօրէն երկրների գործարարներին ուղղորդում են դէպի Իսրայել: Ինչ խօսք, որ ընդունող մեր երկիրը եւս պարտաւոր է անհրաժեշտ եւ բաւարար պայմաններ երաշխաւորելու:

Շատ բան կայ անելիք թէ՛ հայրենաբնակների եւ թէ՛ սփիւռքաբնակների կողմից երկիրը եղած վիճակից հանելու եւ վերականգնելու համար, բայց անյայտ է, թէ ո՞վ, ե՞րբ, ինչի՞ց եւ որտեղի՞ց պէտք է սկսել:

Կարելի է ենթադրել, որ իշխանութեան շրջանակում նման հարցերով անհանգստացող մասնագետներ կան եւ գլուխ քերելու ժամանակը չէ, այլ որոշ գործնական քայլեր ձեռնարկելու: Բոլորիս պարտքն է աներկբայօրէն նեցուկ կանգնել մեր պետականութեանը եւ նրա նախաձեռնութիւններին:

12-7-24

Ռուբէն Յովակիմեան

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՁ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԳՐԻՉ ԻՄ ԽԵՆԴ

Դարուն այս պիղծ ու շահամուլ, կ'ուզես դեռ Բան, Գիր արարել, Գիշեր ու տիւ անոնց նեկտարն ըմպել շիթ-շիթ, գրի՛ չ իմ խենդ:

Գրչի դարը շատոնց անցեր, նիւթն ու ոսկին են ի պատուի,
Մարդ էակը ա՛լ մոռցեր է սրտին տեղը, ցաւը խիղճին:

Մրտի շշուկ-թրթիռին տեղ, ահեղ աղմուկն է հաշուարկի,
Ուր մամոնան տընօրինէ վարքն ու բարքը մարդ էակի:

Խաժամութին մէջ նողկալի ստրկութեան դարը հեւայ,
Ուր վաճառքի ապրանք է լոկ ազատութիւնը երագուած:

Մրբութիւններ որ դարե դար պաշտուած են ու փայփայուած
Այժմ մէկդի են շարտուեր մամոնայէն՝ նոր կուռք դարձած...

Տաճարին մէջ սրբապղծեալ շաչէ՛ր Աստ'ծոյ խարազանը,
Իր թմբիրէն արնթնցընէ՛ր այլանդակուած մարդ էակը:

Մարդը ՄԱՐԴ է իր հոգիով, սիրտով զգայուն, խիղճով անեղծ,
Մի՛ թողուր, Տէ՛ր, որ ան դառնայ սատանայ մը քրքիջով սեւ:

Մի՛ թողուր որ այդ սատանան սպաննէ հոգին, չարախնդայ
Որ ինքն է տէրն այս աշխարհիս, մարդը՝ գերի անփառունակ:

Գրի՛ չ իմ խենդ, մի՛ վրդովուիր, շարունակէ գիրեր շարել



Յանուն մարդուն ազատութեան, դեռ՝ հաւատա՛լ ու աղօթե՛լ:

1/7/2024

ԶՐՈՅՑ ԻՆՔՍ ԻՆՉ ՀԵՏ շարքէն

.....

ԻՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Իմ պատմութիւնը խենթ մանկան ճիչ է,
Լոյսով արբեցած թիթեռի կեանք է,
Ծաղիկէ ծաղիկ ուստոստուն ցատկ է,
Հիւթեղ նեկտարով գինովութիւն է:

Յաւին մէջ անգամ ժպիտի ցոյք է,
Տառապանքին մէջ՝ մրմունջ աղօթքի,
Յոյսին կառչելու յամառութիւն է,
Վատը լաւ տեսնող հայեացք է բարի:

Իմ պատմութիւնը չունի ժամանակ,
Աշնան մէջ դալուկ ոսկեհոր բոց է,
Թէ գայ ձմեռը խարոյկի գոլ է,
Ոսկեշող լոյսի հրավառութիւն է:

Իմ պատմութիւնը չմեռնող յոյս է,
Հաւատք ու սէր է որ աւարտ չունի,
Թէ հորիզոնիս արեւն մայր մտնէ,
Դեռ պիտ' յամենայ լոյսս ծիրանի:

8/8/2024

.....

ՀԱՅԱՍՏԱՆՍ

Ի՛նչ ալ գրեմ, ի՛նչ ալ ըսեմ, դուն կը մնաս հոգի՛ անբառ,
Մի բտ որ տրոփէ ու թրթռայ ամէն հայու բորբ կրծքին տակ,
Տո՛ւն ու օճա՛խ նուիրական մօր գրկին պէս սիրավարար,
Կարօ՛տ մը լուռ որ կը միսայ ու չի հատնիր, մնայ անյագ:

Դուն կը ցոլաս մէն մի բառիս ու գիրիս մէջ ոսկեղենիկ,
Ապրումներուս ու խոհերուս դուն ես միշտ ալ ներշնչման ակ,
Որմէ կ'ըմպեմ անյագօրէն, զերթ ջուրը հողն արեւախանձ
Ու կը մնամ սիրածարաւ հող ու ջուրիդ անմահական:

Արմատներս քե՛զ երկարած կ'ապրիմ օտար երկնքի տակ,
Դուն ես աւիւնն ու աւիշը այն կենսայորդ, կենսավարար
Որ ապրելու ինձ ոյժ կու տայ, կամք անվհաս ու տեսլական,
Արարման կայծ դեռ կը վառէ երգելու փառքդ վեհապանձ:

Դուն կը յառնես ինչպէս ՈԳԻ որ դարերէն մեզի կու գայ,
Կը կամրջէ սերունդները, իրար զօդէ բիր սիրտերը,
Ու հրաշափառ վեր կը կանգնի, քանդէ բոլոր պատնէշները,



Մէկ ու Միացեալ ԱԶԳ կ'ընծայէ արմենական բեկորները:

30/7/2024

.....

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Հոս քարը թռի՛ չք ու խոյա՛նք է,
Ոգեղէն սլա՛ ցք ու ճախրա՛նք է,
Քարը քարին՝ կամա՛ր, ծիածա՛ն,
Քարը քարով՝ երկինք անհաս...

Քարը այստեղ լուռ աղօ՛թք է,
Պապերուդ հետ խօ՛սք ու գրո՛յց է,
Հայ հոգիի մկրտարա՛ն,
Հայ ոգիի ներշնչարա՛ն...

Քարը այստեղ սուրբ խորա՛ն է,
Խղճի մաքուր խոստովանա՛նք,
Հոգիի ճի՛շ, աղաղա՛կ է,
Բիր մեղքերու հրաշք քաւարա՛ն...

Քարը սաղմո՛ն, պատարա՛գ է,
Միրտերու ե՛րգ, մեղե՛ղի է,
Օրհներգութի՛ւն, շարակա՛ն է,
Մեր-միութեան աղերսա՛նք է...

Աստուած Ինքն է ներկայ այստեղ
Իր Մեծութեամբ՝ խորհո՛ւրդ վսեմ,
Թէ չզգաս զԱյն, դուրս ե՛լ անկէ,
Հոն տեղ չունի հաշիւը նենգ...

Ու թէ պղծես շիլ շահերով
Սրբութիւնը իր լուսաթով,
Աստուած Ինք իր խարագանով
Քեզ կը պատժէ Իր զայրոյթով:
5/11/2022

.....

ԲՈԼՈՐ ՊՈԷՏՆԵՐՈՒՆ

Ձեր խօսքն ուրիշ է, սրտաբուխ ճիչ է,
Ձեր ձայնն ուրիշ է, հոգիի կանչ է,
Վեհ արդարութեան բորբ աղաղակ է,
Անարդարուածի ցասման հառաչ է:

Ձեր մէջ թրթիռն է մէն մի տերեւի,
Ձեր մէջ դայլայլն է մէն մի թռչնակի,
Դուք էք քնքշանքը բիր ծաղիկներուն
Ու վէտվէտումը խոնարհ խոտերուն:



Մէրն ու կարօտը ձեր սիրտէն բխին
Ու կը տարածուին համայն աշխարհին:
Ձեր խիղճն մշտաբար չունի դուլ, դադար,
Աստուծոյ աչքն է աշխարհիս վրայ:

Բառերը կարծես ձեր մէջ կը ծնին,
Կը դառնան աղօթք Ամենակալին,
Ձեր մէն մի բառը ոգիի թռիչք է,
Չոգիի խոյանք, վսեմ ճախրանք է:

Աշխարհի ցաւով դուք կ'այրիք անվերջ,
Ինչպէս կեռոն մը կաթիլ առ կաթիլ,
Ձեր կըրակը՝ ներս, դուրսը ճըրագ է
Որ լուսաւորէ սիրտերը մթին:

Աշխարհի ցաւին կ'ըլլաք սպեղանի,
Բուժիչ դեղ, դարման հայրենեաց վերքին,
Կ'ամոքէք սիրտերն ինչպէս քալասան,
Կ'ըլլաք սփոփանք հոգւոյն վշտահար:

Չէք ուզեր դուք վարձք, նոյնիսկ երախտիք
Ձեր աշխատանքին ու նուիրումին:
Միայն ձեր հոգին կարենայ բերկրիլ
Ի տես մարդկային համերաշխ կեանքին:

Ձեր հատուցումը միայն կը գտնէք
Թէ յոյս առկայծէք ցաւոտ սրտին մէջ,
Լոյսի նշոյլով ցըրէք խաւարը,
Քանզի դուք էք, դո՛ւք լոյսի ասպետը:
4/7/2022

.....

ԻՂՁ ԱՊՐՈՒՄՍ

Կ'ուզեմ ապրիլ թռչունին պէս, վաղուան օրը չմտածել,
Ներկայ պահը լոկ ըմբռնել, ապրի՛լ, ապրի՛լ թեթեւօրէն:

Թռչունին պէս սէր դայլայլել, երգել գուարթ օրհներգի պէս,
Դայլայլովս ուրախանալ, ուրախացնել ճիշդ իրեն պէս:

Ծառի ճիւղին վրայ նստած դիտեմ աշխարհն ես անայլայլ,
Խոհուն ու լուռ խորհրդածեմ մանրութիւններէն վեր բարձրացած:

Ազատ թռիչքով ծաղկէ ծաղիկ ես թռչկոտիմ անհոգաբար,
Կենսաբբենամ անոնց բոյրով ու թոյրերով գեղածիծաղ:

Վեր խոյանամ, երկինքներու անհունին մէջ ճախրեմ ազատ



Եւ համբոյր տամ արեւ'լոյսին, լուսնեւլոյսին, վառ աստեղաց:

Բոյնս շինեմ բարձր ծառին, ամռան տօթովը գինովնամ,
Դալուկ աշնան անցումէն ետք, թոչիմ երթամ դէպ' տաք հարաւ:

Հորիզոնը լոկ թող ըլլայ կողմնացոյցս իմ անվըրէպ,
Յետոյ գարնան վերադառնամ ու հին բոյնս վերաշինեմ:

Այսպէս ապրիմ մայր բնութեան տարերքին հետ լոկ նոյնացած,
Հեռու բոլոր կեղծիքներէն, ստապատիր օրէնքէն ալ:

Եւ մաքրուիլ ժանգ ու տիղմէն այս աշխարհիս մամոնապաշտ,
Ըմպել լոյսը արեւաշող, ջագենա՛ւ, ջագենա՛ւ:

25/7/2024

.....

ԱԶԳԻՍ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ

Անդունդներէն վեր խոյացող ճախրանքը կայ
Իմ հոգւոյս մէջ,
Խաւարամած գիշերէն ետք, լուսաբացը
Ճաճանչահել...

Ձմեռն ու ցուրտը թօթափած, իմ մէջ գարուն
Կայ բողբոջած,
Գետերու բորբ շառաչը կայ երակներուս
Մէջ հնամեայ...

Մահերէն ետք Մեծ Եղեռնի, յարութեան շունչ
Կայ հրաշափառ,
Որ աւիշով մը կենսայորդ երակներուս
Նոր կեանք կու տայ:

Բայց չարին դէմ, անիրաւին, անդունդներուս
Մարսափը կայ,
Ուր թաւալգլոր ան պիտ' իյնայ, իր սել թոյնով
Ի չիք դառնայ:

Ուղեւորն եմ ես անյոգնում դէպի Լոյսը
Ճշմարտութեան,
Ու չկայ վերջ իմ ուղիիս, դէպ' յաւերժը
Անեզրական:

28/5/2022



"ԱՄԷՆ ԻՆՉ ՎԵՐՉԱՑԱԾ Է"...

Այս գրութիւնը՝ ԼԵԻՈՆ ՇԱՌՈՅԵԱՆԻ էջէն, կը տեղադրենք որպէս զգաստութեան եւ սթափութեան կոչ ու հրաւեր: Ա. Խ.



Պոլսէն հայերէնաւանդ վաստակաւոր ուսուցչուհի մը կը գրէ ինծի."Մեր համայնքը անդունդի եզրին հասած է: Հայախօս մարդ գրեթէ չմնաց մեր շուրջ: Իսթանպուլի հայերէն 2 թերթերն ալ շուտով պիտի փակուին: Մենք վերջացած ենք":

Լիբանանահայ մտաւորական բարեկամ մը հեռաձայնին միւս ծայրէն գրեթէ կը հառաչէ."Լիբանանի վրայէն գի՛ծ քաշէ այլեւս: Ո՛չ մտաւորականութիւն մնաց, ո՛չ մշակութային որակեալ կեանք: Երբեմնի հօգօր գաղութը հիւծումի ու այլասերումի ճամբան բռնած է: Խառն ամուսնութիւնները գլուխը առած կ'երթան...: Անգամ մը Պուրճ Համուտ իջիր՝ որ աչքովդ տեսնես, թէ ո՛ր էինք ու հիմա ո՛ր հասանք"...

Փարիզէն վաստակաշատ խմբագրուհի մը իր նամակին մէջ կ'արտայայտէ սա՛ միտքը."Մփիւռքի հայատառ մամուլին այսօրուան վիճակը աւելի քան ողբալի է: Ի՛նչ թափթփած լեզու եւ ի՛նչ անկեալ բովանդակութիւն: Ընթերցումի արժանի հաճելի կամ օգտակար յօդուածներ գրեթէ չես գտներ հոն: Խմբագիր դարձած անձերը իրե՛նք հայերէն չեն գիտեր...: Արեւմտահայերէնը ամէն օր քայլ մը աւելի կը մօտենայ իր գերեզմանին: Մենք վերջացած ենք այլեւս":

135 տարուան հայկական կուսակցութեան մը մէկ ղեկավարը, Եւրոպայէն, այցելելէ ետք միջինարեւելեան մեր գաղութները, մտերմաբար կը խոստովանի."Տասնամեակներ շարունակ վազեցինք շողշողուն լոզունգներու ետեւէն: Միրեցինք փողն ու թմբուկը...: Մարդու չկրցանք պատրաստել: Այժմ, մօտէն քննելէ ու արժեւորելէ ետք մեր կուսակցութեան վիճակը Միջին Արեւելքի երբեմնի հայահոծ կեդրոններուն մէջ, անկեղծօրէն պիտի խոստովանիմ, թէ մենք վերջացած ենք...":

Հայ կուսակրօն հոգեւորական մը, անբասիր ու պարկեշտ, վերջերս կը գանգատէր." Մեր եկեղեցին դէպի անկում կ'երթայ: Անոր ու ժողովուրդին միջեւ հաստ պատ մը կայ: Կոչումներն ալ չափազանց պակասած են: Արժեքաւոր հոգեւորականներու թիւն ալ հետզհետէ կը պակսի: Վաղը արժանի թեկնածուներ անգամ պիտի չգտնենք մեր նուիրապետական աթոռներուն համար":

Հալէպի մեր ուսուցչուհիներէն մին, սրտցաւ ու անկեղծ, քանի մը օր առաջ կը գանգատէր ինծի." Ի՛նչ պիտի ըլլայ հայերէնի վիճակը մեր դպրոցներուն մէջ: Աշակերտներուն ջախջախիչ մեծամասնութիւնը երկու նախադասութիւն անսխալ գրել չի յաջողիր: Շատեր սահուն կարդալու անատակ են: Պատասխանատու մարմիններուն անտարբեր նայուածքին տակ՝ սերունդը կ'օտարանայ: Մենք վերջացած ենք":

Լոս Անճելըսէն բարեկամ բժիշկ մը, որուն թոռները ամերիկահայ վարժարան մը կը յաճախեն, կը դժգոհէր ինծի."Այո՛, թոռներս հայկական դպրոց կ'երթան, սակայն հայերէն կը խօսին միմիայն ինծի՛՝ հետ: Կ՛երեւի թէ չեն ուզեր նեղացնել մեծ հայրիկը...: Այլապէս, իրենց ամբողջ խօսակցութիւնը անգլերէն է՝ տունը, փողոցը, թէ դպրոցը: Հոս, Ամերիկայի մէջ, մենք վերջացած ենք":

Մշակութային մեր միութիւններէն մէկուն վարչականներէն մին ինծի պատմեց հետեւեալը."Ժողովի մը ընթացքին առաջարկեցի գրական ձեռնարկ մը սարքել Եղիշէ Չարենցի մասին: Ժողովական մեր ընկերներէն մին հարց տուաւ, թէ Չարենցը ո՞րք էր

արդեօք...: Շշմեցայ: Այսպիսի վարչականներն՝ վ յառաջ պիտի ընթանայ մեր մշակութային առաքելութիւնը...: Մենք վերջացած ենք":

Հայրենակցական երբեմնի փառաւոր միութեան մը մէկ վարչականը անցեալ օր գլուխը օրօրելով կ'ըսէր. "Ալ ո'չ միութիւն մնաց, ո'չ անդամ: Մերունդը իր պապերու բնօրրանին նկատմամբ պատկանելիութիւն չի զգար այլևս: Տոհմային ապրում չկայ: Այս տարի վերջին անգամի մը համար պատի մեր օրացոյցը պիտի հրատարակենք ու ապա լուծարենք միութիւնը...: Մենք վերջացած ենք":

Լ. Շառոյեան (Հալէպ)

«ՓԱՐՏՕՆ ԸԻԿԵՐԻՄ» ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ՀՈԳԵԱԿՍ



Վերջերս կը քալէի հայահոծ Պուրճ Համուտի նշանաւոր «Արաքս» փողոցին մէջ, երբ յանկարծ լեցունկեկ տիկին մը բախեցաւ ինձի: Պահ մը զգացի, որ մարմինս քայլ մը ետ գնաց ու կորսնցուց իր հաւասարակշռութիւնը: Մինչ ձեռքերս օդին մէջ ձօճուելով կառչելու տեղ մը կը փնտտէին, նոյն տիկինը կայծակի արագութեամբ իր գոյգ ձեռքերով ամուր բռնեց զիս եւ կանխեց անկումս: Ապա յանցաւորի ու ներողութիւն հայցողի արտայայտութեամբ, աչքերուս մէջ նայեցաւ ու քաղցր ձայնով «Փարտօ՛ն, ճիկերի մ» մը ըսաւ, որ սիրտս տեղն ու տեղը հալեցուց: Սիրուն կնոջ կանաչ աչքերուն մէջ այնքան բարութիւն կար, որ իսկոյն մոռցայ վախս ու գետին փռուելու հաւանականութիւնս: Ժպտացի ու ըսի. «հոգ չէ ճանս, կը պատահի»:

Խեղճ կինը, այնքան մտազբաղ էր, որ նոյնիսկ գոյութիւնս չէր նկատած:

Կը շարունակեմ ճամբաս, կը փորձեմ յաղթահարել Պուրճ Համուտի հրապարակին մօտ գտնուող «սանտուիչ»ի խանութներուն առջեւ գոյացած խճողումն ու եռուզեղը: Եւ ասիս երիտասարդ մը, զինուորական

բարեւով կը դիմէ այլ երիտասարդի մը եւ խրոխտ շեշտադրութեամբ կ'ըսէ. «Յարգանքնէ րս, Տօնակա՛ն»: Ակնթարթի մը մէջ ուղեղս կը զուարճանայ եւ մտքովս կ'ըսեմ. «Օ՛հ, Տօնական, այս ինչ եզակի անուն է, մաս-մաքուր, հայկական անուն: Բնաւ չէի լսած. արդեօք ովքե՛ր են Տօնականին ծնողները...»:

Անմիջապէս «իմ գմայլած» Տօնականս կը պատասխանէ. «Էհլէ՛ն, դուրպա՛ն»(բարեւ մատաղ):

Ժպիտ մը կ'որուագծուի դէմքիս վրայ ու ճամբաս կը շարունակեմ, հետս «շալկած»՝ «Փարտօն ճիկերիմ»ն ու «Էհլէն դուրպան»ը:

Բաւական իւրայատուկ «բեռ» մըն է, որ հատած է անցեալի քարքարոտ շառաւիղները ու ծաւալած է աշխարհագրական տարբեր վայրերու ազդեցութեան տակ. վկայ ֆրանսական «փարտօն»ը, թրքական «ճիկեր»ն ու «դուրպան»ը, լիբանանեան «էհլէն»ը:

Անձիս հարց կու տամ. «Միլվա՛, այս շատ դիպուկ եւ մեզի «հարազատ» արտայայտութիւնները, որո՞ւ հետ կրնաս կիսել...»: Եթէ անձ մը արեւմտահայ արմատներ չունի եւ միջին արեւելքի մէջ չէ ապրած, անկարելի է, որ ըմբռնէ այս խօսքերուն հոգին:



Օտարին ինչպէ՛ս բացատրես ճիկերը՝ կենսաբանական սահմանումո՞վ, թե՛ մարմնի մէջ ունեցած իր խիստ կարեւոր դերով...: Եթէ ենթական իր մեծ մօր, կամ հօր շրթներէն «ճիկե՛ր»ս կամ «դուրպա՛ն»ս բառերը չէ լսած, անկարելի է, որ ընկալէ այդ բառերուն պարփակած սէրը, գութը, նուիրումը...: Մինչ սփիւռքահայը, որ շրջապատուած էր վերապրող սերունդով, ամենօրեայ դրութեամբ լսեց իրայատուկ խօսելառձ՝ «շաղախուած» օտար բառերով, առածներով եւ ասոյթներով:

Ինքս ինձի կը պատասխանեմ. «Լաւ, Սիլվա՛, պահ մը մոռցիր օտարները: Արդեօք ժամանակը չէ՞ հասած, որ մենք հրաժարինք օտար բառերու գործածութենէն եւ փոխարինենք «ճիկեր»ը մեր մաս- մաքուր՝ հոգեակով, հոգեհատորով...:

Այո՛, ժամանակն է...: Միշտ ալ ցանկութիւնս եղած է Հայերէնը լսել անաղարտ ու հեռու օտար թափանցումներէն, բայց եկուր պահ մը այսպէս մտածենք: Արդէն իսկ այս բառերուն տէրերը՝ արտասանողները, մեզմէ առյաւէտ հեռացած են: Թող աստէնը մէյ մը հնչող այս «խորթ» բառերը ընկալուին, որպէս արձագանգները մեր նախնիներուն...: Ըլլան պատմական յիշեցում եւ ապացոյց, անոնց ապրած միջավայրին եւ եղերական՝ ողիսականին...: Թող այս բառերը ծառայեն, որպէս սահագանգ ու զգաստութեան խթան՝ լրջօրէն սերտելու մեր սեւ անցեալը եւ ներկայ աշխարհի ընկերային ու քաղաքական սպառնալիքները... որպէսզի կարենանք հմտութեամբ դիմագրաւել մեր դիմաց ծառացող այժմու եւ ապագայի մարտահրաւերները:

ՅԻՇԱՐԺԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԸ՝

«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ»

(ԵՐԵՒԱՆ, 2024)

ԵՐԱՆ ԿԵՐԹՄԵՆԵԱՆ-ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ.

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ԵՒ ԵՐԱՆԱԻԷՏ՝ ՅՈՒՇԱԳՐՈՂԸ, ԽՈՐՀՐԴԱԾՈՂԸ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Նորութիւն ըսած պիտի չըլլանք, ոչ ալ գաղտնիք մը բացայայտած, որ ստեղծագործական գիրքերը եւ հրատարակութիւնները համարեա նահանջի մէջ են, թե՛ հեղինակներու, թե՛ ընթերցողներու կողմէ:

Աւելին. գիրքը առհասարակ դարձած է անբաղձալի, նաեւ մամուլը, որոնք, կար ատեն, երբ անոնք կը հանդիսանային հայ մտքի, դպրութեան, լեզուի, գրականութեան դափնեպսակներ, իսկ այսօր, անոնք, մեծ մասամբ, լքուած են, անտեսուած, մոռցուած ու նոյնիսկ... արհամարհուած:

«Ինչո՞ւ»ն հարցադրելը ու պատասխանատուներ փնտռելը, երկա՛ր պատմութիւն է, որուն մասին, ինչպէս ես, նաեւ բազմաթիւ գրիչներ բարձրաձայնած են, արտայայտուած, բացատրած, մեկնաբանած կամ ախտաճանաչած, սակայն, անկումը, սահանքը, գահավիժումը անարգել շարունակուած են, «անապատային» կարգավիճակ ստեղծելով ամենուրեք:


Հայաստանը, որ հայ լեզուի ու գրականութեան, պատմութեան ու բանասիրութեան անսպառ ու բերրի շտեմարան էր, անիկա եւս կը տառապի նոյն ցաւերէն ու խոցերէն,



սակայն, ոչ Մփիւռքի տարողութեամբ եւ ահաւորութեամբ, որովհետեւ, հոն տակաւին կան «հունտ»երը եւ «ենթահող»երը, սնուցանող արմատներով:

Այդուհանդերձ, հոն ալ սփոփիչ ու մխիթարական եզրեր գտնելը սկսած են խամրիլ, երբ գրողներն ու մտաւորականները առաջին գիծի վրայ չեն, այլ խօսքով, հրապարակներու, ուր իրենց գործերով ու ժառանգներով դառնային մարդկային-մտային գերուժեր, փորձելով վերյիշեցնել Խորհրդային Հայաստանի պանծալի ու պատուաբեր դէմքերը, իրենց հարուստ գրականութեամբ ու բազմաբիրաւոր ընթերցողներով, մինչ, ամէն քայլին, կրպակ մը, գրատուն մը, գրախանութ մը, գրադարան մը կար, միշտ բազմամարդ ներկայութիւններով ու շարքերով:

Անշուշտ, մէկ կողմէն՝ Հայաստանին վիճակուած մտահոգիչ կացութեանը, միւս կողմէն՝ Մփիւռքին առջեւ ծառացած մարտահրաւերները, իրենց զանազան ու բազմազոյն ելեւէջներով, յաւելեալ պատճառներ են, որ հայ գիրն ու գրականութիւնը, հայ մամուլն ու գիրքը մնան շուքի տակ, իսկ այս ընթացքը, իր շարունակականութեամբ եւ յարատեւութեամբ, անտարակոյս, մութ ու մռայլ ապագայի մը նշանները կը յուշէ, առանց որ գտնուին այն միջոցներն ու դարմանումները, որոնք, կրնան առնուազն զսպել թաւալգլորութեան թափը, այնքան ատեն որ՝ հորիզոնի վրայ չեն տեսնուիր ու չեն գտնուիր լուսապսակ առիթներ ու պայմաններ եւ չկան յուսադրող եւ յուսալի հեռանկարներ:



Այս հպանցիկ, բայց, խորապէս մտահոգող ու նոյնիսկ ցնցող գորշ երեւոյթներու լոյսին տակ, անշուշտ, պիտի ըլլային նաեւ գօտեպնդող ու հպարտացնող որոշ ձայներ, որոնք իրենց ներդրումներով ու գրիչներով, ստեղծագործութիւններով ու հրապարակագրութիւններով, զգալիօրէն կը մնան պատնէշի վրայ:

Ոչ միայն իրենց ներքին եւ անհատական զգացումներուն, խորհրդածութիւններուն, սկզբունքներուն, հայեացքներուն, տեսակէտներուն ու տեսիլքներուն յագուրդ տալու համար, այլեւ՝ մնալով իրենց առաքելութեան ճամբուն վրայ, անյողողող, անառիկ եւ անդրդուելի, ի ծառայութիւն իրենց կոչումին կառչածութեան եւ ընթերցող հասարակութեան գոհունակութեան (որքան ալ ըլլայ նօսրացած, բայց յարգելի մասնակցութեամբ):

Ահա այսպիսի խճճուած, խոպան եւ անմշակ իրադրութեան մէջ կը գտնուի մեր միտքի ու գրիչի մտաւորական սերունդը, որ իր նախորդներէն ժառանգած ըլլալով հանդերձ, իր բնատուր արժանիքներուն բիրեղացումը, հասունացումը, կազմաւորումն ու բարեկարգումը, առանց ընկրկելու ու տատանելու, երբ կը փորձէ հաւատարիմ մնալ իր ակունքներու ձայնին



Եւ անոր ծառայելու վեհանձնութեան, սակայն, այլընտրանք չգտաւ տարբեր ուղիներով զարգացնելու իր մտաւորական հնարքները, հարագատ կրողը դառնալու անոնց կայացման եւ իրականացման փայլուն օրինակին:

Երան Գույումճեանը կը պատկանի այն սերունդի փաղանգին, որ՝ ի սկզբանէ, իր դպրոցական տարիներէն, արդէն ունեցած էր կայծ ու խայծ մը, ներքնապէս թէ հոգեպէս, հաղորդուելու եւ ապացուցելու իր ներաշխարհի այն «գանձ»ը, ուրկէ ան վերածնունդ կ'ապրէր՝ դէպի անհունութեան, երանութեան ու շնորհալիութեան, քաջ գիտակցելով որ ատիկա էր իր աշխարհամտածողութեան, մարդակերտութեան, ազգապաշտութեան, հայրենասիրութեան ու հայապահպանութեան հիմնական եւ անփոխարինելի ուղին:

Իր վաղեմի թէ յետայնու գրական շնորհները, բանաստեղծական ոլորտներով, քառեակային տարբերակներով, ազգային-հասարակական ելոյթներով, հրապարակագրական-խմբագրական գրառութիւններով, միութենական-կրթական գործունէութիւններով, արդէն ցոյց կու տային, որ Երանը չէր կրնար մնալ «նեղ» սահմաններու մէջ, քանի անոր աշխատանքային-ազգային դաշտը չէր կրնար «ստորուկ»ը դառնալ միայն որոշակի սահմաններու մէջ, այլ անոր վիճակուած էր դառնալու աւելի լայն ու համապարփակ արժոյթներու շարունակուող ու բարգաւաճուող ամրակուող հանգրուան, ինչ որ յետագայ տարիներուն դարձաւ ճշմարիտ իրականութիւն մը, իր շինիչ նպաստներով, բերրի արտադրութիւններով եւ հրաշալի իրագործումներով:

Եւ ահաւասիկ հրապարակի վրայ է իր պատկառելի նոր գիրքը (թիւով հինգերորդ)՝ «ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» խորագիրով, որ լոյս տեսած է Երեւանի մէջ, 2024ին, եւ որուն շնորհահանդէսը տեղի ունեցած է հոն, իր ներկայութեամբ, նաեւ հայաստանցի մտաւորականներու ու գրողներու ընտրանիի մը մասնակցութեամբ:

Գիրքը կը բովանդակէ չորս գլխաւոր բաժիններ հետեւեալ կարգով.

Ա. «Յուշագրութիւններ» (13-259)

Բ. «Բանախօսութիւններ եւ Խօսքեր» (Էջ 263-313)

Գ. «Հրապարագրութիւն» (Էջ 317-403)

Դ. «Բանաստեղծութիւններ» (Էջ 407-562)

Գիրքը կը բաղկանայ 576 էջերէ ու «Ձօն»ուած է. «Բոլոր այն հայկազուններուն, որոնք զէն ի ձեռին քաջաբար կուեցան ի պաշտպանութիւն հայրենայց սուրբ հողին ու բարձր պահեցին ազգային մեր արժանապատուութիւնը»:

Գիրքին խմբագիրն է՝ հանրածանօթ պատմագէտ, գրականագէտ, հրապարակագիր ու հասարակական գործիչ՝ Գեորգ Եազրճեանը, որ, ինչպէս միշտ, բժախնդրօրէն, աչալրջօրէն ու բարեխղճօրէն, իր կոչումին հաւատարմութեամբ ու հարագատութեամբ, լիովին կատարած է իր պարտականութիւնը, արժանին մատուցելով ու գնահատելով Երանին վաստակն ու նպաստը իր բնաշխարհէն ներս:

Իսկ կողքերու շքեղ ու գրաւիչ նկարը գործն է հայրենի տաղանդաւոր նկարիչ ու արուեստագէտ, Շմաւոն Շմաւոնեանի, որ իր հայաբոյր տեսարաններով ու պերճախօս երանգներով, ոչ միայն փայլ տուած է գիրքին, այլեւ իմաստաւորած ու նշանաւորած է անոր էութիւնը եւ լիարժէքութիւնը:

Հեղինակուհին, իր «երկու խօսք»ին մէջ (էջ 7-9), պարզած է իր գիրքին տուն տուող պատճառները, շարադրելով իր հակիրճ մտորումները, զուսպ ու զգաստ ոճով, տալով անոնց բովանդակութիւններուն ուրուագիծը, ընթերցողին առջեւ ուղի բանալով, նաեւ՝ նախաճաշակ մը, աւելի մօտէն ու մանրամասնօրէն շփուելու, ծանօթանալու, ըմբռնելու ու լիանալու անոնցմով, հաւատալով «որ իր տուածով երջանկացած ու թելաւորուած է այդ



երջանկութենէն (եւ) այդ բերկրանքէն բաժին հանելով (բոլորին) տո՛ղ առ տող, բա՛ն առ բառ»:

Ա. «Յուշագրութիւններ»ը, Երանի կենսագրութեան ընդմէջէն, պայծառաշող ամբողջ վաւերական գրականութիւն մըն են ուր ան՝ ծանօթին թէ անծանօթին կը տանի այն բեւեռներէն, որոնցմէ կրնան անցած կամ ապրած ըլլալ շատեր, հետեւաբար, ընթերցումը անոնց նոր լուսաւորումներով ու ցոլքերով կը վերակենդանանան, քաղցրահունչ յիշատակներով վարակելով ընթերցողները:

Երանը, իրեն յատուկ ոճով, անմիջականութեամբ ու զգացականութեամբ, գիտէ իր նախասիրած «հերոս»ներուն տալ կենդանութիւն, իսկ նկարագրած դէպքերուն կամ երեւոյթներուն պատումները այնքան շօշափելի եւ իրապաշտելի են, որոնցմով ընթերցողը ինք եւս կը վայելէ այդ պահերը, ջինջ ու վտիտ տպաւորութիւններով:

Իր ծննդավայրը, ընտանիքը, վարժարանները, համալսարանը, այցելութիւնները, հանդիպումները, գողտրիկ դրուագները ուխտագնացութիւնները ու ծանօթութիւնները բազմաթիւ ազգային մեծամեծներու հետ (որոնց ցանկը երկար է), իրօք, կը կազմեն հայաբոյր, մարդաշէն, ազգաշունչ եւ ընկերասիրական մթնոլորտներ եւ ընթերցողին մօտ կ'առաջացնեն ակնդէտ հետաքրքրութիւն, այլեւ՝ զանոնք ընկալելու ու բաշխելու վայելք, մանաւանդ երբ անոնց մեծ մասը կրնայ հարազատ թուիլ, ոչ անպայման ուղղակիօրէն, այլ գրառութեան հաճելի ու փոխանակելի յոյզերով կամ զգուանքներով:

Բ. «Բանախօսութիւններ եւ Խօսքեր»ը, որոնք գլխաւորաբար կը պատկանին այնպիսի առօրեայ եւ այժմեական նիւթերու, որոնք հասարակութիւնը կը հետաքրքրեն եւ օրուան կարեւոր իրադարձութիւններէն կրնան ըլլալ, ինչպէս՝ «Զօրավար Անդրանիկ»ը, «Հայ գիրքին արժէքն ու կարեւորութիւնը», «Կինը որպէս մտաւորական», «Հայ մամուլ»ը, «Վարդանանց Խորհուրդը», «Մայրը» եւ այլն, որոնք բոլորն ալ, իրենց արժեւորումներով, հպումներով թէ ոգեկոչումներով, արժանի են համապատասխան հրապարակայնութեան եւ արձագանգներու, զանոնք բերելով լոյսի, լուրջ ու լիաբուն դիտարկումներով:

Երանը, այս ուղղութեամբ՝ միշտ ալ եղած է առաջամարտիկ, իր գունազեղ լեզուով, հաղորդական եղանակով ու համոզիչ դրոյթներով, գրաւելով հանրութիւնը եւ իր խորհրդածութիւններով տպաւորելով ներկաները, ամենայն պարզութեամբ ու համեստութեամբ, նաեւ լաւագոյն դրսեւորումներով:

Գ. «Հրապարակագրութիւն»ը, Երանին համար այն հարթակն է, ուրկէ ան համարձակօրէն եւ յանդգնօրէն ազգային հիմնահարցեր, թեմական նիւթեր, հայրենական հարցեր, գաղութային խնդիրներ եւ առհասարակ օրուան հոլովոյթներուն հետ առընչուող զարգացումներուն անդրադառնալու պարտականութիւնն ու մասնակցութիւնը բերելու առիթը կ'ունենայ իր խօսքը լսելի դարձնելու, տեսակէտը պարզելու, մեկնաբանութիւնը կատարելու կամ վերլուծութիւնը ներկայացնելու:

Այդ պարագաներուն, անիկա խիստ սկզբունքային է, անզիջող եւ անայլայլ, որովհետեւ ատոնք կը բխին իր ազգային հաւատամքներէն եւ անհատական համոզումներէն, որոնցմէ երբեք չի կրնար հրաժարիլ:

Պատահական չէ, որ ան ունի ընթերցողներու լայն... բանակ, ջատագովներու շարան, իսկ աւելի ազատ եւ անկաշկանդ զգալու համար, 2011էն ի վեր, հիմնած է իր գլխաւորած ու խմբագրած «Ազատ Խօսք» համացանցային թերթը:

Այս բաժնով, Երանը ի մի բերած ու հաւաքագրած է իր այն հրապարակագրութիւնները, որոնք ամէնէն աւելի պահանջելի եւ ընթերցելի են, որովհետեւ անոնց վրայ հիմնուած են՝ մեր ազգային գոյութեան կռուանները, իրենց սրբագրելիութեամբ, ապա՝ օրինակելիութեամբ:



Դ. «Բանաստեղծութիւններ»ը, վստահաբար, Երանին ամէնէն սիրած ու պաշտած կալուածը բանաստեղծութիւնն է, նախ՝ որպէս իր փափկանկատ բնաւորութեան հետ հաշտ ընթացող արտայայտամիջոց, ապա՝ ըլլալով իր հոգեցունց «որդեգիր»ը, որմէ կը ներշնչուի ու կը ներշնչէ, համարեա ամենօրեայ դրութեամբ կամ... արագութեամբ, բիւրաւոր հետեւորդներ ու հիացողներ ունենալով:

Երանին բանաստեղծութիւնները, զգացականութենէն աւելի, առարկայական եւ իրապաշտական են, քանի որ, ան երբ կը ստեղծագործէ ու կը հնչերգէ, ատոնք հիմնուած կ'ըլլան զուտ վարակող տուեալներու վրայ, սակայն, միշտ հիւսուած բանաստեղծական շունչով եւ բարբախուն ոգիով:

Անոնք որոնք հետեւած են կամ ծանօթ են Երանին բանաստեղծական արուեստին կամ անոր երկնային եւ երկրային շնորհքներուն, կրնան հաւատալ, որ ան իսկական ծնունդն է այդ բարիքներուն ու զգացումներուն:

Թերեւս մեր վերոյիշեալին հաստատումն է, որ այս բաժինը ամէնէն ճոխն ու հարուստն է, իր իսկ ընտրանքով, բանաստեղծութիւններու ամբողջ «փունջ» մը ընտրելով ու ներկայացնելով ընթերցողին:

Բանաստեղծութիւնը դժուար արուեստ է ու պատասխանատուութիւն ենթադրող գրական կամար մը, որմէ ներս ամէն ոք չի կրնար մուտք գործել, բայց, Երանը «ռեբիկոն»ը յաջողութեամբ կտրած է ու կը շարունակէ իր թռիչքը... անտեղիտալիօրէն:

Վերջաւորութեան (էջ 571-572) Երանը զետեղած է իր կենսագրութիւնը, որ ինքնաբացատրական է եւ ուսանելի, ի տես իր բազմատեսակ ճոխ գործունէութիւններուն եւ արտադրութիւններուն, ինչ որ աւելիով կը շեշտէ իր վաստակին ու ներուժին արժանիքները:

Բախտաւորութիւն է, որ հակառակ ներկայ դժնդակ, բարդ ու ժուժկալ պայմաններուն, երբ հայ գրականութիւնը ու գրողը կը տառապին բազմաթիւ ցաւերէ, կը դիմագրաւեն լուրջ տագնապներ, կան Երանի նման երախտաւորներ, որոնք հայ գիրի ու գրականութեան կամար ու նուիրեալ զինուորագրեալներ են ու կը շարունակեն հաւատարիմ մնալ իրենց կոչումներուն ու պատուով կը ծառայեն իրենց առաքելութեան:

Ապրի՛ս Երան, շունչդ անսպառ, գրիչդ դալար, երթո՛ր բարի ու նորանոր յաջողութիւններով պսակես վաստակդ ու հարստացնես հայ գրականութեան անդաստանը ու լիովին լիցքաւորես Մեսրոպեան Ոսկեայ ոգեղէն հարստութիւնը:

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

(Պէյրութ)

30/7/2024

ՆԱՄԱԿԱՆԻ



Այս կարճ բայց խիստ բովանդակալից գրութիւնը ԱԶԱՏՈՒՇԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ՝ իր թոյլտութեամբ կը հրապարակեմ, քանզի իր գնահատական անկեղծ խօսքը՝ ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ զիրքիս մասին, արժանի է ուշադրութեան: Ան ցուցանիշ է յատկապէս այն փաստին որ արեւմտահայերէն զիրքը տակաւին ունի իր ընթերցողները եւ պիտի շարունակուի ի փառս արեւմտահայերէն լեզուին ու մշակոյթին:

Միրելի Երան,


Հնայուած եմ այս հատորովդ որ ամփոփումն է քու ամբոջական վաստակիդ:

Իսկական յաջորդը Միրան Սեզային, անոր համարձակ գրիչին՝ որ կը ձաղկէ հայ ընկերութեան մէջ բոյն դրած սխալ բարքերը:

Հրապարակագրութիւն մը՝ երբ կը սպասէ ընթերցողը թէ ինչ պիտի ըսէ Երանը տուեալ նիւթին շուրջ:

Յուշագրութիւն մը՝ որ կը համակէ ընթերցողը վերապրելու հեղինակին հետ անոր ապրումներուն պատճառ հանդիսացող անձերուն ու վայրերուն՝ հոգեշունչ վայելքը: Ծննդավայրն ու ծնողները, կրթական օճախներն ու սիրելի անձնաւորութիւնները՝ գրական դէմքերն ու կրթական մշակները:

Բանախօսութիւնները՝ ուկնդիրները զգաստ պահող առաւելութեամբ եւ ճշմարտութիւնը՝ հրապարակելու քաջութեամբ:



Բանաստեղծութիւն մը՝ որ հոգիի արտացոլումն է իր ներքին ապրումներով, տուայտանքներով, թռիչքներով ու յոյզերով:

Այս հատորը կը մարմնաւորէ Երանին լիիրաւ մտաւորական ու գրող ըլլալու հանգամանքը: Ինչպիսի մտաւորական պաշար ու հայագիտական կազմաւորում ունի ան:

Լեզուն շատ յարգելի արեւմտահայերէն, է խիստ գրաւիչ:

Հայաստանի հանդէպ բացառիկ սէր ունի Երան եւ այն ամէն ինչին որ կապ ունի Հայաստանի հետ:

Հայերէն լեզուին հանդէպ պաշտամունքի հասնող սէր ունի: Կը գուրգուրայ անոր ամէն մէկ բառին վրայ ու յատկապէս արեւմտահայերէնի պաշտպանութեան նուիրուած ախոյեան մըն է:

Հատորը իր ամբողջութեանը մէջ արեւմտահայերէնի լաւագոյն արտայայտութիւններէն մէկն է:

Մփիւռքահայ գրականութեան ածուին պատուաբեր մէկ ընձիւղումն է սոյն հատորը:

ԱԶԱՏՈՒՀԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ ՍԻՄՈՆԵԱՆ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Գեղեցիկը ներդաշնակութեան մէջ է...Եթէ գեղեցիկ արտաքինին ներքեւ չկայ ներքին գեղեցկութիւն, յայնժամ արտաքին փայլը կը դառնայ փուչիկի նման բան, որ կը պայթի շուտով, ոչինչ թողելով իր ետին:

.....

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ...Այս դարուն հիւանդութիւնը չէ՞ այս, որ իր վիթխարի ձուլարանին մէջ կը միտի համաձուլելու մարդ էակը, զայն պոկելով իր ազգային արմատներէն, պատմական անցեալէն, իր հարազատ լեզուէն ու մշակոյթէն....զայն վերածելու դիմագուրկ, հոգեգուրկ եւ ոգեգուրկ արարածի, որպէս մէկ չնչին պտուտակը հսկայական գործարանի մը...: Իսկ այդ գործարանը չէս գիտեր թէ որուն կամ որոնց կամքով ու տնօրինումով կը բանի եւ յանուն որո՞ւն կամ որո՞նց շահերուն: Համաշխարհայնացումը համազօր է մարդուն ապազգայնացման եւ անմարդկայնացման:

.....

ՎԱԽԿՈՏ մարդն ու հասարակութիւնը կրնա՞ն երբեւէ յառաջդիմել, երբ կը լռեն անարդարութեանց եւ անիրաւութեանց դէմ, երբ կրաւորական կեցուածք կը ցուցաբերեն իրենց արժանապատուութիւնը խոցող երեւոյթներուն դիմաց, երբ կուրօրէն կ'ենթարկուին կամ կը համակերպին այլոց հրահանգներուն կամ կարգադրութիւններուն, առանց հարցադրելու անոնց իրաւացիութիւնը, երբ կորսնցուցած են իրենց սրբազան ըմբոստութեան ոգին, կորովն ու կամքը: Նման անհատն ու հաւաքականութիւնը դատապարտուած կ'ըլլան հոգեկան ՄՏՐԿԱՅՄԱՆ որոշապէս, այսինքն՝ ՀՈԳԵԿԱՆ ՄԱՀՈՒԱՆ:

.....

Մարդ արարածը ԱԶԱՏ ըլլալու դատապարտուած է...Ի՛նքն է որ պիտի կերտէ իր կեանքը համաձայն իր բաղձանքներուն, ներքին մղումին, երազանքին, կամքի, ոգիի ոյժին, բանականութեան...: Ո՛չ մէկ գիրք թէ դասագիրք, ոչ մէկ ուսուցիչ թէ ծնողք կրնայ քեզի համար ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ կատարել, որքան ալ անոնց խորհուրդները քեզ ներշնչեն, որոշ ուղղութիւն տան...: Դուն եւ միայն դուն պիտի կատարես քու ԸՆՏՐԱՆՔԴ, դուն եւ միայն դուն ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒ պիտի ըլլաս ԸՆՏՐԱՆՔԻԴ համար...: Շատեր խուսափելու կամ խուսանաւելու եզրեր կը գտնեն, այդ ազատութեան եւ պատասխանատուութեան բեռը չկրելու, զայն ուրիշին վրայ բարդելու համար...: Բայց կեանքը դարձեալ եւ դարձեալ կը



հաստատէ այն անհերքելի ճշմարտութիւնը, որ մեզմէ ԻԻՐԱՔԱՆՉԻՐԸ, ուզենք կամ չուզենք, ԱԶԱՏ ԸԼԼԱԼՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ Է:

.....

Մեծ գիտնական ԱՅՆՇԹԱՅՆԸ իր հաւատքը բանաձեւեր է որպէս «տիեզերական կրօնական զգացում»..., որ վստահաբար վեր է ամէն տեսակ կրօններէ...: Սա այն խոր երկիւղածութեան, սքանչացումի, տիեզերականութեան զգացումն է, ըստ իս, որ մարդ էակը կ'ունենայ երբ տիեզերքի եւ բնութեան հրաշք-ներդաշնակութեան առջեւ գտնէ ինքզինք, եւ կը խորզայ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ կամ ԱՐԱՐԻՉԻՆ ներկայութիւնը...: Երբ կը դիտենք արեւածագը, երկնքի անսահմանութիւնը, մայրամուտը, լուսինն ու աստղերը, ծաղկող բնութեան զարթօնքը...երբ կը զգանք անոնց խորին խորհուրդը, յայնժամ մեր սիրտերը կը լեցուին խոր հիացումով, կը մեծնան, կ'աճին, կը նոյնանան տիեզերական շունչին հետ...Ի՞նչ կոչել այս զգացումը, եթէ ոչ անբառ ԱՂՕԹՔԻ պահ, տիեզերական կրօնական խորապրումի պահ: Կա՞յ զգացումի, մտածումի, բանականութեան ՏԷՐ ոեւէ մարդ էակ, որ էապէս չունենայ նման խորապրումի պահեր...: Իսկ եթէ կայ, խորապէս ԽՂՃԱԼԻ է ան:

.....

ՃՇՄԱՐԻՏ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ համար, պիտի պեղել պատմութիւնը՝ մակերեսային դէմքերէն եւ դէպքերէն շատ անդին, պիտի զայն վերլուծել խոր թափանցամտութեամբ, փորձել տեսնել իրադարձութեանց եւ երեւոյթներու կապը, չտարուիլ երբէ՛ք այն ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՄԲ, որ կ'իրականացուի շատ յաճախ՝ աշխարհի սանձերը իրենց ձեռքին պահած եւ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԱԿԱՆ նկրտումներով առաջնորդուող խումբ մը մարդկանց կողմէ, որոնք կը ՁԵՌՆԱՎԱՐԵՆ աշխարհը եւ աշխարհի մարդիկն ու ազգերը որպէս իրենց ՀԼՈՒ-ՀՆԱԶԱՆԴ ԽԱՄԱՃԻԿՆԵՐԸ...ՊԻՏԻ ԼԱՅՆ ԲԱՆԱՆՔ ՄԵՐ ԱԶՔԵՐԸ, ՄԵՐ ՄԻՏՔԸ, ՅԱՅՏՆԱՏԵՍԱԿԱՆ ՄԵՐ ԲՆԱԶԴԸ, եւ վերջապէս արթնանք մեր թմբիքէն, ըմբռնելու համար թէ Ի՛ՆՉԸ ԻՆՉՈ՞Յ Է, Ո՞ՒՐ ԵՆՔ ՄԵՆՔ, ՈՒՐԿԷ՞՞ ԿՈՒ ԳԱՆՔ ԵՒ Ո՞ՒՐ ՊԻՏԻ ԵՐԹԱՆՔ:

.....

Ներկայ սպառողական հասարակութեան գլխաւոր չափանիշը ՆԻՒԹՆ Է, ԴՐԱՄԸ: Նոյնիսկ երբ համալսարանական կրթութեան մը բարիքները կը քննարկուի, բուն շեշտը կը դրուի ԴՐԱՄԻՆ վրայ, թէ որքա՞ն նիւթական ՇԱՀ կրնայ ապահովել համալսարանական ուսումը անհատին համար: Կարծէք միւս բաները կարելոր չեն՝ մտահորիզոնի ընդլայնում, գիտակցութեան խորացում, մտածել սորվելու ունակութեան զարգացում եւ նման բաներ...: Հասարակութիւն մը որ ստրկացած է ՆԻՒԹՆ կրնա՞յ սակայն ԱՐԺԷՔԱԻՈՐ ընկերութիւն մը ստեղծել:

.....

Կեղծիքը դարձեր է աշխարհի դէկը իրենց ձեռքին պահել փորձող աշխարհակալ ուժերու գլխաւոր գործիքը...Կեղծիք՝ պատմութեան մէջ, կեղծիք՝ տեղեկատուութեան մէջ, կեղծիք՝



շուկայական «արժէք»ներու տեսքով...Կեղծիք՝ առողջապահութեան, սնունդի, ապրելակերպի, բարոյական-մշակութային արժէքներու մէջ...Խօսքն անգամ կորսնցուցեր է իր իմաստը եւ դարձեր է խաբելու գործիք: Ամէն տեղ է կեղծիքը սերմանուած, որպէսզի ՄԱՐԴԸ, ԱԶԳԸ հասու չդառնան բուն իրականութեան, բուն ճշմարտութեան եւ խարխափեն ու մոլորուին յանուն իրենց աշխարհակալութեան հաստատման եւ ամրապնդման...ՍԹԱՓԵԼՈՒ ՊԱՀՆ Է: Սիրտն ու բանականութիւնը կրնան վկայել ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, եթէ սթափ մնան մեզ շրջապատող կեղծիքին մէջ եւ չմոլորուին:

.....

Կեանքի ընթացքը կարելի է նմանցնել գիտակցութեան աստիճանակարգի, որուն իւրաքանչիւր սանդիսամասը բարձրանալով՝ գիտակից կը դառնանք մեր գոյութեան բուն իմաստին ու նպատակին, մերթ խոկալով ու վերլուծելով դէպքերն ու երեւոյթները, մերթ կարդալով մեծերու միտք-ապրումները, մերթ ալ դասեր քաղելով մեր եւ այլոց կենսափորձէն: Գիտակից կը դառնանք էականին, զայն զատորոշելով մանր եւ չնչին հարցերէն եւ կ'իմաստնանանք տակաւ: Ոչինչ պատրաստ չի հրամցուիր մարդուն, որ պարտի ի՛նք առանձինն իմաստաւորել եւ արժեւորել ամէն ինչ, կազմել իր հաւատոյ հանգանակը, իր արժեհամակարգը, կեանքի իր փիլիսոփայութիւնը: Այլապէս ան կրնայ նմանիլ մարդ-մեքենայի մը, որ կ'ապրի առանց գիտակցութեան, առանց ինքնաճանաչման: Իսկ ի՞նչ արժէք կրնայ ունենալ նման կեանք մը:

.....

Խմբակցային մտայնութիւնը աւերներ կը գործէ հայ կեանքին մէջ...«Մա մեր մարդն է, գործը անոր տանք»ի մտայնութիւնը: Այսպիսով է որ ազգային կամ պետական-կառավարական բոլոր լծակները կ'անցնին «մեր մարդոց» ձեռքը: Կրթական, տնտեսական, մասնագիտական, հրատարակչական եւ բոլոր ոլորտներուն մէջ, այս մտայնութիւնը առկայ է: Կարելոր չէ թէ տուեալ անձը ի՞նչ հմտութիւններ, շնորհք, տաղանդ, պատրաստութիւն ունի: «Խնամի-ծանօթ-բարեկամ»ի տխուր մտայնութիւնն է որ կը գործէ...եւ ա՛յս՝ քիչ մը ամէն տեղ:

.....

Ազգային մեր ցաւերէն կամ դժբախտութիւններէն մէկն ալ ա՛յն է, որ քիչ անգամ պատահած է որ ՄՏԱԾՈՂ տարրը եղած ըլլայ հայ կեանքի ղեկավարներու շարքին մէջ...Մեծաւ մասամբ միջակութիւն համարուող ԱԹՈՌԱՊԱՇՏՆԵՐ կառչած են իրենց աթոռներուն, այնտեղ գտնելով իրենց փոքր ԵՍ-երը շոյուած զգալու, կամ շահերը բաւարարուած տեսնելու ԵԶԱԿԻ ԱՌԻԹԸ...: Յանուն այդ եզակի առիթի յարատեւման, շատ անգամ անոնք զոհած են ազգային շահ ու արժանապատուութիւն, չունենալով ԱԹՈՌԵՆ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ քաջութիւնն ու անշահախնդիր ազգասիրութիւնը: Հայ հանրութիւնը թերեւս նոնքան ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է իրերու այս դրութեան համար, համակերպած ըլլալով անոր...: Ճիշդ պիտի ըլլար նշել՝ ԸՍԷ՛ Ո՞Վ Է ՂԵԿԱՎԱՐ, ԸՍԵՄ Ո՞Վ ԵՍ ԴՈՒՆ:

.....



Հայրենիքը այն սրբազնագոյն հողն է, ուր կը ննջեն մեր պապերն ու նախնիք եւ ուր կ'արտացոլայ ազգային մեր էութիւնը, ինքնութիւնը: Հող՝ որ ոգեղինացած է հայ մարդուն ստեղծած մէն մի ստեղծագործութեամբ, մէն մի նշխարով: Հոն կայ՝ «Հիւլէ մը Հայկէն, փոշի մ'Արամէն, Անանիայէն բիբ մը դէտ, Դեռ աստղերու ճաճանչներով թաթաւուն.....»: Հայրենիքը ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ այն տարածքն է, որուն համար կ'ապրի, կը մաքառի, կը պայքարի ու կը մեռնի հայը ՄԱՀ ԻՄԱՅԵԱԼով, եթէ հարկը պահանջէ: ԱՌԱՆՅ ՀԱՅՐԵՆԻՔԻ, ՉԿԱՅ ԱԶԳ ՈՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ: Գուրգուրա՛նք անոր, շէնցնենք զայն, ծաղկեցնենք անոր մէն մի փշուր հողը, կառչած մնանք անոր այնպէս, ինչպէս մեր սեփական հոգիին, քանզի հոն է ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Առօրեայ գորշ տաղտուկին մէջ, իմաստ ու Բան եւ փնտռեցի,
Խաժամուծին մէջ ամբոխին, կարգ ու կանոն եւ փնտռեցի,
Թոհուրոհին մէջ խելագար եւ նպատակ որոնեցի,
Եւ հասկցայ՝ ներքին Լոյսն էր որ կը տեսնէր անտեսելին:

.....

Թէ շաղ տաս մտքիդ գանձերը բոլոր,
Մարդիկ կը կարծեն անպէտք իր են սոսկ,
Զրի տրուածը արժէք չունենար,
Դէն կը շպրտուի անողոքբար:

.....

Այս աշխարհի խենդ դրուածքին, լամ թէ՞ խնդամ, չեմ գիտեր,



Երբ կեղծիքն է միշտ ի պատուի, սուտն է մտքի տիրակալ,
Ճիշտ խօսողէն փախուստ կու տան, շողոքորթն է փնտռուած
Եւ մամոնան կը պաշտուի որպէս կուռք մը փառահեղ:

.....

Սուրբեր չկան թէ սիրտդ բորբ չունի հիւլէ մ'իսկ սրբութիւն,
Չունի իտէալ, վեհ նպատակ, որուն համար մեռնիլ արժէ,
Թէ խոտի պէս կ'ապրիս, կ'երթաս, երկնի համը օտար է քեզ,
Հացով սնանիս, Կենաց Բանին համն ու հոտը չես ճաշակեր:

.....

Եւ ի՛նչ տափակ աշխարհ կ'ըլլար,
Թէ ան ըլլար մի հարթ տարածք
Եւ չունենար ցաւի վիհեր
Ու թոյլք դէպի լոյս բարձունքներ:

.....

Բարձրացնելով կը բարձրանաս,
Փոքրացնելով կը փոքրանաս,
Թէ մաղձ ու քէն կըրես սրտիդ,
Անոնցմով դուն կը խեղդուիս...

.....

Ինչո՞ւ դարն է այսքան անսէր,
Մարդը՝ ճղճիմ, նիւթով հարբած,
Հոգին կարծես թմբիրի մէջ,
Մին վայելքով լոկ յղփացած:

.....

Թէ պատրաստ չես ազատութեան
Կը մոլորիս հաստատաբար,
Ներքին խիղճն է չափանիշը
Ազատութեան ուղեցոյցը:

.....

Հիմա ամէն մարդ գրող է,
Բայց դիւթիչ գիրն է հագուադէպ
Որ տանի քեզ խորը հոգւոյդ
Եւ երկինքներն լուսահամբոյր:

.....

Ոմանց համար գաղափարը
Իրենց մտքի կաղապարն է,
Ջոր գոց սորված կը քարոզեն,
Չեն հարցադրեր միտքն ու բանը:

.....



Լոգունգները բարեհունչ են,
Բայց քնաբեր դեղահատ են,
Եթէ գործքով ու ճիգերով
Չդառնան կեանք կենսատրոփ:

.....

Կեանքդ մաղէ թէ անցընել դուն կարենաս,
Ունայնութեան բիւր պահերդ պիտ' ափսոսաս,
Երբ վատնեցիր ժամ-ժամանակ, կորով ու ջանք
Խաբեպատիր ցոյց ու ձեւի համար պարապ...

.....

Դժուար է անչափ անաղարտ մնալ ցեխի գորշ տիղմին մէջ համատարած,
Շիփ շիտակ կանգնիլ ու արդար մնալ երբ արդարութիւնն ոյժին է ծախուած,
Յանուն ճշմարտին ելլել պայքարի, յաղթելով շահի կոյր ստրկութեան
Ու դեռ մնալ ՄԱՐԴ արժանապատիւ երբ պատիւն ունի գին շուկայական:

.....

Քարդ էր շատ, համատարած, դուն քարաստան, հայոց երկիր,
Բայց հայ մարդը քարերէդ հաց ու մանանա հանեց, երկի՛ր,
Քարէդ վանքեր, խաչքար կերտեց, լոյս երդիքներ, հայոց երկի՛ր,
Քարդ դարձուց համանուագ ու կենաց Բան, հայոց երկի՛ր:

.....

Որքան մարդիկ խինդիս դարձան ընկերակից,
Բաժակներէն գինին յորդեցաւ լիառատ,
Լոկ ցաւիս հետ ես մնացի մեն ու մենակ,,
Արտասուքս դարձաւ միայն ինձ ամոքիչ:

.....

Կեանքը մի մեծ առեղծուած է,
Ո՞վ կրնայ զայն ճիշդ վերծանել,
Ու թէ չափուած-ձեւուած ըլլար,
Պիտի ըլլա՞ր քաշողական...

.....

Յոյսը երբեք չի լքեր մեզ,
Մինչեւ վերջին շունչը կեանքի,
Ծաղիկին պէս որ կը ծաղկի
Աւերակուած տան յատակին...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ